

Բ Ա Ք Ի Ն

ՃԱ. ՏԱՐԻ 1972 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 12

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

***	Մահ՝ Ն. Սարաֆեանի
Ն. ՍԱՐԱՅԵԱՆ	Մոլորում
Ա. ՓԱՆՈՍԵԱՆ	Ժամանց
Ա. ԳԱՐԱԼԵՔԻԱՆ	Պայքար տառապանք
»	Ժպիտներ կան դեռ...
***	Հարցազրույց՝ Բեյրութում «Երանուշ» խմբակի անդամների հետ
Ս. ԿՐԱԿՈՍԵԱՆ	Կարօտ բոլորեալս բիրեգույնան
Գ. ՃՆՊԱՇԵԱՆ	Հայելիները
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Ազգայնախոս
»	Մարմիններու ծովափը
Ն. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Անծառօքը
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Քրքիչ
***	Ա. Հայկազի յարեկանը
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ	Ժեբար տը ներվալ
Ա. ՏՕՆՈՏԵԱՆ	Տագնապահար երիտասարդույլներ
Մ. ԷՍԼԵՆ	Ժան ժրնէ (քարզմ. Է. Ասրանեան)
***	Յայտարարութիւն՝ Ալեք Մանուկեան գրական մրցանակի
***	«Բազին» 1972ի ներքերուն ցանկը

Բարսի

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ.Ա. ՅԱՐԻ, ԹԻՒ 12

ԴՍԵՍՄԱՐԻ 1972

ԳԼՈՐԻԹ

Այս ամսին 16ին, Փարիզի մէջ, տնտրք հիւանդութիւնը կորեց Սփիւռքի գրականութեան ներկայացուցչական զէմքերէն բանաստեղծ և արձակագիր Նիկողոս Սարաֆեանի կեանքին թելը:

Սարաֆեան ծնած էր Վանաւ, 1902ին, և ուղիղ յետոյ տարի ծառայած մեր գրականութեան, ստորագրելով բանաստեղծութիւններ, արձակ և վերլուծական էջեր:

Մեր զարուն հակասութիւններն ու Սփիւռքի հայ մարդուն ներքին երկուսութիւնները խորապէս ապրած ու գրական վարակիչ միջոցներով դրսևորած ապանդաւար գրող էր Սարաֆեան, որ բանաստեղծական հինգ հատորներ, վեպակ մը ու հատորի մէջ յիստի քաղամութիւն գրութիւններ կտակեց ամենայն հայոց գրականութեան:

Ներաշխարհ ունէր Սարաֆեան ու բարդ էր իր ներաշխարհը, հայուն, մարդուն ու արուեստագէտին տաղանգներով, անձնութիւններով ու լինելութեան աննշխարհ հանեկփող ի վերուստ ընծայիւալ էութիւն մը, որ միշտ երիտասարդ մնաց, քերքի, սաք, ծղուղական:

Ճիշդ է, որ զիջ ընթերցող ունէր ան, բայց տակաւ բնաւ չէ նշանակեր, թէ շատ բան չէ ըսած, խոր ու զեղծելի մտածումներ չէ հաղորդած: Մեր մէջ, ընթերցողը, զգրախոսարար, զեռ բոլորովին վտանակի լուփանիչ մը չէ գրագէտի մը իրականութիւնը հաստատելու հարցին աւերելութեամբ: Պարագան սարսիչ չէ նաև ուրիշ ազգերու մէջ: Գրականութեան երկնակամարին վրայ



Ն. ՍԱՐԱՖԵԱՆ

աւառնաթեւ նախորդները, որէնք է, զիջերէն անասնելի եղան են նախ, շատերուն կարտութիւնը կազմելու համար ապա — Սարաֆեանի նախաստեղծութիւնը:

Մեր յաջորդ համարներուն մէջ առիթ պիտի ունենանք անդադանալու իր տնձին ու գրականութեան և նոր սերունդներուն նշարտապէս նախնելու համար հիմարիտ այս արուեստագէտը, պիտի տանք իր վերլուծական էջերէն շարք մը նմոյշներ, որոնք բանաստեղծին ու արձակագրին առնթեր՝ կը վկային իր մտաւորական քարտը արժանիքներուն մասին:



ՄՈԼՈՐՈՒՄ

Պատրանքներովդ ահա, կեա՛նք, քշուտութեամբ դարձեալ
Սադրանքներովդ փայլագ կը հըրես զիս աւելի
հարը հոգւոյս, ուրկէ խոյս հագիւ փորձեր էի տալ
եւ սիրելի էիգ... Կը նընչես զիս խաւարովն անցեալի


Ու գալի՜նով մը, որուն դեռ լոյսն հեռու է մե՜նէ...
Զիս կը սպաննես ամէն օր, կը փրցընես մէկ առ մէկ՝
Բոլոր թելերս սիրոյ: Ամէն մէկ ժամքս ժամն է
Բաժանումի մը տըխուր: Ամէն մէկ օրս յուսարեկ

Անկում մըն է, հեռացում սիրած բոլոր բաներէս՝
Ռոսնց երբեմն հասնիլ տենդով, խանդով փորձեցի:
Ամէն մէկ պահ ժպտելով ու դիւթելով կը դառես,
ինչպէս դաւեց Տալիլան... Ու ձայն մ'առա, կեա՛նք, ինձի

Կը փսիքոսայ շարունակ՝ ինչ որ բաւ Սամսոնին:
Ա՛, ձրգէիք ինձի գէթ՝ մահէն անդին աշխարհներ
Տեսնող հաւատքս իմ հին ու բարութիւնս երբեմնի...
Կեա՛նք, կը հեզնես դարձեալ զիս... Ամէնէն մեծ չարիքն էր

Զոր կըրնայիր տալ ինձի. ո՛չ բաժնուիլ կարե՛նալ
Քեզմէ եւ ոչ էնգ սիրելի... Այլ մընալ լոկ կենդանի
Իբրեւ մեռել մը, աշպէս, իբրեւ մարտիկ մը պարտեալ՝
Նաւ մը՝ օտար ծովուն վրայ, որ ոչ մէկ արի կը տանի:

Ն. ՍԱՐԱՅԵԱՆ



ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Յ

9.

Քանի՞ չըջան ըբած էր վրոճերը:

Կամ թէ որքա՞ն ժամանակ անցած էր մեր ինժեներներն իրանոց մտնելու-
ելլելու, ահա զարմանքը, որ կը նկարուէր Քէօմիւրճեանի ղէմքին եւ ակ-
նայիչ նայուածքին մէջ, երբ կը Հրաժցնէր սուրճը բարեկամներուն:

— Ի՞նչ պատահեցաւ բացակայութեանս, — կը Հարցնէր ինքզինքին
եւ կը նայէր Հարցական կախ ղէմքերուն, որոնք շատ լուրջ կը թուէին էն-
ժեներներին: Մարտեան սլտիլ փոփոսար ականջին.

— Մեծ ճակատամարտ տեղի ունեցաւ քիչ առաջ Ամատունի եւ Օհունի
նախարարական դռնդերուն միջեւ... տեսներ՞ա էիք նախճիրը Օհանեանի
բանակէն ներս...

— Իսոյց եւ շատ շուշաղայ խոհանոցը. ե՞րբ պատահեցաւ, — կը զար-
մանար Քէօմիւրճեան, խորհելով, թէ ինք Հազիւ երկու վայրկեանով մտած
էր սուրճ պատրաստելու:

Մարտեան կը քմծիծաղէր.

— Կէս ժամէ աւելի ներսը մնացիր. ի՞նչ կը շինէիր ներսը...

Ինժեներըրը ականջի ետեւ կը նեղէր Մարտեանի կապիածը, դիտելով
չորս ախոյեանները, որակաւոր մեր երեւելիները, որոնք մեղաւոր լութեան
մէջ րնկղմած էին այժմ, Սեղանին վրայ տեսնելի Փիշիւրուն մեծ տակաւը
տոբթ. Օհանեան առած էր իր թեւերուն տակ. թէեւ Պարտեան եւ «Մարտու-
նի» յնասուած էին ճակատամարտի Հետեւնդներէն, սակայն, անոնց կո-
րուստը մեծ չէր: Քէօմիւրճեանին կը թուէր, թէ Մարտեան իր քեթին կը
ինդար. մեծ ազդար պատահած էր, գուցէ Ամատունիի Փիշալին Հարստու-
թեան մէջ, քանի որ թռչելը ոչ մէկ Փիշ կար, բացի քսանըհինգնոց թղթա-
դրամէ մը, զոր ան կրնար Հանած ըլլալ գրպանէն:



Այս այսպէս ըլլալով, Քէօմիւրճեանին անհասկնալի կը թուէր Օհանեանի ետեւը շրջուած աթոռին անմխիթար վիճակը եւ մոխրամանին կորզուած ըլլալը գորգին վրայ... տոբթ. Օհանեանի տոբերուն տակ: Այս զոյգ փաստերը կ'արդարացնէին Մարտեանին խօսքը. տուժողը եղած էր Օհանեան, որ իր բարկութիւնը թափած էր խեղճ աթոռի գլխուն եւ անդգուշարար շրջած՝ կողքին դրուած մոխրամանը:

Ի ծնէ բծախնդիր մարդ էր Քէօմիւրճեան եւ չէր կրնար տանել թափուած մոխրին եւ ծխախոտի մնացուկներուն աղբային տեսքը, երբ միւսնեքը, իր համոզումով, անհող անասուններու պէս՝ թէ՛ կ'աղբէին եւ թէ՛ կը պառկէին աղբածին մէջը: Ան ստիպուած էր փնտռել աւելն եւ աղբակալը՝

— Մրտցա՛ւ եւ մաքրասէր ախոռապանի պաշտօն ալ պիտի կատարենք եղեր. վա՛յ, Սարգէ՛ս, վա՛յ...

— Թո՛ղ, եղբայր, վաղը կը մաքրէ մեր կնիկը. միջրոպասպան դեղեր են մոխրին ու ծխախոտը. մի՛ վախնար, չի՛ս վարակուիր, Քէօմիւրճեան, — կը սրդոյէր իրր թէ տանակէրը, զիչ մըն ալ խնդմախալով էնժնիտի սպասարական հակում գրսեւորելուն վրայ:

Պարոնեան մտային իր փուշերը կը սրէր ծակծկելու պէս.

— Հապա՛, հապա՛... ախոռապան որ ըսիր, Քէօմիւրճեան, ախոռ ալ ըսել պիտի ուզես. իսկ որ ախոռ ըսիր՝ իմացիր... մէջը չորքոտանիներ եւս կան կ'ուզես հասկննէ՛լ տալ... ապրի՛ս:

Տոբթ. Օհանեանին զպանակը հոտ ալ կը փրթէր.

— Տօ՛, Քէօմիւրճին, հասկցանք, ախոռ կապուելիք որ ըլլար՝ վաղուց չորքոտանի կը դառնար. ինքը՝ Խէ՛չ. բայց դուք, երկո՛ւքո՛՛ աղուէս եւ քօնի, որ հասկց դրուիք, ի՞նչ կ'ընէք. աղբելը՝ ոչինչ. դուք պարզապէս կը ծռտէք տակերնիդ... ծռտանե՛ք մեզի...:

— Երկու տեսակ աղբն ալ օգտակար է մարդուն, — կը սրամտէր Մարտեան եւ կ'աւելցնէր, — ախոռէն վտակիք քակոր կը պատրաստուի, իսկ ծիւսէն՝ ընական պարարտանիւթ... Հէ՛, Հէ՛, Հէ՛յ...

— Չէ՛, Հոգեակս. «Հէյ-Հէ՛յ» եւ «եօ-եօ՛» կը պատրաստուին, որ ջեղի պէս շննալիները եօ-եօ՛ խաղան, — կը հեզնէր Օհանեան Մարտեանին ծիւսապանը կեղծելով:

— Վաղէկ որ ժանիք ունեցող չկայ մէջերնին, — աղօթման կը մըմնջէր տիկին թագուկ իր քնտանիքին, անբուն-բարի հրեշտակի պէս, — ամէնքն ալ խոտակեր են, զով զովի եկած՝ քացի կու տան միայն... Դոյնի-մաստ կը մտածէր Պարոնեան, երբ հա-հա՛, ապրիս մը բաժին կը հանէր մէկն ու մէկին ու կը քմծիծաղէր իր ներաշխարհին մէջ տեղ մը, յիշելով իրեն հետ պատահած դէպք մը, որ պատմութիւն եղաւ ու կցուեցաւ իր կենսադրութեան:

Պարոնեան, եթէ կիսամայն կը խաղար կամ կը ծիծաղէր, խաղընկերները մղնջով աջորակուիւի, երբեմն, անմայն կը խնդար ինքն իր վրան, վերջիւնով դէպքը. հեռաւոր-պարտական մէկ ազգականուհին մէկէն լոյսաշխարհ ինկածի պէս՝ եկած մտած էր իր կեանքէն ներս եւ իրեն սորվեցուցած դիւցազներգութիւն խաղալ, կենցաղային ազատ եւ անվարապոյր բեմին վրայ, որ կը շփոթուի ազատամտութեան հետ...

Լուսնթաղ էր անունը. քառասունը՝ մէկ տարի ասաջ կոխկոտելով, թմայլիկ-թխորակ, կրակ ու բոց, անային կալանքէ նոր ազատուած, փոթորիկի պէս եկաւ-մտաւ իրենց տունը, փաթթուեցաւ Անգլիէնէն — պաշպո՛ւչ, պաշպո՛ւչ՝ պաշպուեցան. «Օ՛հ, հորքուր, ես ջեղ շա՛տ կարօտցեր էի»։ Ետ-

գէն, այդ թուի բոցը դալարուեցաւ Արտաշին, որ ինքն էր. փաթթուիլը՝ ոչինչ. փակաւ շրթունքներէն, կախուեցաւ վիզէն, կրօնոսեւ օձի պէս պըլլըւեցաւ իրեն, թէ «գեոթի աղայ, զե՛ղ ալ կարօտցած էի. շուտ-շուտ կ'ուզէի գալ, ափսո՛ս, ուշացայ...»:

Ուխտիկի դաւաթին մէջ դեռ կար զիչ մը բան եւ ձեռքին թուլթերը յաւըն էին: Պարոնեան աչքին պոչով կը տեսնէր ֆէօմիւրճեանի նիհարկեկ այտերը, թիթեանածեւ անպէտք պէխը, մարմրուն նայուածքը եւ չէր կրնար երեւակայել այն պատկերը, եթէ երբեք Լուսնթագ մըն ալ անոր պատահած ըլլար ու ըսէր.

— «Կնիկդ կը քնանայ. ոնցնի՛նք խոհանոց... տեսնո՞ղ մը չ'ըլլար...»:

Լուսնթագ երկար մնաց իրենց մօտ՝ ծովակարօսը յազեցնելու համար. կը լողար դեմքին նման, երբ Անդրինէն կը բացակայէր. սկսնակ կը դառնար՝ անոր ներկայութեան, խնդրելով, որ թոյլատրէր Արտաշին իրեն լող սորվեցնելու: Հանդիսութեանց սաթիւ, ինքնակոչ՝ կը բարձրանար բեմ եւ ըմբռնուէր կ'երգէր. շարժապատկերի սրահներուն մէջ կը դաւաճէր էրիկ-կնկայ միջեւ ինկած աթոռը եւ մոթին մէջ ձեռք կը նետէր գեոթի աղուն ամէն ինչին...:

Ի՞, մեր փոքրիկ դադութը ալք ունէր մինչեւ իսկ ծոծրակին վրայ... եւ անորո՞ք կրնար մեծ հոգեբաններ էին. անոնց համար առանց կրակի ծուխ չէր բարձրանար որեւէ տունէ. չբամբասեցին, այլ՝ իրենց բարի սովորութեան համաձայն, Պարոնեանը դասեցին Ամատունիի կարգին եւ մահապատիժի շապիկ հագցնելով, ձակտին գրեցին.

— «Կնիկաւոր աղջիկ-ՊԱՍՏ պահող...»:

Տիկին Անդրինէն չլսելու կը գորնէր ծանօթ փոփոքը, որ կը շրջէր կրնեբու բերնին մէջ. Արտաշը ամէն բանէ վեր կը դասէր եւ օր մը չէր հարցուցած ամուսինին, թէ այդ ի՞նչ ծուխ էր, թէ եւ կը զգար, որ կրակը հոգած էր ու կը մնար այդ ծածը կտրած Լուսնթագը, որուն մեկնումով ա՛լ կրցած էր խաղողեցնել սիրտին զարկերը... Իրձէ անկախ, սակայն, դառնութեան որդը մտած էր ներսիդին, ուր կրծոսեց տարիներով այն բարի սիրտը, որ կրնար Անդրինէն հասցնել վայելուչ պատուութեան մը սեմին... Փոքրիկ դադութը կը մեղքնար Անդրինէին, ինչպէս ցաւ կը զգար հրեշտակատիպ թագուկին հանդէպ: Այս երկու տիկինները կը պահէին ինքզինքնին թագուկի պէս, բարձր՝ շուրջի բոխ-բոսաներէն եւ շար լեզուներէն, իրենց դարդերը լալով՝ լոսեկայն, խմորէ շինած իրենց Մայր Աստուածածիններուն առջեւ...:

Քէօմիւրճեանի հրամցուցած սուրճին առաջին Փրոտոցը կը լսուէր միշտ տոքթ. Օհանեանի շրթունքներէն. այդ Փրոտոցը պատճառ կ'ըլլար, որ Պարոնեան ետեւ շարտէր ինչ-որ մոլորակներ կամ լուսնթագներ եւ կապուէր խաղին: Ամատունին՝ խեղդուած ճննապակիի քութ ձայնով վրայ կու տար.

— Անո՛ւշ, Տոքթոր. մաղթեմ, որ սառած ուղեղդ կը տաքնայ քաշածդ Փրոտոցէն. քնացուցիր մեզ՝ սպասցնելով...:

— Եթէ տանտէրը չըլլայիր, դուրեղ կու տայի զանո՛ւշդ. մեղի լեղի թոյն կը խմցնես եւ անո՛ւշ կ'ըսես. հե՛լէ, սա Քէօմիւրճեանը մարդ ըլլալիք չունի. եփած սուրճին մէջ երկու հատիկ շաքար չէ ձգած...:

— Ըսել մի տար, հա՞, Տոքթոր. բարեկամս, Մարդիկը հրաշալի սուրճ պատրաստեր է, — եւ Մարտեան Օհանեան Փրոտոց մը կը քաշէր իր բաժակէն եւ պատկերաւոր «օ՛ խայ» մը դուրս կու տար կուրծքէն:

— Հե՛լէ հ'ա ալ համտեսեմ, — կ'ըսէր Պարոնեան երրորդելով իւրա-

յատուկ Փրօսոսը, — չէ՛, խօսք չկայ. Գէօմիւրճեանը ակուսմբի սրճեհի կտր-
դելու ենք, որ բանով մը օգտակար ըլլայ այս խեղճ դաղութին:

— Ամատուներ, դուն ալ չհամեսե՞ս. կարելոր յայտութիւն մը պի-
տի ըլլայ քուկդ, — ու կը խնդար կեղծաւորաբար Գէօմիւրճեան, անդրա-
դառնալով խոհանոցի մէջ տիկին թագուկի ըսածներուն:

— Ես սովոր եմ սուրճը պարզած խմել...

— Հապա՛, Հապա՛. տաքին վրայ պողը՝ կաթի սերի նման բան է. Տոք-
թորս. Ամատուներն բերնին համը գիտէ, երբ քեզ թոյն կը խմցնէ միշտ, —
կամացուկ կը քրթմնջէր Պարսկեան. Եւ իր միտքին մէջ ունէր Ամատուներին
նորերս անցուցած մէկ փորձութիւնը, որ դաղութը տակնուվրայ ըրած
էր...

Գէօմիւրճեան, որ տօքթ. Օհանեսի տապալած աթուր սաքի հանած
եւ վրան բաղած՝ կը հետեւէր խողին, դաղտնօրէն կը թախծէր եւ կը նա-
խանձէր այն շորսերուն, որոնք ունէին իրենց մտերիմ ժամանցները: Ապու-
դաթը, դաղութէն կտրուած՝ ունէր իր իմամն. Տօքթորը յականէ անուանէ
կը պահէր այրի Մունիւրան: Պարսկեանը յայտնի էր իր Լուսնթագով, որ
պատմութեան անցած-մոռցուած բան էր այլեւս: Իսկ սա Ամատուներին բախ-
տը նոր բացուած կը թուէր Եոզերով, որ ինկած էր դաղութին լեզուին տակ,
այդ օրերուն...

Միակ խեղճը ինքն էր, Գէօմիւրճեանը. ի՞նչ ընէր, ո՞ր սեւ հողը տար
դիտուն, որ այսպէս մնացեր էր երկոտանի: Արժանի՛ էր յաւիտենական՝ շը-
սենք, այլ ցկկանն՝ տաժանակիր միակութեան պատիժին: Ակամայ, ինքն
էր նշուած դուցէ՛ իր բախտին դատախազը. չէր ուրտցեր, որ ժամանակին
տաջեւը ելած էին Լուսնթագ մը, Եոզեր զան մը կամ Մունիւրային նման կին-
աղջիկներ. Իմամնե՛ր ալ կրնային նուանուիլ. բայց Գէօմիւրճեանն քայտակ
իր կծծիութեան մէջ ներմուծած էր քիչ մը ամչկոտութիւն եւ առաւել չա-
փով մըն ալ բծախնդրութիւն: Այս երեք մտրդկային բարեմասնութիւնները,
զժբախտաբար, չէին անցըներ «հայ աղջիկներու պահանջած զննիլին մէջէն»
եւ Գէօմիւրճեանն ալ զննիլ ուզող աղջկամայրերէն հետու փախած էր միշտ:
Որով, ազգային տխրահէտով՝ անպէտք մէկը նկատուած էր, քանի որ, թիւ
չատցնելուն մէջ՝ դաւաճանած էր իր ապրին...

— «Լա՛ւ. րտենք, թէ դաւաճանած ենք մեր ազգին՝ ամուրի մնալով
եւ զուակ չհասցնելով անոր թիւին. այդքան. գոնէ, գէշութի՛ւն չենք փոր-
ձած կամ վնաս հասցուցած դաղութին: Եղա՛ծ ենք կծծի — այս իմ անձնա-
կան հաշիւներու մէջ կ'իյնայ. ամչկո՛տ ենք եղած. ի՞նչ ընենք. նկարագրի
հարց է. բծախնդիր ա՛լ ենք. գէշ քնաւորութիւն չէ բծախնդրութիւնը» —
ներբնակուի կը մղէր մեր ինժեներորդ եւ յանկարծ կը մընէր տինամիք ա-
րարք մը գործել. տանկ Մունիւրայի պէս մէկու մը հետ չփուիլ, մտերմանալ.
Քիչ ետք, սակայն, կը յուսահատէր, երբ կ'անդրադառնար ամչկոտութեան
հետ կապուած արբելիքներուն. ո՛չ. ինք սանձուած, ամլացած միու օրին հա-
տած մէկն էր. կը բաւէր, որ ապրէր իր երեւակայութեամբ, երբ ուրիշներուն
պէս չէր կրնար զորճը կարգադրել, ինչպէ՛ս, որ գիտէր կարգադրել, ա՛յ, օ-
րինակ, սա Ամատուներն ասոնքովեցամեայ Եոզերի մը հետ. անպիտանը փա-
րայով կաշտուած է անպայման խեղճ աղջիկը ու լլացուցած զայն...

Գէօմիւրճեան նախանձով կը նայէր Ամատուներին.

— Խոֆածը կ'ապրի կոր, առանց հետք թողելու, — ու ցաւ կը դգաք
տիկին թագուկին հանդէպ...

Է.

Ինչպէս Թղթախաղին մէջ բախտաւոր էր, որովհետեւ ազուէսային միտքի տէր մէկն էր, այնպէս ալ ահա Ամատունի, իր տարիքին եօթնամասունի անալիսամատին կանգնած՝ որոնած ու գտած էր «Շողեր» բախտը. մի՛ ըսէք բախտ, այլ՝ անդին գանձ մը՝ սա Շողեր աղջիկը, փթթած զարուն՝ իր տասնըվեցին մէջ. նայեցէ՛ք. մեր էնժենիորին բերնին ջուրերը, ահա կը թքտէին շրթունքին փակած սիկարէթին մնացուկը, որ վաղուց մարած էր... Շողերը կը նմանէր կարմիր վարդի, վարդահոտը ծամերուն. ունէր պճլտուն նայածք, մշտած պիտը վրան. բարակ էին ունքերը եւ շրթունքները՝ մեխականման: Տիկին թագուկ, որ բնաւ մայր չէր եղած, երկու ամուսիններու միջեւ պսակած, կ'ընդունէր Շողերը իբրեւ իր հարազատ աղջիկը, երբ ան մուտք կը գործէր իրենց տունէն ներս: Շողեր կը կոչէր զինք՝ «մայրիկ» եւ լռելեայն, կը նկատէր Ամատունին իբրեւ մեծ հայրիկ մը, որ սկսած էր բոլոր իր քմայքներուն եւ արդուզարդին գոհացում տալ. տրամագրութիւն, զոր երբեք չէր տեսած հարազատ հօրը մօտ, Ամատունիին այրական կամիթները աղջկական այս ու այն կակուղ տեղերուն՝ ընդունելով իբրեւ հայրական գգուանք... Շողեր յաճախակի այցելութիւններով՝ կ'ամբապնդէր մարտեան պատուած կատուի բնազդները պր. Մանուկին արիւնին մէջ: Տիկին թագուկ չէր գարմանար, երբ Ամատունի կ'արտօնէր իրեն տունէն բացակայել, այս ու այն բարեկամուհիին այցելութիւն տալու ատյազբանքներով:

Շողեր անուղղակի մեղսակից մը կը դաննար իր հայրացուն հետադարձ նպատակներուն, երբ զիտակցելով սիկին թագուկին հետացումներուն՝ ժամագրուածի պէս կը խուժէր Ամատունիին քով՝ պահած ժպտան ու թովիչ նայուածքը արտայայտութեան մէջ: Անմեղ մեղքալուսին մը կը թրւէին Շողեր—Ամատունի հանդիպումները. կը գուրգուրար Ամատունի Շողերին վրայ, կը կերցնէր լաւազոյն անուշեղէնները, կը զնէր անոր համար նորոթի արդուզարդեր եւ աղջիկը կը զեղեցկանար օրը օրին: Ամատունիին մեռքի շփումներէն Շողեր չէր խուսափեր եւ, կարծէք, ցանկութիւններ կը ծնէին մէջը...

Մեր փոքրիկ քաղաքը չէր քնանար. սուր, հոտառու քիթեր շատ կային դադութի կիներու մօտ: Եւանաւոր էր հանրածանօթ Ջարուկի թագիական հոտառութիւնը: Թագեցի չէր թագուկենց տանը, բայց կը սիրէր վերջերս այդ թագին եւ յատկապէս պատկանեայ փողոցին պատերուն տակէն քայել: Այդ օրը ան տեսած էր թագուկին դուրս գալը տունէն եւ քիչ ետք Շողերին մուտքը. քիթը ցցած՝ Ջարուկ քիչ ետք, ահա կը մտնէր նոյն դուռնէն ներս ասանց ազդարարելու.

— «Մեղա՛յ, թագուկը տունը չէ՞...»:

Տունէն դուրս խոյացած էր ապա, անվայել բառապաշար մը ըրած յաղթանակի դրօշը, որ պիտի ծածանէր ետքէն շատ մը տուներէ ներս.

— Այս Բէ՛օն աչքովս տեսայ, քա՛ւ. մարդը աղջիկը առած էր գողին... մէջ. շամշքա՛ծը. իսկ այդ ծամը կտրածը... կը խնդմնաբար, «ա՛խ—ո՛ւր» ձայներ կը հանէր. քա՛ւ, էրիկ—կնկայ պէս դրկուած էին, այսպէս, այսպէս, — եւ մեր նշանաւոր Ջարուկը կը պատկերազարդէր ձեւերը:

«Ե՛հ. որո՞ւ ինչ, որ մեծ հայրիկ մը գրկած էր թունուհիին տեղը նկատուելիք աղջիկ մը: Այդ անզգամ կիներ, եթէ ք... շըլլար, կու գա՞ր, կը մտնէ՞ր կիներ բացակայ մարդու մը տունը, հը՞. ըսէ՛ք. առանձինն՝ կը մըտ-

նէ՞ր մարդուն քով: Մտա՞ծ էր. ուրեմն, բ... էր եւ ո՞վ այդպիսի կնոջ խօսքին կը հաւատար... ո՛չ ոք:

Հաւատալ կամ չհաւատալը կամքէ կախուած բան մըն էր: Գաղութը եթէ հաւատք ընծայեց Չարուկի խօսքերուն, տիկին Թագուկ համոզէր պիտի ինքզինքին՝ չհաւատալուն մէջ, քանի որ Մանուկին եւ Շողերին փոխարարութեանը շարունակեցին նախկինէն աւելի բնական. թէեւ այցելութիւնները այս անգամ հակառակ ուղղութիւն բռնեցին. Ամատունին էր, որ յաճախ կ'երթար Շողերենց տունը, թեւն տակ նուէր մը տանելով միշտ... Ժամանակը հարթած էր Չարուկին խօսքերուն անվայել սրութիւնները եւ թողած միայն կենդանի պատկեր մը, որուն տակ իր խղճը կ'երեւնէր կըրոնային դրօշակն ունով գրեւ ՝ «Ձգլխա՞նք» բառը, որ ամէն ինչ կը նշանակէր, լռելեայն:

Բնական էր, որ մեր էնժենիտրին բերնին ջուրերը միշտ պիտի վազէին, ընդունելով, որ Ամատունիին ըրածը մեծ հերոսութիւն էր, որմէ զուրկ էր ինք:

— Պաւլօ՞, Ամատունի:

Ամատունին այդ պահուն կ'աւելցնէր հինգ ֆիշ եւ այդպէսով կը փերկէր Քէօմբրենանի անտեղի բացազանչութեան ձախակերութիւնը:

Եւ արդէն խաղի ընթացքին, երբ կը պատահէր, որ մէկն ու մէկը կ'ուռնէր ներքին ժպիտ մը, քմծիծաղ մը, որ կապ չունէր բնաւ փոքրիկ դարձրած քնիւրէն յառաջացած խօսքակապերու հետ՝ կը նշանակէր, թէ ենթական կ'ապրէր ասուպային մէկ պահը իր սիրային ժամանցներուն եւ անմիջապէս, որ անհետանար ասուպայինը, աչքը կը բարձրացնէր ու կը նայէր Քէօմբրենանին, միտքէն ուրախանալով անոր կենցաղային աղքատութեան վրայ՝ իր առաւելութիւնը փաստելու համար:

Եւ խաղին սլաքը կը դառնար լարուած ժամացոյցի վայրկեաններու պէս կանոնաւոր, կը մխրճէր մեր քաղաքին երեւելիներուն ժամանակը կէս գիշերին մէջ: Չորսերուն հո՞գն էր, որ երկիրը կը դառնար արեւին շուրջ, մօտեցնելով իր ժամերը արշալոյսին: Բայց, եթէ արշալոյսը դեռ հեռու էր, աղջամուղջը արդէն դրաւած էր դուրսը ու փողոցի մէջ գիշերապահները երկաթ-երկաթ կը սուչէին մէկ թաղէն միւսը, որովհետեւ կը սկսէին յօրանջել եւ վախ զգալ թմբիւրէն ու պատկերացուած դո՞ղ-ճիւղաղներէն...

— Ո՛ւշ մնացինք. ամէն օր, ամէն օր այսպէս՝ շ'ըլլար, — դուրսի սուրցներէն ազդուած եւ իր Փիշերուն քայլանէ հաշիւին մտահոգ՝ կը նետէր մէկէն Մարտեան:

— Հա՛. ճիշդ որ ո՛ւշ ենք մնացեր. հիմա կնիկը անկողինին մէջ երբ էրեկը չգտնէ, կը սկսի մտահոգուիլ, — Պարոնեան անհանգիստ շարժում ընելով, մէջը ցուի աքցանի մէջ նետելուն՝ գրեթէ կը պոռար. — զա՛խ, սա մէջքիս ցաւը:

Ամատունի կը լռէր, միացնելով չրչիւնան սիկարը, որ արդէն անշնչելի դարձուցած էր աննհակին օդը: Ան դո՛հ էր. Փիշերու ծանրութեան կեղբունը կը գտնուէր դարձեալ իր առջեւ եւ տոքթ. Օհանեան պիտի չհանդուրժէր ժամանակի մասին առարկութիւն մը՝ անոր կողմէ: Քսանըճիկընոց թղթադրամը վաղուց արդէն դրպանած էր. մեծ պարտեալը կը մնար Օհանեան, որ պիտի յամառէր ժամանակին դէմ:

— Վասե՛ր, նամարդնե՛ր ձեզի. անշուշտ թէ ուշ մնացիք պիտի յայտարարէք. բայց, ես ձեզ հոս դամել պիտի տամ մինչեւ սա աղուէսին պին-

չէն դուրս չբերեմ դրամս... չնթողեցէ՛ք, մնացէ՛ք տեղերնիդ. ես եմ վճռողը, այսօր ուշը կամ կանուխը, հասկցած՝

— Հասկցուեցա՛ր... — կը խայթէր Ամատունի:

— Ժամը ճիշդ երեքը՝ վերջին պայմանաժամ, — կը համաձայնէր Պարոնեան, կարուկ:

— Ե՛ս համաձայն եմ, Տոբթոր:

— Գու համաձայնութիւնդ օտար պետութիւններու կնքած համաձայնութեան կը նմանի. ուզած ատենդ կը ք... վրան, ուրեմն, դուն՝ փաստ՝ աղուէսը թո՛ղ խօսի...

Ամատունի կ'ըսէր շատ պաղ.

— Գու համաձայնութիւնդ, Տոբթոր, իմ ալ համաձայնութիւնը հաշուէ եւ սակ տուր քու համաձայնութիւնդ ժամը երեքի համար...

-- Ի՛նչ, ղէ՛. ո՞վ ըսաւ, թէ մինչեւ ժամը երեքը պիտի աղբիս, եթէ... չարաքուիս հարուածներէս, հա՛, հա՛, հա՛...

— Փխոյի յօխորտանքներդ շատ տեսնեք...

— Հա-եա՛, հա-եա՛. եթէ ունեցածն ալ մէջը շտայ մինչեւ ժամը երեք:

— Պարոնեան, զիտեմ, որ դուն վրանդ հոն կը տնկես, ուր անձրեւ չկայ, — եւ այս ըսելով, տքթ. Օհանեան ոտքի կը կանգնէր՝ տակի աթոռ փոխելու. համար բարտարեր ուրիշ աթոռով մը: Աչքը կը գործէր Գէօմիւր-ճեանի թափուր աթոռին, — աօ՛, այս Գէօմիւրճին ո՞ւր կորսուեք է. հա՛, ահա կը խոժբացնէ, նրբիւնդ ձայնըով կը համերգէ. Մարտեան, իր դարդէն դուն կը հասկնաս. պիտի կրես զինք մինչեւ իր պայտար: Հոս չի ձրգւիբ, կ'այրի դժտիքի կրակներուն մէջ...

— Իր հոգը քեզի՛ չէ մնացեր. եկուր տեղդ չնթողէ, որ յետոյ չրսես, թէ թշնամին նամարգօրէն կոնակէդ դաշունահարեց: Էնտենիտը ի՛մ հիւրս է, մինչեւ արթնայր:

— Մինչեւ նախահաշ՝ ըսէ՛, մարդու որդի. որ արթնայ, կը կարծես, թէ քաշել պիտի կարենայ. ճիշդ չե՛մ, Պարոնեան:

— Ըշմարտութիւնը փաստի պէտք չունի, — կը քմծիծաղէր Պարոնեան եւ թուղթը բաժնել կը սկսէր:

Օհանեան տեղը զրաւելով, կը դիտէր իր թուղթիքը, գոհունակ ժպիտով մը. այս անգամ բարտը բերած էր. ունէր երկու փեր՝ առ եւ բուսհարաչալի՛. ճակատը արդէն կը կարճէր:

— Տո՛ւր, նայինք. թուղթ մը:

Նուէր ընելու պէս, կարծէք, Պարոնեան ձեռք մը կը նետէր առջեւ: Երկրորդ անգամ կարմիրը ահա կ'անցնէր դանկին: Երեք ձեռքով կրնար ջախջախել Ամատունիին ողնասիւնը, քանի որ «փեր բուս» մըն ալ ունէր ձեռքը:

Ամատունի, խրամի մէջ պահուրտած սազմիկի պէս՝ կը լրտեսէր Տոբթորի դանկին վրայ բուսած զոյգ մը քրտինքի կայլակները, որոնք անհամեմատ կը մեծնային եւ բիւրեղային ճառագայթով կը լեզուէին, ղէպի վար գլորուելէ առաջ.

— Գլուխը չոգի մտաւ հերիփին. տեսնեք կը դիմանա՞յ ճնշումին:

Մինչ այդ, տոբթոր Օհանեան տարուած էր խոհերով եւ այդ խոհերը այսպէս կը դասաւորէին իր մտածումները.

— «Եթէ քիչով բանամ սէտը, Մարտեանը կու գայ, վստահ՝ մէկ-երկու փիշ աւելցնելով: Մակայն, Ամատունիին եւ Պարոնեանը զուցէ համաձայնին եղածով կամ անփաս ընեն. այդ կ'ըլլայ էլի նահատակութիւն մը այս հրաշալի ձեռքիս: Իսկ, որ բացի սէտը խոշոր զուսարով, Մարտեան,

որ խնայողութեամբ կը խաղայ, թերեւս անփաս ընէ՝ միւս սա երկուքը՝
աղուէն ու ողնին թէ ի՞նչ կ'ընեն, յայտնի չէ. եւ այդ է ցաւս. դիտեմ որ
կու դա՛ն... Տօ՛, Հէրն անիծած՝ տա՛սը Փիշը, — վերջապէս կը վճռէր:

— Փա՛ս ինծմէ, — պատրաստուածի ուզե՛ս՝ կ'ըսէր Մարտեան, ձեռքին
թուղթերը մէկզրէ դնելով:

— Երկո՛ւ Փիշը աւելի, Տոքթո՛ր:

Պարոնեան կը մտածէր.

— Եկա՛յ. տասներկու Փիշը... .

Կարգը կրկին Տոքթորին էր.

— Երեք մը Ե՛ւս:

— Եկա՛յ:

— Երկո՛ւ Փիշը աւելի, Տոքթո՛րս, — կ'իջնէր Պարոնեան:

Կասկածը կ'իյնար Տոքթորին գորը. «տօ՛, չըլլա՛յ սա ողնին «Փիշը»

բռնած ըլլայ ձեռքը»:

— Երկո՛ւ Փիշը. Եկայ:

— Լիպլէ՛ք թէ կու դաս, երբ ձեռքդ լաւ թուղթ ունենաս. Ե՛ս ալ Ե-
կայ. Պարոնեան բաց թուղթերդ:

— Ես պզտիկ փեր մը ունիմ:

— Քի՛չ է. տէ՛օ՛ փեր, — կը յայտարարէր Ամատունի, — փամ է վալէ:

— Քի՛չ է, Ամատունի. խելքիդ չափ պզտիկ. ես ունիմ քրտա աւ եւ
տէ՛օ՛ քրտա. Հա՛, Հա՛, Հա՛. մէջքդ դետին տո՛ւ՛, աղուէ՛ս. աչք կ'ընէր քե-
սիիդ աղուն, որ չա՛ր. Եկա՛ւ. պլըք կ'ուզէր ընել. բայց ա՛հա, բաստովը
տաքերուն մէջ տուած՝ կը փախչի՛... .

Մարտեան խոշոր «Հէ-Հէ՛» մը կը պուրկար, Հիմ ունենալով Տոքթո-
րին պատկերաւոր արտայայտութիւնը: Պարոնեանին աչքերը կը թըջտէին
«Հի-Հի»ն. մի՛նչ Ամատունի կ'ըսէր ակամներու մէջէն, ամերիկեան կոտոր-
արած Հայերէնով.

— Ես Հածո՛ւիդ՝ շուն մը չես կրնար կշտացնել, յոխորտա՛լը որն է... .

Ընդամէնը քառասուներեք Փիշը՝ աղքատի մէ՛կ ճաշ, վրադիր՝ սուրճ մը:
Եւ յետո՛յ՝ ուրախութիւնդ վաղանցո՛ւկ է. ետքէն դալիք թակոցին նստէ.
խաշած հաւի պէս եթէ տուն չերթաս, ես Մանուկը չեմ... .

Ժպտերես, դո՛հ, տրամադրուած՝ տոքթ. Օհանեան կը խառնէր թուղ-
թերը եւ Պարոնեանին կտրել տալէ ետք, կը բաժնէր զանոնք, մանկական
ձայնով համբանքը յուշելով՝ «Երեք-երեք...»:

— Ուզէ՛, Մարտեան:

— Ռեզերուէ՛... .

— Բարի՛. դո՛ւն, Ամատունի-Պոստոնի՛... .

— Պոստոնի՛ն գլխովդ չո՛ւս գայ. տո՛ւր երեք թուղթ:

— Բարի՛. իսկ Պարոնեա՛ն դինչ կ'ուզէ՛ Հաւա՛տք, յո՛յս եւ մկրտու-
թի՛ւն... .

— Երգէ՛, Թոնա՛կս, դայլայլէ՛. շուտով աշուն եւ ապա՛՝ սառնամա-
նիքը կու գայ, — կը հեղնէր Պարոնեան ու կ'աւելցնէր, — ետքէն խնդացողը
իրաւունք ունի երգելու, Տոքթո՛րս. տո՛ւր երկու թուղթ:

— Իսկ ես՝ Ռեզերուէ՛:

Ձեռքինը երկու փեր էր. վախցաւ թուղթ մը առնել, որպէսզի չիտթե-
ցնէր մի. օները. միտքը պլըք ընել էր: Այդպէս կ'ընէին յաճախ Ամատունի
եւ Պարոնեան: Ռեզերուէ՛ մնալով կ'ուզէր փռուլէ կամ փլաշի տպաւորութեան
տակ մտցնել դիմացիները: Բայց, որովհետեւ ո՛չ զանկը կը կարժէր եւ ոչ

ալ ծանօթ զոյգ մը քրտինքի կաթիլները կ'երեւէին գանկին վրայ, Ամատունին կարեւորութիւն չէր տար անոր յեզոյրուէին: Ու կը խորհէր, թէ այսօրուան շահածը եալալ պիտի ընէր Շողերին...

— Փա՛ւ:

— Փա՛ւ:

Պարոնեան այդ պահուն կը մտածէր թաղական խորհուրդի յոռաջիկայ նիւտին մէջ ծեծելիք կարեւոր հարցին վրայ: Գաղութին Տէր Մարութ քահանան բողոք բարձրացուցեր էր իր տղուն դէմ, դոյն ուժաստանելով հայրսպան արարքի մէջ գտնուելու յանցանքով: Հարցը ներքին հարց էր, բայց այնքան ալ յստակ հիմերու վրայ դրուած չէր երեւեր. իբրեւ թէ՛ տղան աչք ունէր օտար աղջկայ հետ ամուսնանալ. հօրմէն դրամ պահանջած էր գիշերով: Տէր հայրը կտրականապէս մերժելով տղուն ուզածը, ապտակած էր եւ դուռէն դուրս վռնտած: Տղան իր կատաղութեան մէկ րոպէին, խոհանոցէն խնդով միս ջարդելիք դանակը՝ խոյսցած էր Տէր Մարութին վրայ. երէցկինը հաղի կրցած էր դազազած տղուն ձեռքէն դանակը խիւլ, անշուշտ Տէր հօրը օղնութեամբ: Ահա՛, այս դատն էր, որ այժմ կը գրողեցնէր Պարոնեանին թմբած ու քնաթաթախ միտքը: Դէպքը դուռ համայնքային պիտակով դիտուած, գլխացուանք էր գաղութին համար. է՛հ, ազգային լուծը ծանր էր, բայց գովելի կողմեր ունէր... Ամատունին կը մերժէր մասնակից ըլլալ թէ՛ լաւին եւ թէ՛ պէշին: Պարոնեան անզգալարար իր մտածումը մայնի կը վերածէր ահա.

— Պատու՛յ հարց է. եկա՛յ:

— Պարոնեան, մէջտեղը փասերէ գառ բան չկայ. ինչի՞ վրայ կու գաս եղիւր, չհարցնե՞ս նախ:

— Օ՛հ, ներողութի՛ւն. միտքս մեր քահանային հետ էր. ես կը բանամ սքոքը. հի՛նք Փիշը...

— Տօ՛, ե՛ս ալ եկայ:

Քէօմիւրճեան, անդին բազմոցին վրայ՝ կը շարունակէր խոմբացնել: Մարտեան կը մեղքնար անոր այդպէս անմխիթոր վիճակին:

— Գոնէ ծածկոց մը նետուէր վրան. խեղճը շմոխ:

— Տօ՛. վայրկեաները հաշուելու են. խաղի՛ր նայէ. Ամատունին իր փրօցներով չե՛ս անսնիր, որ ներքը բաղնիքի վերածնիր է...

— Ըի՛չդ է. չնկատեցի քրտնիլդ, Տոքթօ՛ր. եօթը Փիշը:

— Փա՛ւ...

— Ահա՛ երկու Փիշը, — կ'ըսէր Պարոնեան մտոցիւր:

Տասնըինը Փիշը փորձիլ էր. Տոքթօրը կը հասկնար, որ յիմարութիւն էր տկար ձեռքով մասնակցիլ ԲՆՐԻՆ, սակայն, շտաբ կորսնցնողը քիչի մասին չի մտածեր. թէեւ այդ կը նմանէր այն առածին, որ կ'ըսէր. «Քիչ ճամբուն ո՛ր կէտէն ալ որ ես դառնաս, կրկին շահ մըն է՞. օհ, թքե՛ր եմ նման շահին վրայ:

— Եկա՛յ:

— Յնդա՛ծ. եթէ քիչ մը հողատութիւն ունենայիր եւ հաւու խեյքէն քիչ մը վեր մտածողութիւն՝ եօթը Փիշը դրպանդ չէ՛ր ծակեր. այժմ, ձեռքերդ վե՛ր. յանձնուէ՛, — Ամատունի արհամարհոտ շեշտով մը «կորսուէ՛» բով պիտի ուզէր, բայց լռեց: Մարտեան կը քաշէր, ահա Փիշերը առջիւը. մինչ Տոքթօրը կը պոռար.

— Չըսէ՞ք, որ այս խենթուկը կոխ կը փնտռէ. աս, քեզի գատաւօ՞ր կարգեր ենք մեր գլխուն: Յիշնքտի՛ն նայեցէ՛ք...

— ձի՛չդ այդպէս, խի՛նքո՛ւտ, աշխարհի մէջ ամենամեծիս մարդը այն է, որ իր մէկ ցայտուն թերութիւնը ուրիշին կը վերադարձէ. փորձը մէջլանելն է. յաւիտենական Հարրուխը, Տոքթորս, կրնա՞ս ըսել, թէ ո՞վ է... ԸՆՏ՛է՛. չէ՞ս պատասխաներ. լս՛ւ. ես բսեմ՝ դո՛ւն ես, քու մշտնջենական կարմրուկ զիթովդ...

- Դո՛ւն ես, աղուէ՛ս:
- Դուն՝ որջի՛ արջուկ...:
- Ե՞ս եմ:
- Հապա՛ կ՛ո եմ...:

— Կը բաւէ՛. սիրտերնիս խառնուեցաւ, — կը միջամտէր Մարտեան Ամատունի—Օհանեսն աքլորական պատուած վէճին, զէմքը թթուեցնելով: Մինչդեռ Պարոնեան կը փխխտփայէր.

— Հապա՛, Հապա՛. երբ մարդս կը հասնի նոր մանկանայու տարիքին, հարբուիէ՛ ալ կը բռնուի, խլի՛նքս ալ կը դառնայ... Միայն թէ՛ դպուշանայու է, որ այդ պահասութիւնը յայտնի չըլլայ կիներուն, որոնք խլինքս մանուկներ չեն սիրեր...

Ը.

Բարեբախտաբար, մեր քաղաքին երեւելիները կուռազան չէին, դիրար վարկարեկող՝ վեր ու վար նետուած խօսքերով մէկզմէկու զիթ կ'արիւնէին՝ միայն խաղասեղանին շուրջ եւ Ամատունիի նեղ սենեակի սահմաններէն ներս: Այդ քաջաշուքները զիրար սիրել-յարգելէն յտոջանցած՝ նաչասեղանին բերուած մրգահամը ունէին, զիչ մը մարտդական, զիչ մըն ալ ժամանցը համեմտող լուծողականի տեղ ընդունուելով: Պատճառ մը չկար, ուրեմն, որ մէնք այդ վէճերը հասցնէինք դաղութին պատուական տիկիներուն՝ Անդնէկին, Թազուկին կամ զիչ շատ կողակիցի դեր կատարող Մունիրայի ականջին: Անոնք արդէն անլիզո՛ւ բարի հրեշտակներ էին. կը մտահոգուէին այնքան, երբ իրենց տաքուցած անկողինները թափուր են մոսպած. անգամ մը, երբ էրիկները սահէին իրենց կողին պատրաստ՝ անկողինին մէջ, բոլոր մտահոգութիւնները կը ցնդէին յօ՛ղս...

Աւօրեայ կեանքին մէջ, չղրեցի՞նք, որ մեր փոքր քաղաքին այս երեւելիները մէկ-մէկ շատուածներ էին, ամենայուրը պարոնները, որոնց հետ հասարակ պոզութիւն պատկառանքով միայն խօսիլ կրնար: Ամատունին արդէն կը հրէ՛ր՝ տուր զիթով քաղաքացիները մէկդի եւ չէր զիջաներ ձեռք տալ՝ բարեւելու համար, բացայայտ գիմայինին հասկցնելով՝ իր զգուշուոր մտա՝ վախոթիւնը տարանցիկ միջբողիներու հանդէպ...: Կը խուսափէր հաւաքատեղիներ այցելելէ եւ արդէն ձեռքերը ազդային գործերէ վաղո՛ւց լուացած՝ Պիզատոս մըն էր մեր փոքր դաղութի աշքին: Տոքթ. Պարոնեան կը պահէր միշտ լորտական իր հպարտութիւնը եւ մէջբացաւը մնայուն զգաստութիւն պարտադրող ներկայութիւն մըն էր իրեն համար. խիտա մարդու համբաւ ունէր. իր հասարակական գործիչի հանդամանքն ալ՝ ուրիշ ազդակ մըն էր լրջութեան. դատաւոր էր դաղութին մէջ ծագած վէճերուն, կուրսներուն, ընտանեկան անհաշտութիւններուն եւ լորտական իր քսաստեղը կը սաստաքէր իր հմայքին:

Տոքթ. Օհանեսնի մասին տարածուած էր, թէ ան որջարնակ մէկն էր, արեւի երես շտանող տեսակէն: Օհանեսն կ'ընդունէր հիւանդները արեւա-

զուրկ, մութ ըլինիկի մը մէջ, կ'ըսէին. բայց ասիկա թիւրիմացութիւն էր Տոքթորին բնաւորութեան փաթեթաւած. իրականին մէջ անոր բնակարանը յարմարութիւններ չունէր արեւատես ըլլալու. գուցէ այդ էր պատճառը յոճախակի հարբուիչ բռնուելուն, զոր այնքան պատշաճօրէն շահագործել զիտէր Ամատունին, խաղերու ժամանակ: Եւ յետոյ, պէտք էր աւելցնել, որ տօքթ. Օհանեան փախտական կեանք մը կը վարէր. չէ՞ որ ան փախած էր կնոջ դժօրբէն...:

Մարտեանի մտան դաղութը աննպատ կարծիք ունէր. ան կը նկատուէր ալլասերած, փուճ երիտասարդ մը, որ հեռու ապրելով ազլակիցներէն, տեսակ մը խորհրդաւոր մարդու անուն շահած կը թուէր ըլլալ քաղաքին մէջ: Կ'ըսուէր, սակայն, որ Մարտեան, օտար շրջանակներէ ներս ազգային թունդ փոփականալ կը տանէր եւ Պարոնեանի ջանքերով էր, որ վերջերս, ան կը շարուէր մեր երեւելիներուն հետ, յառաջիկային գործօն գեր մը ստանձնելու համար մեր փոքր դաղութիւն մէջ:

Դիտուած էր, որ էնժենիոր Քէօմիւրճեան անվնաս իւրերդի կեանք մը կը վարէր, ինչպէս կ'ըսէին — զիր որջէն հանած թարմ հողը որջին շուրջը կը ճիգէր միայն: Ոչ ոքի անհանգստութիւն կը պատճառէր. մենակեաց, ինքն իր իւրով տապկուող մէկը, որը սակայն, լաւ համբաւ չէր թողած ասունը մտացած աղջկատէրհրու մօտ: «Բարի, բայց անդէտք մարդ է» — կ'ըսէին, քանի որ սրտանց շէր փակած ազգային մտահող վիճակներուն: Քէօմիւրճեան եւ Մարտեան ամուրի ըլլալով՝ դեռ չէին անցած քառասունհինգը, ուրեմն, տհաս չափահասներ կը նկատուէին, օր մը չէ օր մը թեկնածու՝ սո՛ւրբ պսակի խորհուրդին...:

Ջուարթ, կոռուական եւ կատակասէր տրամադրութիւնները մեր երեւելիներուն, խաղասերանին շուրջ, անկախ վերեւ յիշատակուած յատկանշական դիմերէն, արդիւնք էին ուխկիի ատառ գործածութեան եւ բազում անգամներ խմուած սուրճին: Վերջին քուրջն առաջ, Ամատունի կը սիրէր իր ձեռքով եփուած սուրճ հրամցնել հիւրերուն. դուցէ, բարի չէր իր նպատակը. սուրճով թերեւս, կ'ուզէր թմրեցնել անոնց արգէն մրափէլ ուղող միտքը, զեղծարարութեամբ յաղթանակ մը ապահովելու համար: Այդ օրը խօսք տուած էր Շողերին գոյգ մը կօշիկ գնել եւ ա՛հա, ժպտերես՝ ան կը բերէր մատուցարանին վրայ շարած սուրճին բաժակները, շոգեամպը վըրտն...:

«Պա՛հ, պա՛հ. Ամատունի՛. այս ի՛նչ մեծահոգութիւն է. միայն թէ՛ թոյն-քնարեր խառնած չըլլա՛ս ապուրիդ, — կը կատակէր Օհանեան:

— Մի՛ վախնար, տօքթո՛ր. ախտանախաշուժը շուտով է յայտ կը բերէ ոճրափորձը մեր Ամատունիին. ան խեղճը զլուխ տղայ է, նման խակութեանց մէջ չ'իյնար, — համոզել ուզէր իբրեւ թէ Մարտեան:

— Կը կատակածի՛մ. Ամատունին շատ կարգացած է ոստիկանական դիրքեր, կրնայ խորացուցած ըլլալ ներութիւնները թունաւորման: Տօքթո՛ր, կը խրատեն, որ Չֆրո՛Քրոսացնես իր պատրաստած սուրճը, — կ'ըսէր Պարոնեան, մերժել կեղծելով առջեւը զրուած սուրճի բաժակը մէկդի հրհրելով:

— Տօ՛, եկէ՛ք փորձենք Քէօմիւրճեանին վրայ. ան արդէն աւելորդ տեղը կ'ապրի. ո՛չ կնիկ ունի եւ ոչ ալ օլո՛ւկ-չօճուխ, որ վրան լան...:

— Ա՛հ, Տօքթոր. դուն կը դաւաճանես Հիպոկրատին. ես, իբրեւ պաշտօնակից՝ կը բողոքե՛մ...:

— Վրա՛ս գրէ, Պարոնեան, ջու պաշտօնակցութիւնդ. դուն պարզապէս միջնադարեան սահրի՛լ-տիղջի մը կրնաս ընդունուիլ՝ քանիբարդ դա-

բու լուսաւորութեան մէջ, ջա՛նս... Իսկ ժեզի պէսներուն թոյլաւորուած է
դր՛ել անհասարճ՝ ընդհանուրի շահին... Ո՞վ համաձայն է առաջարկիս՝ թող
մատ բարձրացնէ:

— Մինա՛կդ ես, Տոբթոր. փորձէ՛, — կը հեզնէր Մարտեան:

— Ե՛տ կեցանք մեր առաքելութենէն. մարդը ահաւանբեր սեղմած-քնա-
ցած է. մէկ ձեռքով բերան չի բացուիր, ինչպէս որ մէկ ծաղիկով՝ դարուն,
եւ յետոյ՝ Ամատունին այգիսի խալթ չ'ըներ. խմեցի եւ անոր միդին մեղքը,
հիթէ մեռելս էլիէ այս տունէն:

— Աէ՛, եղբա՛յր, չէ՛. յանկարծ չար սատանան մտաւ մէջդ, թէ «հայ-
տէ՛, երկինք երթանք, օրդ հոսած էն, ըսէ, ես հոսած գիակիզ պատասխա-
նատու չեմ ուղեր ըլլալ: Մի՛ խմեր...»

— Տօ՛, սատկինք ալ, պիտի խմենք ջու սուրճը, որպէսզի վնաս հաս-
ցնենք դրպանիդ, որ այնքան նեղ է եւ կոնկուած՝ մեր խեղճ ազգին պէտ-
քերուն դիմաց. հոտած. փարազ ո՞ր ժառանգորդին համար կը պահես...
մեռնիս նէ, շատ-շատ պերեզմանիդ վրայ խաչ ժը պիտի քաշեն. պրծա՛ւ դը-
նաց. գտնէ եկեղեցիի պատին արձանագրութիւն մը թողէիր...

— Դէ՛, դէ՛. խաղին նայինք. կեղծ սազասէրներ շատ եմ տեսեր.
«Քեզի ալ այդ ջուրէն», ինչպէս ըսած է Պարոնեան: Արտաշ Պարոնեանը
չհասինաս, տիշչին, ջու պաշտօնակիցդ՝ Հիպոկրատի ծառան. հի՛, հի՛,
հի՛...

Տոբթ. Պարոնեան կարեւորութիւն չէր տար Ամատունիին մանր կըս-
տիթներուն.

— Ժամը անցա՛ւ. զէրգէլութիւնը մէկդի. հոս պիտի չքնանանք...

— մի՛շտ այդպէս. հիմա սկսինք. կարդը որո՞ւնն է, — եւ տոբթ. Օ-
հանեան փառաւոր Փրոտոցով կը քաշէր առաջին ուժովը սուրճին, — Հրաշա-
լի է՛. ձեռքերդ դաշար, Ամատունի. թոյն ալ որ դրած ըլլաւ մէջը, յօժար
եմ, այնքան անուշ չինած ես, անպիտան, սուրճը... լակ է եղեր...

— Խեղդ չիմես սուրճին հետ, Տոբթոր. կարդը չիլելէէ ետք, վախ-
նամ դրպանիդ պարունակութիւնն ալ պարպե՛ս ու երթա՛ս աղքատ Զողարո-
սի նման, «արի՛-եկ-արտաքս» մը ըլլա՛ս. հի՛, հի՛, հի՛...

Այս կէտին, խնդուքը երախը բացած կը հըռհոար բուր հագաններէն:
Ամատունիի «հի-հի՛»ին կ'ընկերանար Մարտեանի «հէ՛-հէ՛»ն. ետքէն Պա-
րոնեան մէջ կ'իյնար իր «հօ-հո»յով: Խնդուքային այս երրեակութիւնը քա-
ռածայն կրնար դառնալ Օհանեանի «հա-հա»յով. բայց, Օհանեան, իրրեւ
քաւութեան նոխազ եւ ի դէմ եռաձայնին՝ պիտի աշխատէր խափանել համեր-
դը զինքը ձեռք առնողներուն: Ահա՛, այդ նշանաւոր պահին էր, որ Քէօմիւր-
հան ընդոտա՛ կ'արթննար եւ ձայնը չմարդած դպրոցական աշակերտի պէս,
ինքնակո՛չ, անիմաստ իր «իի-իի՛»ն կը խառնէր պակարաւոր համերդին, որ
ա՛լ աւելի հետաքրքրական կը դառնար:

Տոբթ. Օհանեան որքան որ կ'ուզէր լուրջ երեւոյթ առնել եւ լլսուե-
լիք իր ձայնով խլացնել զրոհին աղմուկը, այնքան անզօր կը դառնար շուն-
չը. իրեն կը մնար մէկ բան. ոտքի կանգնիլ եւ ձեռքը սեղանին դարնել, Ա-
մատունիին լսել տալու համար խոսածը, որ կ'ըսէր.

— Տօ՛, դուն՝ անբրտինք շահուած փարայի վրայ շնթուկած, սլքտա՛ր
չուն. ուղտի՛ հոտած գլուխ, Փրանսական թթուած գինիի շի՛շ... Վամբի՛ր,
(ի մտի ունենալով Ծողերի արիւնը), ու՛՛ «ձախորդ սերմնացան»... Բորենիի
հոտած դարչանք...

Սակայն, տոբթ. Օհանեսանի շատ իմաստալից, քաղցր ածականները, դժբախտաբար կամ բարեբախտաբար՝ չէին բեղմնավորում հակադարձութեան փորձով եւ կը մնային իրրեւ զձայն բարբառոյ յանապատին: Ամատուհին կարեւորութիւն չէր տար անոնց. իսկ Պարոնեան, որ կէս սկանջով կը լռէր առջեօրին ըսած տեղին խօսքերը, քիթին տակէն կը մոմտար.

— Հա-եա՛, հա-եա՛. այդպէս է. վամբի՛ր ալ է, ուզտի գլո՛ւխ ալ... Օհանեսան, Հաշիւը մաքրած համարելով Ամատուհին հետ, այժմ, կը դտոնար դէպի բազմոցը, որպէսզի մէկ քանի լու խօսքեր եւս շարտէր Քէօմիւրճեանի երեսին. բայց, Քէօմիւրճեան, ահա՛ կը մրափէր աշխարհէն անտեղեակ՝ մեծցած-արտիկցած մէկու մը պէս, խոխալով...

— Տեսէ՛ք, թէ ինչքան յիմարն է. կարծէք, ինքը չէ՛ր ձիու պէս խըր-խընջագողը՝ քիչ ստաջ... Ամատուհի ետքէն, երբ կ'անդրադառնար իրեն վերադրուած Տոբթորի խօսքերուն, Պարոնեան կը նեակէր անտարբեր.

— Պարսին ծայրը կտրն կապած էր, ես ու չհասայ բունել զայն: Լրջութիւնը կրկին պարտադրած էր լռութեան, որ իջնէր սեղանին վրայ.

— Փոքերը լո՛ւրջ խաղ է. պէ՛տք է լռութեամբ խաղցուի, — ինքնահերքումի կը դիմէր Տոբթորը եւ ձեռք կ'անէր խաղաթուղթը: Ամատուհի թաթի հարուած մը կու տար Տոբթորի ափին.

— Կարգը ի՛մն է, խելօքս:

— Օ՛հ, ներողութի՛ւն. չէի դիտեր, որ այդքան սուր յիշողութիւն ունիս եղեր. հրամայէ՛...

Ամատուհի կը բաժնէր թուղթերը եւ ապա կը ձայնէր.

— Պարոնեան. խօսէ:

— Վերջինն է. հասկցանք. տո՛ւր երեք թուղթ:

— Տոբթոր:

— Պո՛ռ ու ցաւ... տո՛ւր երկու հատ:

— Դո՛ւն, Մարտեան:

— Մէ՛կ հատ կը բաւէ:

— Ինձի ալ՝ քարթ պէտք չէ. ռեզերվէ՛: Տոբթոր, աւել չորս բաց. պայմանաժամէն տաս վայրկեան անց է, ուրեմն, վերջինն է...

Ա՛խ, սա Ամատուհին. թշնամիին թիկունքը անցած հետախոյզի կը նմանի. ազդարարութեամբ շփոթ կը յտուլացնէ: Օհանեսան փոխանակ բըռնելու եւ զնդակահարելու հետախոյզ-խափանարարը, կը բռնուի բնազդային վախէ, որ կծկել կու տայ սիրտ-դունդը՝ խրամէն ելլել փախչիլ թելադրելով անոր, ինչ որ՝ ճեղքեր բանալ կը նշանակէ ճակատամարտի դիմին վրայ... Կասկածամիտը յաղթանակ չի՛ կրնար ապահովել, կ'ըսէ Օհանեսան ինքնիրեն. պէտք է պրկեմ ջիղերս, որ դողդաղ չսկսին անդամներս. ահա՛ լախ-լախ սկուաներս բռնուին պիտի կտփ-կտփի դողէն. մինչդեռ, ես հրաշայի ձեռք մը ունիմ — երեք ըռալով զոյգ մը վալէ. աս մըն ալ անոնց կողքին՝ յաղթանակի աստղի նման. ուրեմն, ինչէ՛ն կը վախնամ կոր. փո՛ւս, կո՛րը ուրկէ բուսաւ. Պարոնեանի պոյսահայ բերնին մէջ իսկ կեղծ դրամի պէս կը հնչէ: Պարոնեանը երեք քարթ առաւ. պլըֆ չէր ըրածը. թերեւս «փեր» մը զոյգ կամ երեք մը ստացաւ. անկէ վախ չունիմ: Մարտեանը զօրատր հակառակորդ մը չէ, որովհետեւ զմանէօվրելա՞ սովորութիւն չունի, մարդը ճակատաբաց կը մղէ կոխը. կեանքի ուղեգիծ չէ ընտրած մարդս կեղեքել. սակայն, Ամատուհին այդպէս չէ. սն խորամանկ ռազմավարի տի-

պար մըն է. նախորդին մը խալթ կերեր է սողեւը... Իմ վախս, ահա՛, իր ծածկամտութենէն աղղուած ստորակայութեան բնագոյն է. ըսաւ՝ քնզերվէ. արտիք փլա՛ջ մը ունի միթէ. է՛հ, գլուխը քարին. ի՛նչ կ'ուզէ թող ունենայ, մահնա՛յս որն է...

Եւ Տոքթորը, որ կը սպասէր Ամատունիի յարձակողականին, կը լսէր ահա, ու մտքի պէս պայթիւնը Պարոնեանի ձայնին.

— Տասնը՛հինգ Փիշ:

Տոքթ. Օհանեան մասնակցելէ առաջ Պարոնեանի իջուածքին, կը նայէր դիմացինի աչքերուն, որոնք ծոած էին ֆիշերուն վրայ: Չէ՛, Ամատունին մէջը պիտի տար, լաւ ձեռք չունի, կը թուէր:

— Թող ըլլայ քսա՛ն:

— Եկա՛յ քսանով, — Մարտեանի դէմքին ոչ մէկ մկանը կը շարժէր: Ամատունի շատ պազ տուչ մը արնոցի պէս՝ պաղպուակ՝ հազիւ լսելի կը յարէր.

— Երեսո՛ւն:

Պարոնեան կը զղջար, որ ըստրօնը զիւրով բացած եղաւ. իր օտարապիտ սաղմաւարութիւնը պիտի շարունակէր սակայն, սեղանի մէջտեղ նետելով տասը ֆիշ առաւել՝ տասնը՛հինգ ֆիշ.

— Բառասո՛ւն:

— Բառասուն եւ հի՛նդ մը, — Տոքթորին քաջութիւնը բռնած էր, բայց ձախ ոտքը կը սկսէր դողի ազդանշանը տալ:

Մարտեան՝ երկվայրկեանի երկընտրանք իսկ պիտի չունենար. ան ձեռքին թուղթերը վար դնելով, կը յարէր.

— Փա՛ւ:

— Ինչոք վարուեցար, Մարտեան, — եւ սյուզէս ըսելով, ամատունի կ'ուզէր հոգեբանական վախ մը ներշնչել տալ Տոքթորին: Իր ուսգմաւարութիւնը շարունակելով, ան իր սողեւ եղած բոլոր ֆիշերը կը հրէր սեղանին կեդրոնը եւ աչքերը յառած Տոքթորին գանկին, — սո՛ւտ, — կը Փշտար:

Պարոնեան կը հասկնար դրութիւնը. ձեռքը տկար թուղթ ունէր եւ գիտէր, թէ Ամատունիին ըրածը մեծ կաֆ մըն էր. իսկ Օհանեան պիտի հետեւէր իրեն, եթէ մասնակցէր դրո՛հին. վնասողը պիտի ըլլար ինք եւ եթէ վախկոտ չլսնուէր դրացին ու ճակատէր դիմացինին հետ, անոր խէրը անիծած պիտի ըլլար: Այդ ձեռքին մէջ՝ ինք կողմ էր Օհանեանին.

— Ես չե՛մ դար. Տոքթոր՛ը, կարգէ հասաւ...

Օհանեան կատարը տաքցած աքլորի պէս կը պոռար ահա.

— Սո՛ւտը ըսէ՛:

Պարոնեան կը սկսէր Ամատունիին մէջտեղ հրած ֆիշերը հաշուել: Ամբողջը կը ներկայացնէր վաթսուներհինգ ֆիշ, արանց նկատի ունենալու Ամատունիին վերջէն աւելցուցած քանը՛հինգնոց թղթադրամը, զոր ապօրինի կը նկատէին միւսները: Ու Պարոնեան, լուելայն Տոքթորին հասկցնելու համար, թէ պէտք էր ընդունէր Ամատունիին նետած ձեռնոցը, բարձրաձայն կու տար ֆիշերուն թիւը.

— Տոքթոր, զիչ գումար չէ՛ վաթսուներհինգը եւ սեղանին կեդրոնը եղած հարի՛ւր տասը... Ջարդը մե՛ծ պիտի ըլլայ...

— Խնդրե՛մ. կողմնակի խօսքեր չըլլան, — կը մոնչէր մեր Ամատունին աչքը չբաժնելով դիմացինի գազաթէն, — ես ձիւն պիտի իջեցնեմ այդ կարմրած կատարին...

Մարտեան, սեղանին տակ, կը կոխէր Տոբթորին ոտքը. Պարոնեան սրբունքով կը հարուածէր միւս ոտքը եւ Տոբթորը մնացած էր անորոշութեան մէջ՝ կորսուած դառնուկի ուղեղով: Դէ՛, եկո՛ւր եւ հասկցի՛ր, թէ՛ ի՞նչ ըսել կ'ուզէին ոտքի հարուածներով: Իր դժբախտութիւնն ալ այն էր, որ նազառտակի վախկոտ սիրա մը ունէր եւ Ամատունին լիովին տիրապետած էր ջիւղերուն: Պարոնեանին «չե՛մ դարը» այլ բան չէր կընար ըսել, եթէ ոչ՝ նահանջիկ...

Թ.


Այս քրիթիկական վայրկեանին, պէտք էր, որ արտահանուէին այն մտահորութիւնները, որոնք կը նմանէին ալիկոծ ծովուն բռնուած նաւակազմի մարդոց ուխտ ընելու ցանկութեանց: Յուսահատ զրութեան մէջ կը զբոսնէր Ամատունին, որուն հաւատքը, ինչպէս կ'ըսեն, կախուած էր մաղաթելէ մը: Կը բաւէր, որ Օհանեան բռնէր «եկա՛յ» եւ արդէն մաղաթելը կտրած կ'ըլլար ՊԱմատունին ալ վշիւրվայր՝ կը գահավիժէր իր փորած հորին մէջ: Եողերին խոստացած էր զոյգ մը կօշիկ. վազն իսկ, զայն թելին տակ առած՝ պիտի երթար թակէր Եողերենց դուռը, պայմանադրուած ժամուն, իրիկնամութիւնով, որ լրտեսող աչքերը հաւկուրով բռնուին եւ չկարենան լրտեսել զինք: Եողեր պիտի վազէր զէպի փակ դուռը եւ ներսէն պիտի հարցնէր, շուրթաձայն՝

- «Դո՞ւն ես...
- «Հա՛, ջա՛նս. ես եմ:
- «Բերի՞ր...
- «Բերի՛, անուշիկս. շո՛ւտ, դուռը բաց. մա՛րդ կ'անցնի փողոցէն...

«Եւ դուռը պիտի բանար Եողեր, կիսամութ անցքին մէջ իսկ շող արձակող ժպիտով: Ամատունի պիտի դրկէր աղջկան ուտերը՝ ետեւէն եւ աղպէս՝ կոծող ու ծաղիկ՝ պիտի քայլէին մինչեւ ներքին փակ դուռը...»:

Երկվայրկեաններ տեւող լուս պայքարը նոյնքան մտալիկում կը յառաջացնէր տոբթ. Օհանեանին մէջ: Ան ուլ իր գուխները ունէր. Մունիրան զլիւաչոր մը ուղած էր «Իր Տոբթորէն» եւ Օհանեան չէր զլանար անոր ձեռքին մէջ ղեւել հոգեպահուտար լուման, որ օրը օրին, յատուկ թաշկինակի կապոց կը դառնար: Հովին բերածը ջուրը կը տանի, կը արամբանէր մեր Տոբթորը եւ սակայն, այժմ, ան կը տատանէր այն կամ ոչ ըսելու երկրնտրանքով. Պարոնեանին չեմ զար բռել իրեն համար այն վհատեցուցիչ արարքն էր, սրմէ դատելով, ճակատամարտի ժամանակ՝ զօրավար մը կը կանխազգար պարտութեան ուրուականը...

— «Ըսենք, որ սա ոչ-պոչուոր ազուէք լու ձեռք շունի եւ պլըֆ է ըրածը. սակայն, առլտ բսելը արիութիւն կը պահանջէ. կատակ չէ՛ հարիւրի մօտ ֆիշեր գոհելը երկվայրկեանի մը մէջ. եթէ եկայ ջսեմ եւ դուրս դայ, որ ան քառէ ունի. ի՞նչ կ'ըլլայ վիճակս. էլ-նահատակութիւն: Ձերթալ ալ չ'ըլլար. մեղք են այսքան ֆիշերը զրկել աղուէսին կրտսը... չը՛. Պարոնեան, դուն ի՞նչ բսիր. եկայ ըսե՛մ, թէ՛ չըսեմ. սրունքս ոտնահարելով ի՞նչ ըսել կ'ուզես միթէ. չերթա՛մ...»: Եւ ահա, Մունիրային դէմքը եկաւ ցցուեցաւ տաշեւը — «Տոբթոր, ոտքդ պահենեմ... մեղք է դրամդ... վաթսուներէնք ֆիշով շատ մը պակասութիւններ կը վերնան — դուն, կին, էրկի մարդու գոր-



ծին մի խառնուրդ. ես ընկել քս գիտեմ. բայց, ահա Մարտեանը կրկին ոտքս կոխեց» եւ... ետին, քաղմոցին պառկած Քէօմիւրճեանը, որ կը շարունակէր ՓըլՖըլոցային խոմբոցը, մէկէն խեղդող խըռոպ մը կ'արձակէր, ցնցելով Տոքթորին ամբողջ էութիւնը: Գազազած՝ Օհանեանի վճիռը երկիմաստ արտայայտութիւն մը պիտի ըլլար այնուհետեւ: Ան պատրաստուած էր Քէօմիւրճեանին «չո՞ք» ըսել, եւ ուրա պատասխանել Ամատունիի ձեռնոցին եւ սակայն, զոյգ գանկութիւններէն կոկորդը խեղդեց շոտին ոտը եւ ինքնաբերաբար չ-ըն փակաւ եկայ-ին, որմէ պիտի ստացուէր,

— «չ-եկայ»:

Այնուհետեւ սեղանին շուրջ ահագին փոթորիկ պիտի բարձրանար: Ամատունի, առիթէն օգտուելով՝ կը քաշէր առջեւը Փիշերու կոյտը՝ երկու թիւերով փոռած սեղանին վրայ: Օհանեան կը ճշար ու «եկայ», ըսի, կը փստտէր, չ-ըն հեռացնել ուղելով եկայ-էն. ի զո՞ւր: Ամատունին չէր համոզուեր: Պարոնեան կը միջամտէր՝ ի նպատակ Տոքթորին, համոզել փորձելով Ամատունին, որ հայերէն պարզ լեզուով, նման առիթին, ճիշդ պիտի ըլլար ըսել չեմ գար եւ ոչ թէ չ-եկայ: Եւ արդէն, կը պնդէր, Տոքթորին միտքն ալ «եկայ» ըսել էր...

— Եղբայր, ճշմարիտ, որ ես եկայ ըսի. այդ չ-ըն շոտ-ին չ-ըն էր: Խաղը ե՛ս եմ տարեր. ե՛տ դարձուր Փիշերը...

— Նա՛հ, — կ'ընէր Ամատունի, աչքակոպին մէկը ետ-ծալ ընկելով:

Արթնցած էր աղմուկէն Քէօմիւրճեան, որ անպիտակ էր իրմով յառաջ եկած վէճին: Գնաթաթախ աչքերը ճճոտուելով՝ ան կը մօտենար սեղանին եւ պազապուր ձայնով կը հարցնէր.

— Ի՞նչ պատահեցաւ ձեզի...

Գրաւելով թափուր թողած աթոռը, ան ապուշի նայուածքով կը դիտէր կռուազան մեր երեւելիներուն դէմքը եւ գիւտ մը ըրածի պէս, կ'ըսէր.

— Տոքթորին երեսը դեղնած կը անենեմ. մարմինը զարկած չըլլա՞յ իրեն. ուզասէ՛, Տոքթոր. Գուր բերեմ. քիչ մը որ խմեցիր, ազդեցութիւնը կ'անցնի... Ինծի ալ յաճախ պատահած է Աիֆըրմիզէ ըլլալ. երբ սիկաբէթը պիտի փաթթուած է, անպատճառ Աիֆըրմիզէ կը զարնէ...

— Տօ՛, կորսուէ՛ աչքէս. կը քնանայիր, փո՛ւճ մարդ. մնայիր խելօ՞ք, քունիդ մէջ... Աիֆըրմիզէ՛ եմ եղեր... ո՞՞, տունս քանդեցիր քու խայտառակ խրոտոցով... խեղդուէր մէկ անգամէն, ազատուէինք անպէտքութենէդ, — ու դառնալով կրկին Ամատունիին, կը պոռար անոր, — աւազա՛կ, կողոպտի՛չ, սլքտան լուճ, կողո՛րդդ մնայ ոսկորը...

Պարոնեան թղթակոյտին մէջէն դատելով Ամատունիին եւ Տոքթորին ունեցած ձեռքերը, գանոնք պարզեր էր սեղանին վրայ: Ամատունին «իննոց» փնր մը ունէր միայն. իսկ մեր Տոքթորին թուղթերը յայտնի էին արդէն — բրուս քուս է տէօ վալէ — հրաշալի ձեռք մը: Տոքթորը չէր կրնար երկարօրէն իր իրաւունքին վրայ պնդել. ուշացած էր յայտարարութեանը մէջ, ուրեմն, պարտուած կրնար նկատուիլ: Միայն, թիւրիմացութիւնը հարթելու համար, Պարոնեան կ'առաջարկէր կիսել հաւասար երկու մասի՝ շահք. սակայն, Ամատունի անդրդուելի կը մնար. մինչ Օհանեան ոտքի ելած՝ կը շարտէր անոր երեսին,

— Թո՛ւրք:

— Ափսո՛ս, որ դերմանական ուտու՞մ առած ես, բայց սազմալարու-թե՛նէ խարար չու՛նես, — կը հեղնէր Ամատունի:

Բոլորը ոտքի կը կանգնէին. հեռուէն կը լսուէր կառավարական տան

ճակտին հաստատուած ժամացոյցին երկաթաձայնը, որը կ'արձագանդէր մեր երեւելիներու սիրտին մէջ եւ Մարտեանին ըսել կու տար.

— Փամը երեքուկէս ըրինք. հայտէ՛, երթանք քիչ մըն ալ քնանանք:

— Հա՛. երեքուկէս զարկաւ, — կը խօսէր Քէօմիւրճեան բան մը խօսած ըլլալու համար եւ խնդմնդալով կ'աւելցնէր, — բաւական մը քուն եմ քաշեր, հա՛...

— Եւ... Տոքթորին պարտութեան պատճառ եղար, — կը յարէր Մարտեան:

— Ես ի՞նչ գործ ունիմ իր պարտութեան մէջ, եղբա՛յր. հանգիստ կը քնանայի կոր:

Պարոնեան կը միջամտէր.

— Դուն չէիր... բայց, քու իւրապէս եղաւ պատճառ. աղէկ որ Տոքթորը չըսաւ «չոտ ու ցաւ». այլապէս՝ քու դիակը պիտի հանէինք հոսկէ: Ճիշդ չե՛մ, Տոքթոր:

— Գնա՛, դուն ոգի՛. եթէ ոտքիդ հարուածները չըլլային, հիմա ես այդ աղուէտին որջը քար ու քանդ՝ գլխուն շրջած էի... Հետը այսուհետեւ խաղաղը շո՛ւն ըլլայ. պրծա՛ւ...

Հարկ կա՞ր նկարագրել տոքթ. Օհանեանին դրութիւնը, որ թրջուած ու ձեւտուած աքորի վիճակէն տարբեր երեւոյթ չէր պարզեր. կարելի՞ էր հաշուել անոր զարկերակին արտփիւնը կամ նկարահանել զրիշով մը դէմքին ու դանկին խուժած արեան նրբերանգութիւնը, յուսահատ, ճնշիչ շնչարգելութիւնը, որ երբեմն հազ կը յտաջանցնէր եւ մերթ փոքրապէս կու տար իրեն. այսպէսով ընկերներուն քով ծիծաղի ալիք առաջացնելով...

Այլ դրութեան մէջ չէր նոյնքան մեր Ամատունին, որ ստիպուած էր թէ՛ ինքզինք պաշտպանել Տոքթորին նետած պատկերաւոր անականներէն եւ թէ յարձակումի դիմել, փոխ-վրէժի մը յազուրդ տալով իրեն: Բայց, յայտնի թան էր, որ ան իր հողին վրայ կը կռուէր եւ քաջ գիտէր, թէ հիւրերը՝ Պարոնեան եւ Մարտեան, աչքի պոչով իրեն ուժ կու տային...

Անգամի մը համար ըսենք, որ Պարոնեան ինքնիրմէ ելածի փառոր տուաւ, երբ Տոքթորը գինք պատասխանատու բռնեց իր կրած պարտութեան: Օհանեան կ'ըսէր ու կը կրկնէր, թէ՛

— Ինքը փախաւ եւ ստիպեց ինձի ալ փախիլ. երեն խօսէ, Տոքթորը կը նշանակէր պոչդ առ ստորերուդ միջեւ ու փախիր. թէ չէ, ես յիմա՞ր էի ի՞մ հրաշայի ձեռքով յանձնուիլ աղուէտի թակարդին...

Պարոնեան կը պոռար այն ատեն.

— Ուրեմն, գլխուդ մէջինը յա՞րդ է, թէ՞ էլի ուղեղ...

Այո. հարկ չկար այս բաներու մասին գրել: Հետագային, մարդիկ, մանաւանդ մեր փոքրիկ գաղութի իմաստուն կիները շատ բան պիտի ունենային խօսելու եւ շուրջ գերանի վերածելու. անոնք պիտի ըսէին, զոր օրինակ, թէ Տոքթորը խելքը կորսնցուցած՝ մարեր-ինկեր էր Մարտեանի թեւերուն վրայ կամ մէկ-երկու մուշտի հասցուցած էր Եողերի սիրական՝ Ամատունիի կողին, սակորները տեղահանելով: Եւ ասիկա պիտի կարծուէր ճիշդ, քանի որ Ամատունի, պաղաւտութեան պատճառով, այն օրերուն անհանգիստ եղած էր: Արդէն, չէ՛ք գիտեր, թէ ի՞նչ խողովակով հանրութեան մէջ ասորածուած էր, որ ինժեների Քէօմիւրճեան ջուր սրկած էր Տոքթորին երեսին, երբ այս վերջինը մարմերու ախտանշաններ երեւան հաներ էր...

— «Հապա՛, քո՛րս. բանը այդպէս պատահած է խումարի ատեն...»:

Քէօմիւրճեան զազոնապահ մարդ էր. ինքն իրեն համար՝ խորունկ հոր մը, որուն ջուրին հասնելու շափ ոչ մէկ տեսակի շուան կը գտնուէր կամ կարելի էր հարել մեր փոքրիկ քաղաքին մէջ, քանի որ Քէօմիւրճեան թուրքերան մէկը շէր եւ կիներու հետ ալ քնաւ գործ չէր բռնէր: Մարտեանը՝ անգամ մը, որ տուն երթար, այլեւս խաղի մասին չէր կրնար խորհիլ եւ ոչ ալ պատահածի մասին մտածել. էմման ողջ մնար. ան ժամանակ կը ձգէր Մարտեանին պարսպ բաներու վրայ խոկալու: Պարոնեանի նկարագիրին մէջ արդէն զբամբասանք ըսուածը անկարելի ցափառուք կը նկատուէր», որքան ալ նափուէն ըսած ըլլար, թէ անկարելի բառը գոյութիւն չունի: Պարոնեան յայտնի էր իրբեւ զԷլզիւներու բերանը սանձ դնող: Ուրեմն, ո՞վ կրնար շեղած զազոնիք մը ամբոյնին բերտնը ձգել. Օհանեսնը իր մասին բամբասակ չէր կրնար. կր մնար կասկածի ծածկոյթը նետել Ամատունիին վրայ, իրբեւ տոնքոցող եղո՞մ. մանաւանդ՝ որ կար Շողերէն շուտելու իր ծերունական մեծամուրթիւնը...

Ինչ որ է. խաղը վերջ գտած էր այդ օրը, առաւօտեան ժամը երեքուկէսին: Երբ շորս երեւելիները փողոց կ'ելլէին, «պիշէ՛ր բարի» մաղթելով տանտիրոջը, Ամատունի կը դնէր դրան նիւր զգուշութեամբ եւ դեռ հոտ չզարձած, սատանայական ժպիտով՝ աչքերը կը բացթփէր եւ իր փիլիսոփայութեան սուրք մը տալու պէս, կը ֆըլէֆըլար:

— Է՛հ, այսօր ալ շահեցայ. «Շողերիս աչքը լոյս» . խումարն ալ տեսակ մը՝ ուրիշէ ձեռքով կրակէն շաղանակներ հանելու միջոց մըն է. ուրստայի՛ր, Ման՛ուկ. բախտդ բանուկ է եղած միշտ... Կըլլի՞նք հաստատուած աշխարհի մը մէջ:

Ժ.

Էլի՞՞գիտ...:

Աշխարհը ամբողջ Կըլլի՞նք էր...

Ինչպէս, որ Կըլլի՞նք մըն էր տղեթ. Օհանեսանի վերջին տարիներուն ապրած կեանքը, երեսը շնայութիւք, աչքը սշ-գուրս՝ այրի Մունիբային կապած սէրն ու կնոջմէ փախած ըլլալու երանութիւնը...

Ամատունիին նման, Աստուած ալ Կըլլի՞նք բրաւ հետը. հեռաւոր Եւրոպայի մէկ ծանօթ քաղաքէն, քսան տարի ետք՝ փախուկ Լորան իր երկու կորիւններով, անբեռ, տնձանրոց՝ բերաւ մտցուց Տոքթորին խաղաղիկ տունը, թէ ահա, «խաչով-պսակով ուխտեր էիր տէր կանգնել կնիկիդ, հրամմէ՛, տէր եղի՛ր իրեն եւ զաւակներուն...»:

Ճակատին դիմն էր, պիտի հանդուրժէր:

Սակայն, մէր փոքր պաշտոթը նորութիւններ չէր հանդուրժեր իր մէջ. մտնաւանդ կիները կ'ատէին թեթեւստիկ, թափթփած, ծիծաղելի շորերով՝ փողոցը օրն ի օրուն տեսնուող մատամ Լորան, որ հասնողին կը յայտնէր, թէ ինք Տոքթորին կիներ էր, նոր ժամանած էր. ամուսինը խաբած էր գինը... եւ այժմ, սպասուհի կը սիրէր: «Մեղա՛յ, մեղա՛յ», երեսնին կը խաչակնքէին անոնք. մարդ իր աղտոտ լաթերը պէ՛տք է, որ փոէր օտարին բակը. «չրօ՞՞ս, քա՛ւ. Տոքթորին կնիկը թամ փախուկ է. լսեցի՛ր, թէ ի՛նչ կ'ըսէ էրկան մասին. իմ էրիկը, կ'ըսէր, մասիօ լը տախթօր է. թաղե՛մ գլուխը...: Քա, տըղաքն ալ մօրը քաշած են. երկու մարդ որ տեսնեն, կը կենան եւ պապանին կը կտրեն, եւ կը ձեւեն. ինքնագոյութիւն կ'ընեն. հեղէ՛ պզտիկը. պո՛ւ՛մ-

պճում կրակներ է եղեր օդի մէջ, կռիւի տուն... Բա, կ'ըսեն, փախուկութիւնը ժառանգական է՝ վա՛յ է եկեր մեր Տոբթորին զլիսուն. երեք խենթերու մէջ, անշուշտ ողջը կը խելագարի՛...»:

Կը կարծէք, թէ տոբթ. Օհանեան աչք ու ականջ շունչ՞ը. հոգի ու սիրտ չկա՞ր մէջը. պատիւ-արժանապատուութենէ զո՞ւրկ էր: Կը տեսնէր ու կը լսէր ի՞նչ որ կը խօսուէր դուրսը: Սակայն, ամենածանր հոգը Մունիրան էր: Կինն ու զաւակները անոր համար, տան մէջ, ամէն օր վէճ ու կռիւ ունէին. խեղճ Մունիրայի զլիսուն վրայ մազ չէր մնացեր. Լորան կը ճշար՝ «Տոբթորս զողջե՛ր ես, կորսուե՛լ դուրս»... Տղաքը կը պոսային՝ «սպասուհիի կտոր, փութի՛րք քաշէ, գնա՛...»: Իսկ, Տոբթորը թեւէն կը բռնէր. «մնա՛, տունը քուկդ է, իրենք հիւր են...»: Գնա-մնային հետեւանքը այն կ'ըլլար, որ Մունիրան կ'անէր կծիկը ու կը կորուէր մէկ-երկու օր: Տոբթորը, կողմակի միջոցներով, կը փնտռէր և՛ երբ հետքը չգտնէր, փոթորիկ կը բարձրացնէր տան մէջը:

— Կորսուեցէ՛ք, գացէ՛ք եկած տեղերնիդ, երեքդ ալ... Իմ ծերութեան ժամանակ, ա՛ն նայեր է ինձի. ա՛ն իրաւունք ունի մնալու հոս, — եւ քանի որ անկարող էր խօսք հասկնելու խելերուն, ինքը՝ դիւահալած՝ տունէն կը փախէր: Եւ ահա, երբ, կէս դիւերէն ետք, խաղէն կը դառնար, աստիճաններուն զլուխը կծկտած կը գտնէր Մունիրան և՛ ներս կ'անէր գինք: Յաջորդ առտու կը կրկնուէր նոյն տեսարանը և՛ այսպէս՝ ամէ՛ն օր: Տոբթորը կը սկսէր համ-հոտ լառնել իր սպրիկէն. քիչ-քիչ դարդը անդ ըրաւ սիրտին մէջ. մաշեցաւ, մաշեցաւ և՛ օր մըն ալ ինկաւ անկողին:

— Մունիրա՛, ես պիտի երթամ...

Մունիրան էր, որ կը հսկէր սնարին քով: Կինն ու տղաքը, անհոգ՝ կը շարունակէին իրենց թափառումները. աւելի՛ դրսեցի էին, քան տնեցի և՛ Մունիրան, ձեռքը հիւանդի ձեռքին մէջ, անոր աչքերը իր աչքերուն մէջ՝ կարօտի և՛ վիշտի ծովուն վրայ լող կու տար, մէկ-մէկ հարցնելով.

— Որ երթա՞ս, Տոբթոր՛, իմ վիճակս ի՞նչ պիտի ըլլայ...

Տոբթորը կը մրմնջէր շնչահալած.

— Աստուած մե՛ծ է. «չարժականս» քեզ կը կտակեմ, անշարժը թո՛ղ դուինուն փլի...

Կեսը և՛ զաւակներուն դալէն երկու տարի ոչ-լման ժամանակի մէջ, տոբթ. Օհանեան՝ ծառէն հողմաթափ ինկած, փլիսած ծիրանի պէս թռի՛ հոգին ինկաւ: Իր թղթախաղէ ընկերներն ու զաղութի մարդիկ, ուսամբարձ՝ կրեցին դին մինչև և՛ անտարանականներուն զերեզմանատունը, որմէ՛ ետք յայտնի պիտի դառնար, որ տոբթ. Օհանեան բողոքական համայնքին կը պատկանէր, մահէն անդին...

Երանելի օրեր չմնացին այլևս. ժամանակները կը սկսէին վատթարանալ: Մեր փոքրիկ քաղաքը, — որ մարդիկ մէկ իշարեւ կանաչեղէն կամ պտուղ վաճառելով հորայ կ'երթային, ո՛չ կը հարստանային և՛ ոչ ալ կը մեռնէին քչակերութենէ, — կը դառնար հետզհետէ անբաղձալի անկիւն՝ ծով աշխարհին մէջ. բարքեր ու սովորութիւններ տարազ և՛ զոյն փոխել կը սկսէին: Տեղափոխ եղաւ դնաց նաեւ ինժեներ Քէօմիւրճեան. հինգ տարի ետք, տոբթ. Օհանեանի մահէն ետք՝ լուր տրուեցաւ, թէ ան անմխիթար, յաւիտենական որբ, քաղցկեղէ ծիրած, հալած՝ աչքը զոյցեր էր ծերանոցի մը մէջ...

Տիկին Անդրէնէն և՛ Աբրաշ Պարոնեան, իրարմէ՛ հինգական տարիով ետ-առաջ ինկած, նախ Անդրէնէն և՛ ապա՝ տոբթ. Պարոնեան հրատեղա կու

տալին Վլլըֆով լեզուն մեր աշխարհին, երթալ միանալու երկնքի մէջ, Օ-
հանեանին եւ Քէօմիւրճեանին...

Մանուկ Ամատունին կրնար դեռ երկա՛ր ապրիլ մեր փոքր քաղաքի
բայ արեւին տակ. կրնա՛ր տօնել իր ծծկերութեան հարիւրամեակը, բայց,
չէ՛, իր ալ ժամանակը պիտի հնչէր՝ ուչ կամ կանուխ: Զգալով վաղահաս
մահը, իննսունըհինգ ունդիսամատին, պր. Ամատունի կ'արձանագրէր իր
ծոցատետրի մէջ էջին.

— «Զգացի, թէ իմ վերջս եկած է. Թագուկէն առաջ պիտի մեկնիմ.
կիրարկած ուժիմովս ես կրնայի ապրիլ առնուազն հարիւր քսան տարի.
ուսկայն, ո՞ր ժայռը կը գիմանայ ամէնօրեայ հեղեղ անձրեւ-արցունքին,
դոր ես կը թափեմ յուսախարութեանս մէջ, որովհետեւ իմ կեանքս վա՛ռ
դարուելը... Երդերը ամուսնացաւ... սոխակս ձգեց վանդակը՝ փախա՛ւ...
Բայց, ե՛ս եղայ պատճառը. ե՛ս, ե՛ս ամուսնացնել ուղեցի՞, որ ետքէն խղճի
խայթ չունենանք... լա՛ւ ապրինք. ափսո՛ս, Երգեր լքե՛ց զիս... Առջի օր,
Թեւ-թեւի՛ անցաւ էրկանը հետ քոյկս եւ ընկատեց զիս, անպիտան աղջիկը,
ապերա՛խտը... մէջս բան մը փրթաւ, սիրտս կանգ պիտի առնէր, եթէ զօ-
րաւոր չըլլար... Ի՛նչ լիմարութիւն էր, որ գործեցի՞՝ քաջալերելով իր ա-
մուսնութիւնը... Ետե՛ր, Ետե՛ր, ես պիտի մեռնի՛մ ջու կարօտէ՛ղ...»

Այս յուշատետրը կայ ու կը մնայ. Ամատունիին միակ կտակն է, դոր
թողած է ան Թագուկին: Տիկին Թագուկ կարգալ չի զիտեր, բայց, կը հաս-
կընայ գիրին լեզուն, կ'ըսէին մեր փոքր քաղաքի լեզուանի կիները, մանա-
ւանդ այդ լեզուն կապուելիք Զարուկը...

Իննսունըհինգ տարեկանին, հանգաւ ի Տէր, մեր փոքր դադութի երե-
ւելներուն վեթերան անդամ՝ պր. Մանուկ Ամատունի, գլուխը բարձին, դի-
չեր մը հողելարք անցրնելով: Երկու տարի ետք, երկրորդ ամուսին Ամա-
տունիին պիտի հասնէր հրեշտակաման Թագուկ, այդ շատ բարի կինը...
Աստուած հողին լոյսերու մէջ պահէ. ամէ՛ն:

Աշխարհը ամբողջութեամբ Վլլըֆ էր:

Պլըֆ մը եղաւ, մեր փոքր քաղաքի մէջ անդեանդելի, երեւակայութեան
ծնունդ՝ ապուգաք Մարտեանը, որ ի չգոյ՛ն անձնաւորութիւն մըն էր, բայց,
պէտք է, որ դասուած ըլլար մեր երեւելիներու շարքին: Մեր փոքր դադութը
փաստաբան շուէնէր, չէ՛ր կրնար ունենալ, որովհետեւ տրամաբանելու պէտք
չէր դրացուեր...:

Մեր գաղութը ռամանթիք ժողովո՛ւրդ էր. ահա՛ բուրբը:

ՍՄԲՍ ՓԱՆՈՍԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

ՊԱՅԹՈՂ ՏԱՌԱՊԱՆՔ...

Մշուշներու մէջ աշուն է արդէն՝
լո՛ւտ տերեւաթափ,
գոյներու խունապ:

Հովեր ամեհի, աշնահար հարսնիք,
ես մերկ ծառերու
ցուրտ մեղրալուսին...

Մութ ու սեւաստուեր ծառերու ռստին՝
ես պայթող բողբոջ,
հասնող տառապանք:

Գունատ ու տխուր գորգերուն վրայ՝
իջեր ես, պառկե՛ր,
դուն՝ սառած զիշեր...

Ե՛ս...
դեռ հասնող կոկոն,
պայթող տառապանք...

ԺՊԻՏՆԵՐ ԿԱՆ ԴԵՌ...

Երակներուս հունին մէջ՝ ամսանձ
արեան գերննշում,
տարփատեննչ փափաք...

Աչքերուս մէջ խարուսիկ տենչեր:
Ամպոտ երկիմբէն
արեւու քրտնիք:

Արեւի թռչլ պարանէն այսօր
բարձրացայ ես վեր
ժողուելու կայծեր,

Որովհետեւ, մայթերու վրայ
քովէ քով մըսող
ժպիտներ կան դեռ...

ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԵՔԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԲԷՅՐՈՒԹՈՒՄ

«ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ» Ի

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՇՏ



Մեր խմբագրության աշխատակցուհին Բեյրութում հարցալրոյց ունեցաւ նորաստեղծ «ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ»-ի մի շարք անդամների հետ:

«ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ»-ը գոյութիւն ունի մի քանի տարուց ի վեր եւ այս տարեակերին լայն հասարակութեանը յայտնի դարձաւ «Անմիջական զրականութիւն» անունով ժողովածուի հրատարակութեամբ: Բայց նրա գործունէութեան մասին անէի լաւ է իմանալ բուն հարցալրոյցից:

ՄԻՒՆԻԻՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՌԱՏԻՈՎՈՅՑԱՆ

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Այժմ եւ գտեալս եմ «Բագին»-ի խմբագրատանը, ույստեղ եմ Սարգիս Կիրակոսեանը, Քնար Ճիմպաշեանը, Յարութիւն Պէրպէրեանը, Էլօ Սարահեանը, Նազ Տէր Սարգիսեանը, Անի Բէնտիրեանը եւ Նազարէթ Պէրպէրեանը: Ես խնդրեցի յիշեալներին, որպէսզի պատասխանեն մի քանի հարցերի՝ իրենց խմբակի գործունէութեան մասին: Նրանք ընդառաջեցին իմ խնդրանքին եւ անա մեր հարցազրոյցը:

— Էլօ Սարահեան, մեր «Ազատութիւն» ազդիտկայանի Հայաստանի ունկնդիրներին անպայման կը հետաքրքրի, թէ սփիւտահայ պայմաններում, առեւտրի դեպքում Բեյրութում, ինչպէ՛ս եւ ինչո՛ւ է ստեղծուել ձեր «Գրական խմբակ»-ը: Ի՞նչը դրոյց, որ համախմբուէք խմբակի անդամները:

ԷԼՕ ՍԱՐԱԿԵԱՆ.— Մեզմէ ոմանք երկրորդական վարժարանի աւարտական դասարաններէն սկսեալ որոշ հետաքրքրութիւն ցոյց տուած էին գրականութեան հանդէպ եւ արդէն իրենց գրական փորձերէն որոշ կտորներ գրքկած էին թէ՛ «Ազգակ»-ի եւ թէ՛ «Բագին» ամսադրի խմբագրութեանց: Այդ փորձերէն քանի մը հասը լոյս տեսան յիշեալ թերթերուն մէջ՝ քայլաւորական որոշ նոթերով: Ճիշդ այդ տարին, Սոֆիա Յակոբեան գոչէ՛նը, որուն շքանակներուն մեծ մասով կը բաղկանայ խմբակը, ունեցաւ զրակա-

նութեան նոր ուսուցիչ մը, Պօղոս Մնայեանը: Անոր ստեղծած խանդավառութենէն մղուած՝ իրենց առաջին փորձերուն սպաւորութիւնը տեսած տղաքը առաջարկեցին դրականութեան հակում ունեցող ուսանողներով կազմել դրական խմբակ մը, խնդրելով դրականութեան ուսուցիչէն, որ Հերթական հանդիպումներու ընթացքին հետեւի իրենց դրական աշխատանքներուն: Պ. Մնայեանի թելադրանքով, այլ երկրորդական վարժարաններէ եւս դրականութեան սէր ունեցող տղաք հրաւիրուեցան, որմէ ետք ունեցանք խորհրդակցական մեր առաջին հանդիպումը: Այս հանդիպումը տեղի ունեցաւ շուրջ երեք տարի առաջ եւ հոն ծնունդ առաւ խմբակը՝ հետեւեալ նպատակներով.

Ա.— Անդամներէն իւրաքանչիւրը պարտաւոր էր ստեղծագործական կտորով մը մասնակցել աշխատանքներուն:

Բ.— Աշխատանքները պէտք է առաջ տարուէին շաբաթ մէկ կամ երկու հանդիպումներով, որոնց ընթացքին անդամներէն մէկուն գրութիւնը գրախօսականով մը պէտք է ներկայացուէր երկրորդի մը կողմէ եւ ապա՝ զրուէր ջնասրկութեան: Այս աշխատանքը հետեւողականօրէն տարուեցաւ սկիզբէն ի վեր, շուրջ երեք տարի: Ասոր կողքին՝ ունեցանք մտաւորական աշխատանքներ՝ հայ եւ օտար զրական հոսանքներուն ծանօթանալու դժով: Այսպէսով էր, որ խմբակը ծանօթացաւ Հայաստանի երիտասարդ ջանաստեղծներուն եւ ջննտղատական ասպարէզի ղէմքերուն, ինչպէս նաեւ օտարներէն Քաճախի, Աբամովի, Պէքէթի, Քամիւի, Իսեւաքոյի, Ժան Ժընէի, Կտուրտ Ալպիի, Օտընի, Քլէպիոյի, Քլոս Բուսյի, եւ այլն:

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Սարգիս Կիրակոսեան, տարեց մտաւորականների եւ գրողների օգնութիւն եղաւ, եւ եթէ եղաւ՝ ի՞նչ ձեւով արտայայտուեց այդ օգնութիւնը:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ.— Բացի «Բազիլե»ի խմբագրութենէն ու մեր խումբին ուղղակիօրէն հետեւող Պօղոս Մնայեանէն, ոչ մէկ օգնութիւն եղաւ: Մնաց որ, այդ ուղղութեամբ մենք պատրանքներ եւ առաջարկանքներ ալ չունէինք: Երբ խմբակը ստեղծուեցաւ՝ պայմաններէն մէկը արդէն լուր ու հետեւողական աշխատանքի սկզբունքն էր, մինչեւ որոշ շրջան մը: Լուր աշխատանքի տյս ոճը տեւեց շուրջ երկու տարի, երբ մեր փորձերէն ոմանց տեղ տրուեցաւ «Բազիլե»ի էջերուն մէջ եւ ծանօթութեան շրջանակը ընդարձակուեցաւ:

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Պարզ է, որ ձեզնից իւրաքանչիւրին առաջին հերթին հետաքրքրում է սեփական ստեղծագործական աշխատանքը: Անգնից ունեւ գրում են չափածոյ, ունեւ էլ արձակ գրուածքներ: Բայց «Անմիջական գրականութիւն» ժողովածուն ցայց տուեց, որ զուտ շատ անկի լայն հետաքրքրութիւններ ունէ՛ք, քան սեփական ստեղծագործութիւններն են: Ժողովածուի մտայն գեանատակում խօսքեր շատ ասուեցին: Արդեօք դուք երաւարակչական ուղղութեամբ որեւէ նոր ծրագիր ունէ՞ք եւ մտադի՞ր է՞ք ժողովածուներ կազմել ու լոյս ընծայել: Քնար ձիւղաշեան, կարող է՞ք քերտուս դուք պատասխանել վերոյիշեալ հարցին:

ՔՆԱՐ ՁԻՒՂԱՇԵԱՆ.— Ինչպէս արդէն կռահած էք, մեր աշխատանքները բացառաբար կը կեդրոնանան սեփական ստեղծագործութիւններու ու

անոնց փնտրկման վրայ: «Անմիջական գրականութիւն»ը մեր կողմէ տրուած յարգանքի տուրք մըն էր՝ նախորդ սերունդի արժանաւորներուն, որոնք, հակառակ իրենց հրատարակած մինչեւ երեք եւ հինգ հատորներուն՝ համապատասխան ճանաչման չէին արժանացած անգամ մտաւորական շրջանակներու մէջ: Հաստատելու համար, որ Սփիւռքի յեռ-պատերազմեան սերունդը իրապէս ուշադրաւ դործեր արտադրած է՝ մտադրեցինք մեր խումբին հաւաքական ճիշդ մէկտեղել զրական մակարդակ ունեցող գրողներէն նմոյշներ եւ ներկայացնել հանրութեան, որ պէտք է ըսել, խանդավառութեամբ ողջունեց գործը: Հրատարակչական մարմին մը չենք մենք, այտուհանդերձ, ամբողջացնելու համար «Անմիջական գրականութիւն»ը, արդէն սկսած ենք երկրորդ հատորի աշխատանքներուն, այս անգամ նկատի առնելով առաջին հատորին մէջ տեղ դրած գրողներուն ժամանակակից Հայաստանեան գրողները: Կը կարծենք, թէ աշխատանքները շուտով կ'աւարտին եւ հատորը ըստ կը տեսնէ յառաջիկայ գարնան:

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Յարութիւն Պէրպլերեա՛ն, հասարակութեամ կողմից, ցնահատական խօսքերը շնորհած, ձեր գործին շօշափելի օգնութիւն ցոյց տալու տրամադրութիւններ, արդեօք, արտայայտուեցի՞նք:

ՅԱՐՈՒՔԻՆ ՊԻՊԵՐԵԱՆ.— Այո՛: Բացի մամուլին մէջ եղած բուխ արտայայտութիւններէն, բազմաթիւ դրասէր բարեկամներ շօշափելիօրէն օգնեցին մեզի եւ արամադրութիւն յայտնեցին միշտ հովանաւորել մեր գրական նախաձեռնութիւնները: «Անմիջական գրականութիւն»ը մեզի տուաւ ա՛յն փորձառութիւնը, որ մեր ժողովուրդին մէջ կը գտնուին նիւթական զուգուրութիւններու ընդունակ ազնիւ հոգիներ:

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Անի Գեմտիրճեա՛ն, ձե՛զ եմ ուղղում յագործ կարգը. երբ Հայաստանեան բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանը թէյրարում էր եւ նրա պատուին հաւաքոյթ էիք կազմակերպել, այդ հաւաքոյթին մասնակցում էին մանր ձեր գրական շրջանակին չպատկանող ուրիշ երիտասարդներ, որոնք մոյզակէս գրականութեամբ են գրադուր: Արդեօք զա պատահակա՞ն հանդիպում էր, թէ մտադիր էք աւելի սերտ եւ մնայուն կապեր հաստատել ձեր շրջապատի բոլոր տարեկից գրողներին հետ:

ԱՆԻ ՓԵՆՏԻՐՃԵԱՆ.— Հայասանի բանաստեղծներէն Ռազմիկ Դաւոյեանի Պէյրութ գտնուած միջոցին, ճիշդ է, որ հրատարակային հտաւաքոյթ կազմակերպուեցաւ, յայց ո՛չ մեր գրական խմբակին կողմէ: Սփիւռքահայ երիտասարդ բանաստեղծութեան նուիրուած երեկոյթ մը տեղի ունեցաւ Հ.Մ.Մ. Համալսարանականներու Միութեան կողմէ: Թիշնք նաեւ, որ հրատէր գրկուած էր մեր խմբակի անդամներուն եւս, որպէսզի հանրութեան առջեւ կարգան իրենց ստեղծագործութիւնները: Մասնակցած էին հօթը բանաստեղծներ, որոնցմէ հինգը մեր շրջանակէն էին: Ինչ կը վերաբերի այս հարցումին երկրորդ բաժնին, ըսենք, որ առայժմ նման մտադրութիւն մը չունինք:

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Նագարէք Պէրպլերեա՛ն, դուք գիտէք, որ Հայաստանում կայ Գրողների Միութիւն: Այդ միութեան ղեկավարութեամ մէջ ընտրուել են եւ այնպիսի անձինք, որոնք ի պաշտօնէ պարտաւոր են գրողները

սփիւփահայ գրականութեամբ եւ գրական մշակներով: Արդեօք նրանք հետաքրքրուել են ձեր գործունէութեամբ եւ ի՞նչ էք կարծում նրանց կողմից լինելիք ֆայերի մասին:

ՆԱԶԱՐԻԹ ՊԻՊԷՐՆԱՆ.— Մենք ե՛ւս իմացած ենք, որ Հայաստանի Գրողների Միութեան կողմէ սփիւփահայ գրականութեամբ զբաղուելու համար նշանակուած են մասնաւոր մարդիկ: Բայց անոնք մեզի՜ հետ ուղղակի կապ հաստատելու որեւէ փորձ չեն կատարած եւ ոչ ալ մեր կողմէ նման բաղձանք մը յայտնուած է: Այսուհանդերձ ըսենք, որ անուղղակի յարաբերութիւններ ունեցած ենք Պէյրութ այցելած գրողներուն հետ: Ընդ՝ այն պահուն, երբ «Անմիջական գրականութիւն» հատորը լոյս կը տեսնէր, Հայաստանի Գրողներու Միութեան քարտուղար Ստեփան Ալաջաճեանը Պէյրութ կը գտնուէր: Թէ՛ ուղղակի եւ թէ՛ անուղղակի կերպով իմացանք, որ ան մեծապէս խանդավառուած էր ըլլա՛յ «Բազմի» մէջ լոյս տեսած մեր ստեղծագործական փորձերով, ըլլա՛յ այն ճիշդով, որ մարտին տուաւ «Անմիջական գրականութիւն» հատորին: Պէտք է բռնի, թէ՛ մեր այս հատորին նկատմամբ նմա՞ ջերմ վերաբերմունք մը ցոյց տուաւ նաեւ Ռազմիկ Դաւոյեանը:

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Նազ Տէր Սարգիսեան, ձեր «Գրական խմբակ»ի անդամները կրթութիւն ստացած, մտաւոր առումով աչքաբաց եւ բազմաթիւ լեզուներ իմացող երիտասարդ-երիտասարդուհիներ են: Արդեօք ինչպէ՞ս էք պատկերացնում ձեր դերը, ընդհանրապէս, հայ մշակութային ու հանրային կեանքում:

ՆԱԶ Տէր ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Հայ մշակութային եւ հանրային կեանքին մէջ, առայժմ մեզի մասնաւոր դերեր սահմանելու յաւակնութենէն հետո՞ւ կը գտնուինք: Մեր աշխատանքը կը սահմանափակուի փորձի հանգրուաններուն մէջ: Կը շարունակենք՝ ինչպէս սկսած էինք երեք տարի առաջ, ճիշդ նոյն շահագրգռութեամբ եւ ոգեւորութեամբ: Մնացեալը՝ ժամանակը ի՛նքն է, որ պիտի ճշդէ:

ՄԱՐՈՒԽԵԱՆ.— Խորին շնորհակալութիւն այս քերթ գրոյցի համար, բէ՛ իմ եւ քէ՛ «Ազատութիւն» ռադիոկայանի ունկնդիրներին անունից:

Կ Ա Ր Օ Տ

ԲՈՅՐԵՐՈՒՄ ԲԻԻՐԵՆԼԱՑՄԱՆ

I

Մարմինս պարտեզ արուեստական եւ հազուագիտ բոյրերու,
 Ուր զգացողութիւններու մտերմութիւն մը -- տարածութիւն --
 Կը ձեւակերպուի անլուծելի զգացումներու շինջութեամբ
 իբրեւ մետաքսեայ աղօթք,
 Զոր կը յուշեն գիշերով պատուիրակներն երկնքի:

Առաւօտուն ծաղիկները արուեստական իմ հոգիիս ծաղկաստան
 Յօղէ աղօթք դարձած աշխոյժ շինջութեամբ մը կ'արբենան:

Առաւօտուն կը մտածեմ դժուար, անկար հնարքներով՝
 Ծաղիկներուս աղօթքներուն ապականման մասին միայն:

Քաֆէթերիան նստած պահուս՝
 Կը մտածեմ
 թուրիստներուն չափ անտարբեր դեր մը խաղալ կատակերգակ,
 եւ փողոցը քրտնաթոր իմ ուղեղով՝

Այն քերթուածին մասին արին-շամանդաղ,
 Որ անգիր է եւ ուղեղիս մէջ ծաւալող թնձուկ դանդաղ,

Որուն բառերը չունին

զոյն ու ստուեր

եւ կը մնան յամառաբար

չսահմանափակուող զգացողութիւններու տարածութիւն չէլոք

...իմ ու ծաղիկներուն միջեւ:

Քաֆէթերիան, երեկ առտու անզուտի մը անհոգ, կարտեաշ երջանկութիւն,

Մատներուն մէջ

վարդ մը կարմիր կ'օրորէր

եւ ընկերոջ, Շէյքըսփիրէն արտագրեով՝ անաղ բառեր

կը ծամէր ու կը կրկնէր

միապաղաղ մերենայի ճշգրիտ անփութութեամբ

վարդի՝ մասին:

Չեմ գիտեր ի՞նչ պզտցում պղտորեց սիրտն իմ անգոյն...:

Առաւօտուն դժուար, անկար գիտերու մասին միայն կը մտածեմ:
 Քաֆէթերիան նստած պահուս թուրիստներուն չափ անտարբեր գէթ ձեւանալ,
 Մոռնալ սիրտն իմ արեկոծ եւ ծլարձակ ուղեղիս բողբոջները տխրութեան,
 Բայց երպիս մէջ նոյնիսկ, բնապզաբար,
 Առաւօտը յայտարարող ինքնաշարժի ճշակներէն իսկ առաւել
 խլացնող արեան ձայնէ, աղմուկէ մը կ'արթննամ,
 ու կը մտածեմ գիշերաշրջիկ սիրահարի պէս
 այս քաղաքին հայելիէ պատերուն մէջ ձեւափոխուող
 ա՛խ, արգունքոտ բիբերս նոյնիսկ բզկտել:
 Բայց ինչպէ՞ս դառնամ իմ ճամբորդութեան վախճանին,
 պորտին չեմ հասած երբ դե՛ռ...
 պարտուած, անկամ ...ինչպէս պինաթափ սպան գլխահակ.
 եւ յայնժամ, ըսէ՛ք, ես ծաղիկներուս ինչպէ՞ս բարեւեմ,
 ի՞նչ բառեր ըսեմ.

Ք՛նչ, շարունակենք ուղին անորոջ,
 մինչեւ որ պայծառ
 բառերն այն գտնեմ...
 ա՛խ, հեքիաթային կոյս բառերը մունջ,

Որ ո՛չ գոյն ունին, ո՛չ ստուեր, ո՛չ հունչ
 Ու ծաղիկներուս հնչեմ քերթուածն այն,
 որ պզտցումի
 արեկոծութեան
 եւ տառապանքի
 եւ մտերմութեան
 եւ անդորրութեան՝ սիրոյ չափ ուժեղ մատեան է բեղուն:

Գարնանային ովկիանին մէջ, ծաղիկները կը լիանան
 կեանքով, հուրով, փուշով, մահով
 ու տակաւին
 կ'արեւանան հողին թոյրով յաւերժական...

II

Ծառե՛ր, ծառերն հրեղէն
 Քրմապետներ են կարծես,
 իսկ քիբերն իմ անտառային լոյս ու ստուեր սաղմոս առլի:
 (.....)
 Ազգիկ մը պար գոյներու: Կը մօտենամ: Կը լուծուի շուշաններուն կաթնաբոյր.
 քաղաքները հնազարեան, յանկարծ հեղուկ են հիմա: Քաղաքները կ'ընկղմին
 ովկիանին մէջ հրեղէն...):
 Ա՛լ արեւեր խամաճիկներ են ծառերը,
 Իսկ աղջիկն այդ հայրենիքըս անորոջ:

Ա՛խ, անողոշ հայրենիքի ձայնն եմ ես.
 Մերթ մանուշակ պզալուն
 Եւ մերթ քամի բարբարոս,
 որ ժայռերուն կը պատմէ,
 որ ժայռերուն կը շաչէ խորհուրդներն իր առասպելեան աղջկան,
 հանելուկներն հայրենիքին անսահման...

Նավաչները երբ պիտեսան,
 Գիտեն արդեօք, արդու՞ր աղջիկ, իմ դաւաճան հայրենի՞ք...
 Ինչո՞ւ, ինչո՞ւ, կարմրեցան,
 Եւ անշո՞ւկ, եղա՞ն... եղա՞ն...
 անձնասպան:

Կավաչները քերթողներ են սիրահար
 որ դուն, լոկ դուն
 անոնց սրտի կածաններէն այցելող ձայնագետներն սգաւոր
 երբե՛ք, երբե՛ք չլսես ու չխղճաս...
 իրենց վրայ...

Ծաղիկները
 մանուկներ են
 Ծաղիկները
 աղօթքներ են
 Եւ երկնքի զիշերային ծաղկաստանին
 աստղաշուշան բիրերը կոյր,
 լոյսէ փափուկ շուկներով օծուն պեփխտ.
 Եւ մեր միջեւ պզտոցութիւններու տարածութիւնն անդամալոյծ
 օդ է շատ ծանր, չքնութագրուող,
 քարեղարեան բեւեռագիր, բարդ աղօթք
 Եւ բռնաբարուած առասպելի լոնկեայն բողբոջ:

Ծաղիկները ցօղէ աղօթք խորհրդաւոր, Եւ հառայանք
 հաղորդութիւն են լուսաբոյր:

III

Պարտէպին մէջ իմ սրտիս,
 Երեք տեսակ ծաղկենիներ՝ աղօթք բոյրեր կը ծաղկին.
 Կը ծաւալին պերթ անջրպետ պզգաման
 Ու տակաւին... կը հալածեն պիտ անդազար:

Ծաղկաձորի ծաղիկներու վայրի բոյրը ռունգերուն իմ ընդելուպուած
 Հատ, շա՛տ հեռու, հէ՛յ, անձանօք ծաղիկներու
 առաւօտեան հաղորդութեան
 ծանօթ բոյրին, հողի բոյրի մտերմութեան կը կանչէ:

Մինչ ծաղիկ մը,
որ առասպելեան արջկան վայրի հմայքը ունի,
որ հայրենիք է իմ մաշած, ծլարձակող էութեան...
ամէն գիշեր առանձնութիւնըս կիսող
եւ շատախօս, մտերիմ ու ձայնաւոր ջինջ բոյրերով սիրտն իմ օծող
Անմիջակա՛ն,
Անհրաժե՛շտ,
թոքերուս օղջ կ'ըլլայ
քայլերուն իմ երերուն՝ դեկ հաստատուն
եւ քսանդիինգ, քսանըվեց ժամերըս իսկ իմաստաւորող
Մշակոյթը մշտաբորբոք:

Երեք տեսակ բոյրեր թովիչ կը հալածեն զիս անդադար
եւ արեանըս հիւլէներով կառուցուած մարմին-բերդը
Միշտ գրաւել, խորտակելու իսկ գնով վայն նուաճել կը փորձեն:

Տարածասփիւռ բոյրին ներքեւ արդեօք ինչպէ՛ս պիտի շնչեմ:

Առատուն կը մտածեմ,
դժուար, անկար հրաշքներու
Ծաղիկներու եռաերանգ աղօթքներու շշուկներուն այլանդակման մասին
յաճախ... իմ խանգարուած ուղեղով,
եւ մա՛նաւանդ արուեստական ծաղկաստանիս սպառնացող
մեծ վտանգին... ներաշարժի աղընչութեամբ՝
Աշտարակին պէս Բիվայի ծող, մահուան դատապարտուած բերդիս համար,
Սարսափահար տխրութենէս հայցելով կամք անսասան, օժանդակութիւն
...որ ծունկի չգամ:

IV

Գետեր, գետեր կը հոսին մերթ ամէկուտ, մերթ խելագար:
Քարտէսներուն վրայ մոռցած ակերն իրենց
Դէպի ծովը խոյս կու տան գետեր, սէրեր դաւաճան:

Չեմ կրնար ես գետ մը ըլլալ: Ճակատագիր, ըսէ՛, ինչպէս
ես իմ ակիս դաւաճանեմ. ճշա՛յ, պոռթկա՛յ, բառեր շանթէ
...եւ կամ լռէ՛, լռէ՛...

Արձաններ, խո՛ւ պարձաններ, ձեր լեզուն ինձ փոխ տուէք:

V

Ես իմ սիրտըս ցանեցի պարտէպիս մէջ անխնամ,
Որպէսզի ծաղկենիներուս արմատները արբենան
թորեալ կայտառութեամբը հողի
եւ ցեխին տամկութեամբը սուրբ

Եւ ըլլան, ըլլան հողերու պայծառ ազօթքը կանաչ:

Ես ալ սիրտըս ցանեցի՝
փողոցներու մէջ ամայի,
որպէսզի

Ասֆալթներու քաղքենի լուսինը ճաթոտի:

Աշխարհագրութեան դասագիրքիս անյիշատակ քաղաքներու

Ու հնամենայ գիւղերու տաճարներու բոյրին մէջ իսկ մահերգակ՝

իմ սիրտը ես ցանեցի,
որպէսզի կրկին

«Նաղաղութիւն ամենեցուն» ծաղկաստանեան շարականը ծաղկի՛, ծաղկի՛...

Խոպան արտերուն ցանեցի սիրտըս, կեանք մը գաղթական,

Ուր չէ այցելած կօշիկներու մէջ բանտարկուած կեանքըս,

Ռաբերս, որոնք հողի բոյրը չեն ճանչցած

Ու չեն ըմպած մեղկութիւնը, հարսանիքը սուրբ ցեխի:

Հողի քերթուածին, աստուածացումին անհաղորդակից ոտքերըս կրթեալ

Ես ալ ցանեցի սրտիս, հողին մէջ,

որ ծին, պայթին բողբոջներուն հետ

ու... ծաղիկ դառնան... լոկ քեզի նման:

VI

Դաշտերու մէջ քիւր, դաշտերուն խոպան,

Ռբբ մատուներու ուրուականներուն քար սրտերուն մէջ

Սիրտն իմ ցանեցի, որ մանուկ ըլլան...:

Անպատներու խիստ զիշերներուն բարբառին մէջ գոռ

Եւ այս մայթերուն գինետուններուն սուտ երազին մէջ,

Մակոյտ-կողով մարմիններ կողո ինքնաբեռնակիր մեր էութեան մէջ,

Քիբերու մէջ թաց, այրի սէրերու, դեղնած օրերու, անշահ վազքերու,

Մանուկներու ջինջ ու անգիտակից ծաւի այջերու կարեկցութեան մէջ

Եւ ամէն, ամէն

Ամէն անցորդի...

Ամէն անցորդի մահազդին մէջ ցուրտ

Սի՛րտ, քեզ ցանեցի:

Որովհետեւ հողն է միայն գերագոյն իմաստութիւնը կեանքի,

Կեանքը անվախճան ու յաւէտ շարժումն է միայն, միա՛յն

Գազտնիքը կեանքի, քերթուածը անգիր, անդադար ծաղկող բոյրը յաղթական,

Որուն գրկին մէջ՝ շնչատր անշունչ փառքեր ու զանձեր կը լուծուին անձայն:

VII

Սիրտս արետուն շողին փոխան
 Ջուրին,
 Քարին,
 Լոյսին,
 Օդին մէջ ցանեցի ես անվարան, լռելեայն,
 Որպէսզի ապրիմ բերթուածը անգիր, հանգրիճովիմ հողին...
 ու բերթուած դառնամ:

Որպէսզի կրկին, կրկին որպէսզի
 ես ըլլամ, ըլլամ, անպայման ըլլամ հողէն բարձրացող երզը կրակէ
 Ծաղիկ մը վայրի, որ ջինջ բոյրերու քամի է արին,
 որ ծաղկաստանիս փուշերուն նաեւ բոյրեր կը բաշխէ, բոյրեր պսպղուն,
 որ ծաղկաստանիս բոյրը եռագոյն իր ստուերին մէջ նոյնիսկ կը կրէ,
 որ քանի մը թաղ անդին կ'արթննայ նոյն օդին կարօտ...
 այդ առասպելեան աղջիկը լուսէ
 Միշտ, ամէն ըրպէ,
 Անգիտակցաբար, ճիշդ հողին նման
 Մեծ գինովութեամբ ցօղերը աշխոյժ,
 աղօթքները կոյս,
 գոյները կակուղ,
 քերթուածը անձայն
 Ու դեռ մա'նաանդ հողին դարաւոր խորհուրդը երգող
 Արեւին չափ հեզ, արեւին չափ լուտ, արեւին չափ բորբ... իմ սիրտը շնչէ:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



ՔՆԱՐ ՀԻՆՊԱՇԵԱՆ

Հ Ա Յ Ե Լ Ի Ն Ե Ր Ը



Քաղաքին լոյսերը գոյն ունեին միայն, պազ ցուրեր կ'արձակէին: Սյդպէս, խաւարը աւելի կը թանձրանար, որովհետեւ լոյսերը կը խտնային, կը լեցունէին աչքերուն մէջ եւ ինք աչինչ կը տեսնէր, կը քալէր խոր-խափելով, լոյս փնտռելով, կը գտնէր գայն, բայց շատով կը կորսնցնէր. առտու կ'ըլլար, լոյսերը չէին մարեր, բայց նաեւ չէին լուսաւորեր ու ինք դարձեալ կ'իյնար խորխափումի մէջ:

Գիշեր մը նկատեց, որ ինք կը նմանի բոլոր մարդոց: Անոնք իրեն պէս կը քալէին, ինք անոնց պէս կը ժպտէր: Զարմացաւ, երբ անդրադարձաւ նաեւ, որ կը խնդայ...

Փորձեց տարիքը կազմել:

Մարդոց տարիքը չուներ ու դարերը կը խառնուէին իրմէ:

Փոքրիկ ազգիկ մը գտաւ, մայրեցաւ աչքերուն, բամ չխօսեցաւ ու այդ աչքերը մեծցան, շրջապատեցին զինք, դարձան թափանցիկ ապակիներ եւ ինք անոնց ընդմէջէն դիտեց աշխարհը:

Հիմա չէր նմաներ մարդոց, աւելի մեծ էր, որովհետեւ խաղալիքներ կը սիրէր ու կը գնէր գանձէք: Մարդերն ալ խաղալիք կը սիրէին, բայց չէին փորձեր գնել, իրենք պուպիկներու կը վերածուէին, խամանիկ կ'ըլլային, կը խաղային իրարու հետ, յետոյ՝ կը նստէին ու կուլային: Բայց շատով կ'անդրադառնային, որ խամանիկները միշտ պէտք է խնայան...

Ուզեց խաղալ մարդոց հետ:

Անոնք պարել կը սորվէին:

Մտնեցաւ, անցաւ անոնց շարքերուն մէջէն: Անոնք հետեւեցան իր քայլերուն եւ ուրախացան, որ կը պարեն:

Կար շրջանակ մը կազմեցին, օղակեցին զինք, սկսաւ շուրջապարը: Անոնք դարձան իր շուրջ, դարձան իրենք իրենց շուրջ, օղակը ննդացաւ: Մարդոց շփոթանքը կը սեղմէր զինք: Շարժիլ փորձեց, ձեռքերը բարձրացուց եւ կատարեցաւ երկինք: Կը պայտարէր՝ չխուսելու համար շրջանակէն, մնալու համար մէջտեղ, առանձին:

Առանձին պարողները միշտ հմայած էին զինք:

Բազմաթիւներ կը խուժէր իր վրայ, փոքրիկ ազդեան աչքերով կազմուած ապակին դեռ կը պահէր զինք իր մէջ, մարդիկ կը սպառնային այդ ապակիին, պիտի փշրուէր անիկա, պիտի փայտէր տեսիլքը, պիտի միանար ամբաստին: Կէտք է պահպանելու ապակին, որ հետզհետէ աւելի թափանցիկ կը դառնար, աւելի դիրարեկ կ'ըլլար... Ապակիէն անդին քաղաքին լոյսերը պիտի կուրցնէին զինք, պիտի կուրցնէին մարդերը, անոնց պայտարը պիտի սառնեցնէր զիրենք:

Ճաթուտիւն մը խլացաւ մարդոց արախ կանչերուն մէջ: Կիսի հասնէին իրեն, ճեղքուած էր զիրենք բաժնոց պատնէշը: Ապակիին նեղէն մտնուած սահեցան ներս, մտնուեցին արիւնեցին իր դէմքը, բայց չդիմացան ապակիին ճնշումին եւ, արիւնեցան իրենց կարգին: Հեռացան, ասեմուսան մը համար դարձան անհայտ: Դարձաւ հանդարտ էր պարը: Դուրսը մարդիկ նսրէն կը խաղային իրարու հետ, քերելու կը փորձէին զինք համոզել, այդ ձեռով դուրս բերել: Ե՛ւ, ինք պիտի չփշրէր ապակին, աղջնակին աչքերը կէտք չէ արիւնէին, ան կէտք չէ տեսնէր քաղաքին լոյսերը, անոնց կարմիրը կէտք չէ անդրադառնար տնոր աչքերուն մէջ, աղջնակը կէտք չէ շլանար, կէտք չէ կուրցնար...

Դուրսը շարժումը վերստին կը ծաւալէր: Մարդերը բեմ շինած էին կիրոս ու կը զարդարէին զայն. բոլորը կը բարձրանային տնոր վրայ ու վարը մարդ չէր մնար: Վարը կը մնար բեմադրիչը միայն ու հրամաններ կ'արձակէր, անոնք կը հնազանդէին ու վար կ'իջնէին բեմէն, բեմը մէկէն կը տարապուէր:

Մտայնի բեմը աւելի գեղեցիկ էր, անիկա ընդարձակ էր աշխարհին չափ ու անոր չափ մերկ: Հոն շարժում չկար, հետեւաբար՝ յոգնութիւն չկար: Խօսք չկար, սուտ չկար: Բայց կեանքը կը ծաւալէր բեմին խորքը գետնադաշտէն սկսած հսկայ հայելիի մը մէջ: Շուրջի մարդերը հոն փոխադրուած էին. անոնցմէ ձայն չէր լսուեր, անոնք կը ֆայլէին, կը շարժէին իրենց ձեռքերը, շրթանակները, բայց ոչինչ կ'ըսէին ու կ'երթային հայելիէն դուրս:

Հայելին մէկ անկիւնը ճշմարեց ինքզինք. տակաւին ապակիէ իր սենեակին մէջ էր ու մարդիկ մտացած էին զինք: Լուսած էր եւ արախ:

Ջորաւոր լոյս մը ողողեց հայելին: Ջգաց, որ քաղաքը կը մտնենար ու աշխարհ անհետ էր խուսափիլ անկէ: Փոքրիկ ազդեան մը ձայնը աչքերու մասին երգ մը կ'երգէր: Ըսին, որ կայր էր երգչուհի: Ջգարմացաւ, որովհետեւ կը ճանչնար զայն: Ապակիներուն խորտակման ազնուկը լեցուց միջոցը, շուրջը փայլուն առարկաներու կտորներ դիզուեցան:

Աղջիկը չէր երգեր: Մտնեցած էր իրեն ու այդ փշրանքները կը հաւաքէր:

Քաղաքին լոյսերը խտացան աչքերուն մէջ, լուսէ քիբերով զիտեց աշխարհը, զիտեց ու միայն հայելիներ տեսաւ ամէն կողմ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԱՂԶԳԱՅ ՆԱԽԱՏԻՊ

Աչքերու ծովափը,
 որուն վրայ կ'երկննաս.
 Ես կը բանամ իմ մեմուրիւնս
 քեզի,
 կը բերեմ անկեղծութիւնս, որ սփռնչելի է՝
 ձիւնեղան մօտ եղող, մայրացող
 ծառերուն նման
 Եւ մահացու նայն ատեն...
 Առաւօտուն, երբ աչիմչ կայ քանդումներէն
 երբ մեր բնատ կոպերը, կը բացուին
 երաժշտութեան դէմ,
 որ մեր երազներէն մնացած է հաւանաբար,
 երբ բանաստեղծական երաժշտութիւն էւ մշուշ
 կը բարձրանայ թազերէն,
 որոնք կը պահեն քայքայումը երէկի...
 Ես դարձեալ կը յիշեմ քեզ՝
 իբրեւ
 անձկութիւններէս ու բոբր իզձերէս
 ազատագրուած, թփրտուն մարմին:

Վաղուան մասին մենք չենք մտածեր.
 ռարափելի է անիմաստ է այսօր:
 Կորսուած ու ինքնիմաստ շարժումներ, բառեր,
 որոնք պարզապէս կը կուտակուին:
 Նուիրէ քեզ
 ինձի,
 ինչպէս մեռած մարմինները ոստումներուն,
 որոնցմէ կազմուեցաւ աշխարհը.
 դուն հոն արիւնն ես
 կ'ենտատու:
 Ամէն առտու արարուող աշխարհը կայ,
 որ կոպերէդ կ'արթնայ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԾՈՎԱՓԸ

Հոս՝ փորձառութեան հասուն սերմը կ'իյնայ
 մէջդ
 եւ անցեալ մը
 անդադար կը ծնի:

Հոս մոռցած ես ջու դիմակը:
 Ըղձանքներու անտառը միսերուդ մէջ կը խտանայ:
 Ունկնդրող ու տեսնող լիճ ես,
 ապրումները կը խարանեն յատակը,
 որ ինկող աստուաներու իրդեհներէն
 կը խորանայ...
 Մոխիր կայ հոն
 ոտնահետքերու, երազներու, ապաստմի ու այրումի մոխիրը,
 որ ծարաւ քարապտիւններ կը ստեղծէ:

Կը սպասեմ որ գաս: Մէկը պէտք է գայ:
 Կրնանք տակաւ ճանչնալ զիրար, դժուարօրէն:
 Իրարու մէջ կը ցոլացուինք, կը մնանք հոն՝
 հազար հեղուկ ու այլանդակ ձեւերով մեր:
 Իմ անկեղծութեամբ, մենութեամբս
 մարմիններուն ցոլացումն եմ,
 մէջս պահած հազար մարմին եւ հազար դէմք
 եւ չեմ ճանչնար զիս:

Կը ճանչնա՛ս զիս.
 արեանըս մէջ, երակներէ ու աչքերէ արձակուած
 շողեր կան
 ու կարմրաբայլ յուշերու ոտնահետքերէ
 մնացած պարապ մը մեծ,
 որ հարստութիւնս է միակ:

Մարմիններու ծովափը,
 ուր հեղձուցիչ ջերմին մէջ,
 մարմիններու ցոլացումին,

բզկտումին մէջ,
 անհասկացողութեան, ճիգին, յուսահատութեան
 եւ անձնասպանութեան մէջ՝
 հուժկու բազուկներ կը բարձրանան
 ու պրոնպեայ մատներու ցատումին մէջ կը դողայ տենդը
 ու մերկ աշխարհներու շուարած ու փրկուած ժայթումը
 կը սպաննէ մեզ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՂԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԱՆԾԱՆՕԹԸ

Գիշերուան մթուփեան հետ ձուլուած՝ Անի հանդարտ քայլերով կ'ուղղուէր տուն: Հեռուէն ոտնաձայներ կը լընուէին: Իրենց տունը առաջնորդող այդ հին փողոցը, ուստի ալ, մերկ ու հանդարտ էր:

Անի դարձաւ ու դիտեց մութին մէջ յառաջացողը: Տղայ մըն էր: Իրեն համար բաւորովին անծանօթ ու իր ներաշխարհին այնքան մօտ տղայ մը:

Ուզեց կենսալ: Ուզեց ապրիլ փողոցին մէջ: Ուզեց շնչել մեղմ օդը, որ այնքան թեթեւ էր ու հմայիչ:

Իրեն շատ մօտիկ այս փողոցին վերայ, իր աշխարհէն ներս նոր դէմք մը ծնած էր երէկ: Անծանօթ մը, որ նեւուած էր հոն: Աշխարհի այս անկիւններէն մէկուն մէջ, կ'ապրէին շատեր ու այդ շատերուն կողքին կ'ապրէին ինք, մայրն ու շուն մը:

Պարտէզով շրջապատուած փոքր տուն մըն էր իրենց տունը: Պարտէզին մէջ կային քանի մը ծերացած ծառեր: Ամէն անգամ, որ Անծանօթը երեւնար, իրենց տան մօտ վայրկեան մը կանգ կ'առնէր ու կը դիտէր այդ ծերացած ծառերը:

Անի, շահ հետ նստած՝ զարմանքով դիտած էր այդ ծառերը, որոնք այնքան

հին էին ու փուռտ, լայնափոր էին ու անբերրի: Սակայն զարմանալիորէն երբեք տասարդը կը դիտէր ծերացած ծառերը ու կ'անցնէր առանց խօսելու, առանց ունէ մէկուն տունը հարցնելու:

Անիի քով նստած շունը նայնիսկ կը զարմանար, տեսնելով Անծանօթին ամէնօրեայ պտոյտը եւ ծառերուն հետ խօսելու կարօտը:

Անծանօթը զանգաղեցուց քայլերը եւ կանգ առաւ դրան առջեւ: Անի շուարած՝ շրջեց դիտելով: Անծանօթը կեցաւ ու դիտեց ծառերը, որոնց տերեւները սկսած էին թափիլ ու իրենք մերկացած՝ մթութեան մէջ սկսած էին պարել:

Անի բացաւ դուռը եւ ծառերը փնայրնելու ուզեց: Բայց անոնք կը պարէին: Տարիներէ ի վեր այսքան երջանկութիւն չէին զգացած: Ո՛չ ոք նայած էր իրենց կարօտով: Ծառերը կը պարէին ու Անի անոնց բարձր շուքին տակ կը փոքրանար: Ծունը մօտեցաւ իրենց...

Երկուքը միասին մտան ներս:

Մայրը նստած էր սենեակին անկիւնը: Անոր դէմքը սառած էր՝ ձիւնապատ լեռներու նման: Ի՛նչքան գիծերը անշարժօրէն կը փաստէին իրենց զոյուրթիւնը: Նստած էր հոն այնպէս աներեք, որ կար-

ծես Հին դարերէն փոխանցուած գեղեցիկ արձան մը ըլլար:

Ուղղուեցաւ սննեակին անկիւնը ու փորձեց բան մը պատմել, ծառերու ազակ պարը պատմել, բայց խուսափեցաւ: Վերադարձաւ իր անկիւնը ու մտածեց այդ Հին ծառերուն մասին, որոնց շուքին երկար տարիներ ապրած էր մայրը:

Այսօր ծառերը կը պարէին, անոնց երջանկութիւնը կը խլացնէր զինք: Մառերը կը պարէին խնկարանցիլու համար անծանօթը, կը պարէին, որ ան ամէն օր անցնի այդ կողմէն ու վայրկեան մը կանգնի ու զիտէ զիրենք:

Կինը կարծես լսեց Անիի բերնին մէջ պայտուող բառերը ու իր ասեղն ու դերձանը վերցնելով՝ սկսաւ գործին:

Տարիներ եկեր ու անցեր էին տան վրայէն: Կային օրեր, երբ տան անկիւնները լեցուած էին կիրքով: Ետներ մեծացած ու հպած էր երկինքին:

Անի կը ժպտէր ու անոր ժպտին մէջ մայրը կը տեսնէր իր անցեալի պատկերը: Անոր աչքերը հանդիպեցան մօր սասած աչքերուն, ու՝

— Դուրս ելլենք, պատինք, — ըսաւ ան:

Կինը վար ձգեց ասեղը: Ամիսներ անցեր էին ու ինք նստած էր հոն: Անի այսօր անսահման հեռու իստած չէր:

— Ի՞նչ կայ դուրսը: Հոն ամէն ինչ ցուրտ է: Մառերը մերկ են: Անտառը մուժ է, — ըսաւ կինը:

Անի ծոցը դուրսը ու նայեցաւ շան: Ետին ալ գիտէր, թէ այդ բոլորը չքացած էին: Մերկ ծառերը սազնապով կը պարէին իրենց պարը: Անտառը լուսաւորուած էր ու ամէն կողմ ջերմութեամբ լեցուած:

Ամուսնացած ատեն ամէն ինչ հեշտ էր ու զուարթ: Փողոցին մէջ բան մը ծընած էր օր մը ու կինը այդ օրուէն սկսեալ սիրած էր փողոցը:

Օրերը սահած էին ու կինը տունը ձգած՝ հեռացած էր հոն երեւցած անծանօթին հետ: Ամուսինը մնացած էր միակ: Աղջիկն ու շունը մնացած էին միակ:

Կինը ասեղը շարժեց ու թելը ասհեցաւ չոր կտաւին մէջ:

Պատուհանին անկիւնը փոքր թաղար մը կար: Վերջին անգամ, երբ ամուսինը վերադարձած էր՝ հոն կեցած էր: Կանաչը դրան կողմ դարձուցած՝ պատուհանէն ծաղիկները կը ջրէր:

Կինը դիտեց չորս կողմը: Ամէն կողմ հինգած ու փոշուած, ծերացած էր, ծերացած ու հիւանդացած էր նաեւ ամուսինը:

Բանի մը օր ետք՝ ան մեռաւ: Երեքօր վազին թաղման: Ետնը երկար լացաւ: Այդ օրէն ի վեր, կինը ասեղն ու թելը ձեռքը՝ կը կարէր, կը կարէր ու թելը բնաւ չէր վերջանար:

Յերեկներն ու զիշերները իրարու յաջորդեցին շտապով: Անի Անծանօթին հանդիպեցաւ ամէն օր, ամէն օր սպասեց զիշերուան, ամէն զիշեր Անծանօթը դիտեց ծառերը:

Գիշեր մը Անծանօթը ուշացաւ: Ետին իսկ շուքը ստնամայնները: Աղջկան արիւնը շտապով հոսեցաւ երակներուն մէջ, օդը հեղձուցիչ դարձաւ: Այն ատեն շան հետ դուրս ելաւ:

Հետուէն շուք մը նշմարեց, զրկեց շունը ու ժպտեցաւ:

— Բարեւ, — ըսաւ աղջիկը:

Ինչո՞ւ ուշացար, պիտի ըտէր՝ բայց իր ձայնէն իսկ սարսափեցաւ:

Արդէն շատ իստած էր:

— Բարեւ, ըսաւ Անծանօթը, — ու դիտեց անոր լայն աչքերը:

— Ներս մտիւր, դուրսը ցուրտ է, — փորձեց ըսել Անի, հեռացնելու համար Անծանօթին նայուածքը, որուն ուժգնութիւնը իր սիրտը կը ճմլէր:

— Բայց ծառերը, — պատասխանեց տղան ու շարունակեց զիտել:

— Մառերը հոն են միշտ, ի՞մա են, — բարձրաձայն պատասխանեց Անի:

Ետնը ներս մտաւ:

Մայրը վերցուց ասեղը:

Անի Անծանօթին հետ ուղղուեցաւ դէպի անտառ, ուր ծառերը շատ էին ու խիտ, բարձր էին, հպարտ ու անտարբեր:

Այսպէս ստեղծուեցաւ անոնց պատմութիւնը: Այսպէս էր, որ Անի սկսաւ դուրս գալ իր խեղճ տնակին ցրտութենէն, մայրը անհամբեր սպասեց իր փոքր աղջկան, որ ամէն գիշեր անտառի լռութիւնը կը խանդարէր, ամէն օր կը սպասէր, որ տարածուի շուտով գիշերը, ուր գեղեցկութիւնները կը ստեղծուին ու նոյն ատեն կը փճանար, կ'ոչնչանար գեղեցկութիւնը ինքը:

Գիշերները ան կը շնչէր լայնօրէն, Հսպարթօրէն, կը թարմանային աչքերը արագօրէն եւ կը շրջէին շորտ կողմ ու իր ուշքերուն երջանկութեան մէջ ամէն ինչ կը նուազէր:

Անբաժանելիօրէն կապուեցաւ կեանքին: Անծանօթին աչքերը դրոշմուեցան իր մէջ եւ ինք այդ բոլորը իր մէջ պարփակած՝ շրջեցաւ:

Անցան օրերը: Կեանքը երջանկութիւն էր: Երջանկութիւն կը ստեղծուէր, կ'ապրուէր:

Յանկարծօրէն ու աստուածային կարգադրութեամբ մը տեղծուած այս երջանկութիւնը, որ կը շրջապատէր երթաւորացի աղջիկը, կը թուէր ըլլալ երկար, անվերջ՝ կեանքին չափ. բնդարձակ, լայնատարած՝ ծովու ալիքներուն չափ. մաքուր ու անմեղ՝ մանուկներուն պէս. խենթացնող դիմադրութեան պէս:

Ամրան տաք օրերէն մէկն էր: Անի իր Անծանօթ բարեկամը երեւակայութեամբ գրկած՝ կ'ուզուէր դուրս: Անունձնութեան մէջ ապրելու ու իր տնօրէան ամբողջութեամբ զգալու փափաք մը ունէր: Հեռացաւ տունէն, ծանօթ բոլոր փողոցներէն, երկինքներէն, օտար երկինքներու տակ շնչել սուղեց վայրկեան մը ու այդ վայրկեանին մէջ փորձեց մտերմանալ իր մէջ ստեղծուած պատկերներուն հետ:

Անի շան հետ ճամբայ ելաւ: Նստաւ Հանրային լայն պարտէզին մէջ:

Շունը հեռացաւ, շրջեցաւ այդ ընդարձակ պարտէզին բոլոր անկիւնները: Իրակեց դէմքերը: Օտար էին բոլորը: Մտիկ ըրաւ անոնց ծանր սանձաձայնութիւնը եւ յստականշական ձայները զանա-

զանելու զգայնութիւնը ծնաւ մէջը: Մըտերիմ սոնամայն մը կը խլացնէր ականջը: Հետեւեցաւ:

Մտակայ նստարանին վրայ հանգչեցաւ ու մարեցան սոնամայնները: Շան շատ ծանօթ էր այդ Անծանօթը: Վերադարձաւ:

Անիին քով կեցաւ ու հաջեց: Անի սթափեցաւ ու հետեւեցաւ անոր:

Անծանօթը շուարած շան կը նայէր: Քովը, աղջիկ մը նստած՝ մտերմարար ու ցած ձայնով կը խօսէր, կարծես կեանք կը ներշնչէր: Անի վայրկեան մը կարծեց, թէ Անծանօթին քովը նստող ինքն էր:

Անծանօթը դիտեց փոքր աղջիկը: — Բարեւ, — ըսաւ Անի ու այդ բանը ամբողջ զայրոյթ մը նետեց Անծանօթին դէմքին:

Անծանօթը բառեր փնտռեց, բառերը տեղաւորել ու արտասանել չկրցաւ:

Անի շտապով վազեց ու ետեւէն ամբողջ երկինք մը փռել եկաւ կարծես: Շունը հաջեց:

Կեանքը օձի մը պէս սկսաւ սահել գետնէն: Ամէն ինչ մեծցաւ, տճեցաւ, աշխարհը տարածուեցաւ, դատարկուեցաւ, ամէն մարդ սպրդեցաւ դուրս:

Ինք մնաց մինակ այդ լայն ու ամառի աշխարհին մէջ: Անծանօթն ու ընկերուհին անտարբեր հեռացան: Անի նստարանին վրայ հանգչեցաւ: Դէմքի գիծերը ստաւ էին: Անհետացած էր ամէն ինչ ու կարծես ոչինչ պատահած ըլլար: Դիտեց աւազանէն դուրս հոսող մեղմ ջուրը, զոր չոր հողը տրակօրէն կը ծծէր:

Հետուէն ձայն մը ճեղքեց անհունը: Բարձր ու ազատօրէն անհունին մէջ արձակուած ձայն մը կարօտը կ'երգէր: Անիին աչքերը յեղուեցան ջերմութեամբ ու ան իր սրտի երգին լարերուն հետ երգեց այդ երգը, երգեց մինակ ու առտըն անդամ ըլլալով ինքն իրեն կարօտացաւ: Իր փողոցին: Իրենց տան պարտէզին մէջ հաստատուած լայն ծառերը կրկին եկան պարելու իրենց օրօրուն պարը: Ու աղջիկը ուղեց, որ երիտա-

սարգը կրկին քալէ այդ փողոցէն, միշտ քալէ ու ամէն ինչ վերսկսի՝ տունն չառնելու անտառի խորութեան մէջ:

Շան հետ վերադարձու իր փողոցը: Փողոցը տառապանք էր, որուն վրայ ինքն ու շունը կ'երթեւեկէին: Ամէն կողմէ՛ր ոտնաձայներ կը լսէր: Հասաւ տուն: Չմտաւ: Ուղղուեցաւ դէպի անտառ: Անտառին մէջ շուք մը կ'երթեւեկէր: Անծանօթն էր: Մտեցաւ: Անի գիտեց անծանօթը ու երկար կարօտ մը հեւաց կուրծքին տակ:

— Ինչո՞ւ եկար այս փողոցը, — ըսաւ Անի:

— Փողոցին մէջ կենդանութիւն տեսայ, — պատասխանեց ու փոքր խիճ մը նետեց անտառին խորը:

— Ինչո՞ւ մտեցար մեր տան, — շէշտեց ա՞ն:

— Հոն երիտասարդութիւնը տեսայ, — ըսաւ:

— Երիտասարդութիւնը, եւ՝ մի'այն այդ, — բռու աղջիկի բարձրաձայն ու անտառը իր արձագանգով պատասխանեց անոր:

Անի իշէց պարող ծառերը: Ծե՛ր ծառերը:

Անծանօթը յանկարծ մեծցաւ: Ետքերուն յափ մեծ ու ծեր դարձաւ: Անի մնաց երիտասարդ ու անիծեց:



Տարիներ անցան:

Փողոցի անծանօթները շացան: Ամէն անգամ, որ ոտնաձայն մը տակնուց դուռէն, փոքր տան մը մէջէն, փոքր աղջիկ մը, գլուխը շրջեց ու գիտեց փողոցը:

Սր մը, մայրը ասեղն ու թելը վերցուց: Ամբողջացուց իր տարիներու գործը ու ոտքի ելաւ:

— Երթանք, — ըսաւ ան:

Անի շուքի մէջ:

— Պարտի՞նք, — հարցուց աղջիկը:

— Հեռանանք, — ըսաւ կինը ու

պատուհանին քով հաստատուած թաղարին մէջ դանձուց ծաղիկներուն ջուր տուաւ:

Անի սարսփած դիտեց այդ կինը: Ինչպէ՞ս հեռանար, ամէն ինչ սկսած ու վերջացած էր հոս:

— Պատրաստուէ՛, — ըսաւ կինը ու կաթիլ մը ջուր եւս քսկեց թաղարի ծաղիկներուն վրայ:

Անի փշրեց թաղարը եւ ուղղուեցաւ անտառ:

Իրիկնամուտ էր, երբ ինքնաշարժը հեռացաւ: Անի շունը ձգեց տունը:

Գիշերը, Անծանօթը անցաւ փողոցէն: Չկրցաւ դիտել ծառերը: Անոնք շատ էին ծերացած: Շունը ոտնաձայներ լսեց ու գորտ ելաւ: Հաջեց ու լացաւ, հաջեց ու դարձաւ Անծանօթին ոտքերուն շուրջ:



Եթէ օր մը դիտ անհնէք փողոցի մը եզերքը կեցած ու հարցնէք, թէ ի՞նչ կ'ընէմ, ես պիտի ըսեմ, թէ կը խօսիմ հերոսներու հետ:

Ես պիտի ըսեմ, թէ Անի կը շրջի հիմա օտար երկինքներու տակ, ամէն անկիւնի մէջ: Տարբեր հոտանքներու խաշմեւում մը կը շրջապատէ դինք: Կը վազէ ամէն կողմ, կը վազէ մինչեւ իր հին փողոցը, ու շրջապատը փոթորիկներուն մէջ օրօրուելէ ետք՝ անտառին յիշատակին մէջ ընկղմելով կը նուազի, կը խեղդուի ու կ'ապրի:

Անծանօթը պիտի սպասէ այդ փոքր աղջկան, որուն մէջ կը մարմնաւորուէր երիտասարդութիւնը, բայց ան բնու պիտի չվերադառնայ: Ան ա՛յնքան մեծցած է հիմա, որ այդ երիտասարդ օտարականը պիտի չկրնայ պարփակել դինք իր մէջ ու Անի ամբողջովին պիտի կորսնցնէ իր արեան խելացնոր վաղբը եւ ամէն ինչ պիտի ստի՛ Անի մօր դէմքին նման:

Անծանօթը միշտ պիտի դայ հոն ու օր մը, շունը պիտի պատմէ այդ բոլորը Անիին ու Աշխարհին:

Ք Ր Ք Ի Վ



Կը սարսափիմ
Փողոցներու խնդումէն :

Կուզ եմ...


Գիշեր-ցերեկ
Կը հալածուիմ մարդոց ժպտող այճերէն :

Գիմակներու այս հին խաղէն
Կը փախչիմ՝
Մարդիկ կուզիս կը մային :

ՄԱՐԳԸ ,
Որ կը վախճայ հայելիի մէջ ճայելէ
Ու հակառակ իր կամէն
Ամէն վայրկեան ու ամէն տեղ
Միայն ինքզինք կը տեսնէ ,
Հնադարեան ՄԱՐԳԸ այս
Իմ կուզիս մէջ ես կը շայկեմ դարերով՝

Ո՞ր ՄԱՐԳԻԿ ԶԱՅՆ ԿԸ ՀԵԳՆԵՆ...

Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Իմացական Հարժուճ



ԱՐԱՄ ԶԱՅՆԱԶԻ ՅՈՒԵԼԵԱՆԸ

Ածայրածիր սարածութեան մը վրայ սար-
րեր այնպէս ամաներու հայտնութիւնը խանդավառ
չարժումի մը մէջ զրամ յորեկեան աս շանդի-
սութիւնը նախանձնութիւնն էր վերոյիշեալ բու-
ղաքներուն մէջ գործող Համազգայինի եւ Մշա-
կութային միութիւններու մեր ընթերցարան, գրե-
թէ նոր բնակած երիտասարդներու, որոնք ի-
րենց գիտակից գոհարարութիւններով, սպեւորու-
թեամբ եւ հազմակերպչական շնորհներով աշխար-
սի մթնոլորտ մը ստեղծեցին, որ թերեւ իր նա-
խընթացը չունի մեր գրականութեան պատմու-
թեան յորեկեան բաժնին մէջ:

Հաւատի աղբիւրներէ կ'իմանանք, որ ամե-
րիկահայ երիտասարդներու արեւակով Լիբանան
եւս իր պատրաստուի յառջիկայ պարան Հա-
մապատասխան շուքով մը տեսնել Արամ Հայկազի
յորեկեանը, հրախրելով նոյնպէս յորեկեանը:

Առ այդ, իրեն նուիրուած աւ Յունուարին
խոստացուած մեր բացատրիչ յետազոտիչ Մա-
յիւնի:

Բացատրիչն մէջ պիտի տանք նաեւ լրիւ պատ-
կերը Ամերիկայի մէջ տեղի ունեցած յորեկեան-
կան հանդիսութիւններուն:

Նոյնմեքի առաջին շարքուն վերջաորութե-
նէն սկսեալ մինչեւ Գեկտեմբեր 9, Հիւսիսային
Ամերիկայի եւ Գանատայի մէջ նայրեն մեռը,
զիսաւոր բոլոր շաղաքներուն մէջ, — յախրա-
բար Նիւ Եորքի, Տիբրոյիթի, Փորտլանտի, Ման-
րէտի, Պոսթըրի, Տրեդոյի, Սան-Ճրամսփայտի
ու Լոս Անճելըսի մէջ, արժանաւոր շուքով մը
տեսուեցաւ Արամ Հայկազի գրական գործունէու-
թեան յինամեայ յորեկեանը, առաւելադրել 700
եւ նուազադրել 300 հանդիսականներու ժողովու-
րդութեամբ եւ միտ յորեկեանը գրազէտին ներ-
կայութեան:



Ն. ԶԱՐԻՈՒՍԵԱՆ

ԺԵՐԱՐ ՏԵ ՆԵՐՎԱԼ

(1808 — 1855)

ՄԱՐԿԸ

«Արուեստը՝ մարդ էակին գերազայն առաքելութիւնն է», կ'ըսէ մեծատաղանդ ջանդակագործ Օկրևսթ Ռոտէն:

Մէկ խօսքով՝ արուեստագէտը առաքեալ մըն է, որ աշխարհին կը ճանչցրնէ լոյսը եւ գեղեցկութիւնը: Ան տեսալ մը աշխարհիկ սուրբ է, որ, շրջած յաւիտենականութեան խորհուրդէն եւ գեղեցկութեան կախարդանքէն՝ կ'արհամարհէ մարդկային ճգնիմութիւնները:

Շատեր պիտի ընդգիտին այս հաստատումին գէժ եւ պիտի յիշեն բանաստեղծներու, արուեստագէտներու եւ երաժիշտներու անուններ, որոնց գործած մեղքերը կարելի չէ նոյնիսկ երեւակոյնել: Ինչպէ՞ս սուրբ անուանել ոճրագործ Վիյոնը, միասեռական Շէյքսպիրը, Պայ-

րընը, Վերլէնը, Ռէմպոն, Ուայլտը, հեռտասէր Պօսլէրը եւ անթիւ ուրիշներ:

Հասարակ մարդը կ'ապրի միայն մարմնով, իսկ արուեստագէտը եւ սուրբը կ'ապրին նախ եւ առաջ իրենց հոգիով: Արուեստագէտը կրնայ յաճախ ունենալ մարմնական սայթաքումներ, անբացատրելի անկումներ, բայց շուտով կ'անդրադառնայ իր մեղքին, կը զզմայ եւ այդ դժոխային պահերը կը վերածէ երգի, դոյնի, ձեռի, եղանակի:

Արուեստագէտին հոգին կը մնայ միշտ անկեղծ ու անապակ: Պղտոր հոգիով մարդը, նախանձող եւ բամբասող մարդը չի կրնար մեծ արուեստագէտ ըլլալ: Այս իրողութեան այնքան հաւատացած է մեղաւոր մարմնով եւ հպարտ հոգիով բանաստեղծ Շարլ Պօտյէր, որ համարձակութիւնը կ'ունենայ Աստուծոյ ըսելու:

«Ինչեւ մը տեղ մը վերապահած ես բանաստեղծին Հրեշտակներու սուրբ լեզուներու շարքերուն մէջ, եւ գայն պիտի հրաւիրես յաւիտենական խնկոյճին Գանբու, Առաքիւնութիւններու եւ Իշխանութիւններու»:

Մենք ալ կրնանք հաստատել, որ Ներվալ բանաստեղծը արդէն կը մասնակցի այդ յուստենական խնճուղիներն, որուն կարօտը ունէր իր մանկութենէն ի վեր:

Ներվալի բոլոր ժամանակակիցները կը վկայեն անոր հեղահամբոյր, զգայուն եւ անհաստեղծ խառնուածքը: Ճիգի-քապէս ան բարեմէս եւ համակրելի երկտասարդ մըն էր: «Պոռնոյներ եւ յիշատակներ» գրքին մէջ, իր մանկութիւնը այսպէս կը նկարագրէ. «Մտնկական ժըպիտս կը յիշեցնէր մօրս ժպիտը, եւ իարտեայ նու գամգար մագերս կը ծածկէին կամ իստաստիւն լայն ցակատս»: Իր զատնկերը՝ Թէոֆիլ Կոթիէ, զինք կը նկարագրէ հետեւեալ բառերով. «Փաղցր ու համեստ երիտասարդ մը, որ կը կար-սրբէր ազգիս մը պէս: Մորթը ներմակ էր՝ վարդազոյն երանգներով. մտխրագոյն աչքերով, ուր կը վալվիլին իմաստաբեան կալծեր: Քիթը նուրբ էր եւ թեթեւօրէն արծուային, քերանը շնորհալի, վարի հաստ շրթուհով մը, որ կը վկայէր իր սրտին բարութիւնը»: Մահայն տարիներու եւ տուայտանքներու բերմամբ, այս հրեշտակային գէմքը պիտի դառնար մռայլ ու անանասցիւի, եթէ չըլլար նաշուածքին քաղցր ու մտերիմ նշոյլը»:

Իր ամբողջ կեանքին տեւողութեան, Ներվալ պիտի մնար այն անմեղ մանուկը, զոր կը գտնուի մեր իւրաքանչիւրիմ մէջ, էական եւ անտեսանելի, ինչպէս պիտի ըսէր Փօլ Վալէրի:

Ներվալ իր մանկութիւնը անցուց շրջապատուած Վալուայի աղջնակներով: «Միայն մանչը՝ ես էի ազդիկներու այդ շուրջապարիմ մէջ», կ'ըսէ «Սիլվի» վիպակին սկիզբները:

Ձգայուն, երազող, միամտօրէն հաւատացեալ՝ Ներվալ իր ամբողջ կեանքի ընթացքին պիտի փնտէր իր մանկութեան կորսուած գրախտը: Վերաւորուած կեանքի տպագրութիւններէն եւ մարդոց գեղեցկութենէն, ան իր հոգիին մէջ ստեղծած էր գաղտնի աշխարհ մը, ուր կը վերապրէին այդ անհետացած սիրե-

լիները: Այդ ուղղութեամբ յատկանշական է Ներվալի հետեւեալ խոստովանութիւնը. «Այն աշխարհը, ուր կ'այրիմք, կ'ապելայ մը եւ պոռնկատուն մըն է: Այնքան կ'ամլմամ ու կը վալմամ, որ Աստուած գիւ հոմ տեսնէ»:

Հպարտ էր Ներվալ եւ ազատասէր: Ան կը նմանէր վայրէ ծիծեռնակի մը, որ կարճ այցելութիւն մը տալէ ետք իր բարեկամներուն, ուրախ ճիշ մը արձակելէ ետք, կրկին կ'առնէ իր թռիչքը:

Բարեկիրթ ու քաղաքավար, խանդավառ ու երեւակայող, քայքայեալ յրտակատես ու արամարանող՝ Ներվալի նայուածքը կարողութիւնը ունէր թափանցելու անդենական խորհուրդներուն իսկ:

Նիւթը ոչ մէկ արժէք ունէր իր աչքին: Մեծ հօրմէն ժառանգած կարեւոր գործարք մտից կարճ ժամանակի մը մէջ, թերթ մը հիմնելով՝ իր սիրուհիին համբաւը տարածելու համար: Իր մահէն ետք, գրպանին մէջ գտնուեցաւ քանի մը սանթիմ միայն: Ներվալ ունէր թափառող շրջիկի խառնուածք, այնպէս որ՝ չէր պէտք եւ իր քնակարաններուն ցանկը կազմելու համար: Օրեր կը թափառէր Փարիզի շրջանները, հազած յայն վերաբարկու մը, որուն գրպանները լեցուն էին գանազան տեսակի գիրքերով. «Քրադարանս հետս կը տանիմ», կ'ըսէր իր բարեկամներուն:

Ահա արտաքին Ներվալը, աւելի ճիշդը՝ ա՛յն Ներվալը, որ կը տեսնէին իր ժամանակակիցները: Բայց եթէ արուեստադէտի մը գործը սերտօրէն կ'ազդուած է իր կեանքի վերելայրուամներուն, այն ատեն պիտի չունենայինք այն խորհրդաւոր եւ կախարդող բանաստեղծը: Արուեստադէտները ունին ուրիշ կեանք մը՝ ներքին, թաքուն, անվերլուծելի, որուն պատկերացումը միայն կրնայ ծնունդ տալ արուեստի իրական գործին:

«Ես այն գրողներէն եմ, որոնց կեանքը կ'ապաւած է սերտօրէն այն գործերուն, որոնք ծնունդ տաւ եմ անկէ», կը յայտարարէ Ներվալ: Կեանք բառը կը

նշանակէ ոչ թէ մարմինն անուժը, շարժումները, տեղափոխութիւնները, այլ ներաշխարհին թաքուն տենչանքները, երազները, ապրումները:

Ներվալի ներաշխարհը բացատրելու համար՝ կարգ մը քննադատներ առաջ քշած են Իդիպոսի բարդոյթը, որ կը պայմանաւորէ դաւկին փոխարարներու թիւնները իր ծնողքին եւ մասնաւորաբար իր մօրը հետ: Սակայն ըստ հոգեբան ժորժ Էկրտի, «Իդիպոսի բարդոյթը քննարկելով հիմակ մըն է իմֆինի եւ չ'ազդեր հոգեկան վիճակներու վրայ: Անհատական պարագաները կրնան փոփոխութեան ենթարկել այդ բարդոյթը»:

Ներվալի հոգեբանութեան վրայ աւելի ազդած ըլլալու է այն հանգամանքը, որ իր ծնողքը կը պատկանէին տարբեր միջավայրներու եւ շրջաններու: Հայրը հարաւէն էր, իսկ մայրը՝ հիւսիսէն: Ինք սակայն ընտրած էր միջին ճամբայ մը, կեդրոնը, այսինքն՝ Փարիզը եւ իր շրջակայքը: Հակառակ ասոր, սակայն, ան իր մէջ նոյն ուժով զգացած է խորհրդաւոր հիւսիսին եւ լուսաւոր հարաւին անդիմադրելի ձգողութիւնը:

Իր ներաշխարհին վրայ մեծապոյն ազդեցութիւնը դործած է սակայն իր մօր մահը, զոր շտեմար էր բնիքը եւ որուն պատկերը կը նոյնանոր առասպելական կամ երկնային էակներու կերպարանքին հետ: Այնքան կապուած կը զգար իր մօր, որ անոր արեան ջիւղին իսկ անցած էր իրեն: Իր գրութիւններուն մէջէն քանի՛-քանի՛ անգամներ կը հանդիպինք կարսուած բառին, որ աւելի զօրաւոր կը ընչէ, քան մեռած բառը: Որովհետեւ մեռելները զոնէ կը ձգեն շօշափելի յիշատակ մը իրենց հետին, դազալ մը, չիրի մը, մինչդեռ կորսուածները հազիւ կրնան ազդել իրենց սիրելիներուն երեւակայութեան մէջ: Ներվալի ամբողջ դործը փնտրուող մըն է, աւելի ճիշդը՝ աչքիմիտութիւն մըն է, վերակազմելու համար կորսուած մօր պատկերը, պատկերը քա՛յն հրեշտակիմ, զար ընդ՝ ընդարեցի ամպերու մէկ բացուածքէն:

Կինը մայր է եւ կողակից, այսինքն՝ բարդ էակ մը, որ դարձած է կռուախնձոր մը դաւկին եւ ամուսինին միջեւ: Ուրիշ ներվալի պաղութիւնը իր հօր հանդէպ, որ իրմէ խլած էր մայրը, եւ զայն տարած մշուշի, ցուրտի եւ խաւարի երկիրը եւ պատճառ դարձած էր անոր մահուան:

Ձրկուած մօրմէն՝ Ժերար մեծցաւ աղջնակներու եւ կիներու շրջանակի մը մէջ, փայտալուծեցաւ անոնցմէ եւ սիրեց զանոնք: Իզական սէրը, որ կը նոյնանոր մօրը յիշատակին մէջ, բազմացաւ, յետոյ կեդրոնացաւ դերասանուհիի մը մէջ, որ կը ներկայացնէր բոլոր կիները՝ իր արւեստին բերուածով:

Սակայն պէտք չէ կարծել, որ Ներվալ ալլասերած զաւտկ մըն էր. ան կը սիրէր իր հայրը, բայց չէր կրնար ջնջել այն թիւրիմացութիւնը, որ կար իրենց փոխարարութիւններուն մէջ, որ առաջին օրէն իսկ: Այս է պատճառը, որ իր գործին մէջ հայրերը եւ մասնաւորաբար առական սեռը կը հակադրուի իզական սեռին: Առաջինը կը մարմնաւորէ շար ուժերը, իսկ երկրորդը՝ բարին: Հոս է, որ կարելի է խօսիլ Լոյիպոսի բարդոյթի մասին: Ներվալ չէր ուզեր ներել իր հօր, որուն համար՝ մայրը զինք որք ձգած էր, եւ որուն հետեւելով զացած էր լեհաստանի ստանամանիքներուն մէջ:

Եւ կամաց-կամաց մայրը կը նոյնանայ իր սիրուհիին հետ, այնպէս որ՝ իր հանդիպած կիներուն մէջ, նախ եւ առաջ, կը փնտռէ նմանութիւն մը իր մօրը հետ: Անոնց հետ կը վարուի որդիական փափկանկատութեամբ եւ զուրգուբանքով: Իսկ երբ կը զգայ, որ անոնց հանդէպ իր ունեցած զգացումները տարբեր բնոյթ կը ոտանան, այն ատեն կ'ունենայ յանցարարտի բարդոյթը: Այս տեսանկիւնէն կարելի է բացատրել Ժենի Քոլլոնի եւ իր սիրային յարաբերութիւնները:

Գիշեր մը, չլիմանալով Ժենի Քոլլոնի հմայքին եւ հրաւէրին, Ժերար անոր հետ ապրեցաւ մարմնական սիրոյ հեշտանքը, բայց զգլաց անմիջապէս, եւ ա-

ժօթէն լքեց ու հեռացաւ ընդմիջու: Դար մը ետք, տաղանդաւոր վիպասան Հերվէ Պաղէն, այս հոգեվիճակը պիտի բանաստեղծէր հետեւեալ նախադասութեան մէջ.
«Այն այրը, որ կը պղծէ կիճ մը, կը պղծէ նաեւ իր մայրը»:

Ներվալ եղած է այնքան յստակատես, որ անդրադառնալով իր կեանքին, իրեն վերապահուած ճակատագրին, իր կրած անարգարութիւններուն, զառնութիւն եւ ըմբոստացում զգայած է այն մութ ուժերուն դէմ, որ զինք դատապարտած են այդ վիճակին: Եւ այս հեղանակները եւ անուշ մարդը իր մէջ զգացած է կայէնի մը հոգին: Միթարութիւն փնտռած է հին առասպելներու մէջ, իրական սեռի խորհուրդին մէջ եւ արեւստի կախարհանքին մէջ:

Սակայն այս բոլորը բաւական չեն անձ մը արուեստագէտ դարձնելու համար, որովհետեւ շատեր գտնուած են նոյն վիճակի մէջ, շատեր ապրած են հագեկան նոյն տաղանդները: Ներվալ օժտուած էր նաեւ եւ մանաւանդ արուեստագէտի հանճարով: Իր մեծագոյն առաւելութիւնը եղած է երազը զիտել իրականութեան ակնոցով եւ իր ապրումներուն տալ յաւիտենական տարողութիւն: Ներվալի անհատականութիւնը կը կորսուի իր գործին մէջ, բայց նոյն ատեն կ'ապրի անոր մէջ: Բանաստեղծը կտխարդ մըն է, որ կը վերստեղծէ բառերու զօրութեամբ: «Միլվի» վիպակին մէջ, Ներվալ կը վերստեղծէ անցեալը, «Օրնիլի» մէջ՝ ան կ'ապրի իր ապագան, իսկ «Լէ Շիւլը» քերթուածներուն մէջ՝ ան արդէն կ'իրականացնէ յաւիտենականութիւնը:

Ներվալ յստակատես էր եւ քիչ մըն ալ երգիծաբան: Շատ լաւ գիտէր, թէ զինք չէին հասկնար նոյնիսկ իր ամէնէն մտերիմ բարեկամները եւ ասիկա խոր վիշտ կը պատճառէր իրեն: Եւ այս գիտակցութիւնը զինք կ'առանձնացնէր, կը մեկուսացնէր մարդկութենէն:

«Մարդիկը գիտ շտտ տառապեցուցին», կը խոստովանէր իր գրքերէն մէ-

կուն մէջ: Միակ սպեղանին բանաստեղծութիւնն էր: «Ներվալի փարձառկութիւնը, — կը գրէ կահեթան Փիքոն, — ադիստակամն է հոգիի մը, մզուած՝ խաւարի ծանրութեան տակ, որ ինքզինքը մեռած է պարտուած կրօններու գիրկը: Հոգի մը, որ կ'ողբայ անհետացած աստուծները եւ գաեազրկուած իշխանները»: Մէկ խօսքով՝ Ներվալ ուզած է պայքարել իրականութեան դէմ՝ երգելով երազին կախարհանքը ո՛չ միայն երգելով, այլեւ յեղաշրջելով մէկուն եւ միւսին կարեւորութիւնը:

Հոս կը ծագի կենսական հարց մը: Առասպելական Որփէնսը յաջողեցաւ բռնաբարել խաւարի թագաւորութիւնը, վերագտնելու համար իր մեռած սիրուհին. ան կրցաւ ողջ եւ ստոյլ դուրս գալ մեռելներու աշխարհէն: ԺՅ. դարու Որփէնսը նետուեցաւ երազի աշխարհին մէջ, ապրեցաւ ոգիներու եւ ուրուականներու հետ, ինքզինքը նոյնացուց մտքաբեկներու եւ մոգերու, բայց երբ վերադարձաւ՝ իր նայուածքին մէջ կը կրէր անդենականին նշոյլը:

Ներվալ յստակատես էր, բայց ապրեցաւ մտային խանգարումի շրջաններ: Եւ զարմանալին հոն է, որ կրցաւ այդ պահերը վերածել արուեստի:

Իր վիճակին գիտակցութիւնը չկորսուցուց երբեք, բայց նոյն ատեն տառապեցաւ իր ստոյլ պահերուն: Ան կը դանդաղէր մանաւանդ բժիշկներու կարծատեսութենէն, որոնք հոգեկան վիճակներուն արտատրոբութիւնը կը շփոթեն մարմնական հիւանդութիւններու հետ:

Ահա հոս պէտք է փնտռել Ներվալի ներքին ողբերգութիւնը: Մինչեւ իր մահը՝ յստակատես մարդը եւ երազող բանաստեղծը ապրած են կողք կողքի: Ահաւոր երկուութիւն մը, որմէ ձերբազատուելու համար, Ներվալ պէտք ունէր մտերիմ անձի մը պաշտպանութիւն: Բայց այդ մտերիմ անձը գոյութիւն չունէր իրականութեան մէջ. ո՛չ իր մօտիկ բարեկամները եւ ոչ ալ իր սիրած աղջիկները չկրցան հասկնալ իր հոգեկան տաղան-

պր. այն ատեն է, որ ներվալ գիմեց երազին եւ ստեղծեց ամբողջ աշխարհ մը, իր սեւաբաններով, իր դերակատարներով, իր գեղեցկուհիներով, իր ասուլաններով եւ աստուածուհիներով:

«Ներվալ չուզեց եմբարկուիլ ներաշխարհիմ. այլ ուզեց Յուսիմի գայն», — կ'ըսէ Ռեմոն տը Պեթէր: Ան կը հետաքրքուէր երազներով՝ փաստելու համար իր աստութիւնները: «Որոշեցի կայունացնել իրազը եւ քափանցել անոր գաղտնիքին»: Բայց ի՞նչ կ'արժէ մարդկային կեանքը ներաշխարհի սանձարձակ ուժերուն դէմ: Յաջողեցաւ վերարտադրել դիւերային տեսիլները եւ շանթահարող ներդիտակցութիւնները, բայց չկրցաւ զուգել անոնց քանդիչ ուժը:

Բայց ան յաջողեցաւ հո՛ն, ուր շատեր ձախողած էին: Շնորհիւ իր երազելու կարողութեան՝ ան առասպելներուն եւ տեսիլներուն տուաւ միտքիք արժեւորմի մը եւ զանոնք ճոխացուց, ներշնչուելով դարաւոր աւանդութիւններէն:

Ուրեմն, Ներվալի զրականութիւնը փախուստի եւ մոռացումի միջոց մը չէ, այլ՝ ճանաչումի: Ան զերկրականութեան սահմանները ընդարձակեց եւ հասաւ այնպիսի՝ հեռուորութիւններու վրայ, ուր շատ քիչեր պիտի հասնէին. իրմէ ետք, եւ առիկա բոլոր դիտակցարար, զուհեց ումէն բան, գուհեց իր հարստութիւնը, իր զգացումները, իր հանգիստը եւ իր առողջութիւնը, եւ նետուեցաւ անձանօթի ուրիշներին վրայ՝ նոր աշխարհներ որոնելու համար, նոր պատկերներ նուիրելու համար զրելու արուեստին:

Ներվալ կը հանդիսանայ միջազգային զրականութեան եւ, մ'անուանդ, բանաստեղծութեան Գոլոմպոսը:

ԱՐՈՒԵՍԱՍԳԻՏԸ

Ժերար տը Ներվալի արուեստին ենթահողը նախ եւ առաջ այն կրկիրն է, ուր անցուց իր մանկութիւնը, այսինքն՝ Վալուա նահանգը, ուր ազգային աւան-

դութիւնները մնացած էին անաղարտ:

«Գրականութեամբ եւ ազգութեամբ կը պատկանիմ ֆրանսական աւանդութեան», կը յայտարարէ Ներվալ իր նամակներէն մէկուն մէջ:

Այդ աւանդութիւնը կը վերապրի իր ոճին մէջ, որ յստակ է ու ջիւղ, այնքան յստակ ու պարզ, որ առաջին տկնարկով կարելի չէ անդրադառնալ անոր հարրատութեան:

Ներվալ սնած է նաեւ Ֆրանսացի եւ օտար դրագէտներու գործերով, որոնք իրեն պէս կը հետաքրքրուէին ոգեկան հարցերով:

Իր երկտարադութեան շրջանին՝ Ներվալ եղած է թունդ վիպապաշտ եւ դերմանասէր եւ երկար տարիներ ապրած է Հիւկոյի, Կէօթէի, Ռիշթէի շունչին տակ: Բայց պէտք է ըսել, որ ան շուտով սթափած է այդ ճնշող մթնոլորտէն եւ սկսած է ինքզինքը գտնել եւ դիմած է բուն աղբիւրներուն՝ յազեցնելու համար իր հետաքրքրութիւնը կրօններու եւ բանաստեղծութեան մասին:

Ան արդէն պտած էր անգլիացի Ռիլերիմ Պիլլէի եւ գերմանացի Հէյուլերիների եւ Նովալիսի ներշնչումը, առանց զանոնք ճանչնալու: Ան բանաստեղծութիւնը պիտի հասցնէր իր ծայրագոյն սահմաններուն, ինչպէս կ'ընէր Կոկոյ՝ իր վէպերուն եւ պատմութեան մէջ:

Վիպապաշտութեան մղումը՝ դէպի տարաշխարհիկ հորիզոնները, Ներվալի մէջ ստացած է կենսական բնութիւն: Անոր իւրաքանչիւր տեղափոխութիւնը ունի միտքիք իմաստ մը, այցելութիւն մըն է աչպի հոգիի աղբիւրները, դէպի կրօններու օրբանը, դէպի Արեւելք:

Ներվալ կը դասուի ֆանթասթիք գրողներու շարքին, բայց իրեն համար գերբնականը արուեստի նիւթ չէ միայն, այլ՝ հաւատալիք եւ ապրում: Ապրում եւ համոզում. մա՛նաւանդ 1841էն ետք, երբ Ժենի Քոլոն ընդմիջտ մեկնեցաւ այս աշխարհէն, վերապրելու համար անտասանելիին մէջ:

Կեանքի վերիվայրուսներուն հետ,

ներքին ապրումներուն հետ, Ներվալի ներշնչումը հարստացած է զանազան ուրիշ ազդեցութիւններով: Բացի միջազգային գրականութեան մեծ գործերէն՝ ան հաղուադիւտ գիրքերու մէջ սերտած է խորհրդաւոր բաներ: Հետաքրքրուած է ալքիմիափոփոխութեամբ, կախարդութեամբ, հին եւ նոր դիցաբանութեամբ, կրօնական խորհուրդներով, առասպելական դէմքերով եւ գէպքերով, եւ այս բոլորին ոգեկոյտը իր տողերուն կուտայ իմաստի խոտութիւն մը, արտասովորութեան հմայքը:

Հարկաւ շատ մը ուրիշ բանաստեղծներ եւ գրողներ ներշնչուեցան նոյն ազդերներէն, սակայն Ներվալ հաւատաց այդ խորհուրդներուն եւ ապրեցաւ զանոնք: Այդպէս պատճառը, որ իր գրութիւնները ունին անկեղծութեան եւ համոզումի շնորհիւ, զոր գծուար է գտնել միւսներուն թով:

«Ներվալ վիպապաշտ միակ բանաստեղծն է, որ ամբողջութեամբ եւ բացարձակօրէն ապրեցաւ իր ժամանակաշրջանին տեսիլքը, կրօնականութիւն մը՝ աւազակ յստակ եմգամակի, կարսուած դրախտի կարօտը, եւ վերապրելու եւ անմահանալու դարուար յոյսը», կը գրէ Կալթան Փիլթոն: Եւ այս բոլորին հետ միասին անվատ որոնումը մարդ էակի ինքնութեան, ճակատագրին եւ լինելութեան:

Այդ որոնումը զինք կ'ենթարկէ աննախատեսելի վտանգներու: Ներվալ կը լքէ յաճախ անխորհուրդ եւ տրամաբանական ախարհը ու կը կատարէ յանդուզն էջերը՝ մինչեւ գոտիներուն յատակը եւ հոն կը ծանօթանայ տարօրինակ էակներու եւ անբացատրելի գէպքերու: Նոր Տանթէ մըն է Ներվալ, որ գրօսաւրջիկէ մը սկսն չ'անցնիր անդնտկանին խորհրդաւոր երեւոյթներուն առջեւէն, ալ կանգ կ'առնէ եւ կը փորձէ թափանցել աննցմէ ներս: Հարկաւ այս ճամբորդութիւնը կատարելու համար ան պէտք ունի վաւերական եւ ընտանի առաջնորդներու, որոնց բարեխօսութիւնը

իրեն ապահովէ մուտքի արտօնութիւն այդ արդիւրեւած աշխարհներէն ներս: Այդ առաջնորդներուն մէկ մեծ մասը արդէն կը ճանչնանք, Ատրիէն, Օրելիա, մայրը: Շատեր, սակայն, կը պատկանին առասպելներու կամ գիցաբանութեան:

Ընդհանուր առմամբ, նկատելի է յառաջացում մը հեթանոսական մթնոլորտէն գէպի քրիստոնէական լոյսը: «Օրելիա», որ իր վերջին գրութիւնն է, կը վերջանայ Գրիստոսի անունով, վերջին եւ անգերազանցելի ապուէնը թափառական ու տառնպած մարդուն:

«Վերջապէս աստուածային ճառագայթ մը փայլեցաւ դժոխքիս մէջ, շրջապատուած ճիւղներով, որոնց դէմ կը պայքարէի, յարգեցայ բռնել Արիստոմէի թելը եւ այնուհետեւ բոլոր տեսիլներս դարձան երկնային»:

Ներվալի միտքը լիուած է մանաւանդ մարդ էակին երկուութեան գաղափարով, բարին եւ չարը, ու կը զգայ, որ իր մէջ եւ իր շուրջը կ'ապրէ այդ երկուութիւնը: «Պիտի գտնեմ այն սեռանը, որ կը բաժնէ երկիմբը դժոխքէն»: Եւ կը խոստովանի. «Ուրեքի ամէն բան գիտեմ, բայց չգիտցայ ոչ մէկ բան»:

Այս իմաստով՝ Ներվալ կը հանդիսանայ արեւմտեան եւ քրիստոնէայ մարդուն խօսնակը եւ տիպարը. կասկածիլ, փնտռելի, հաւատալ կամ չհաւատալ ու կրկին փնտռել:

Եւ այս անհուն երազն ու բաղձանքը հաղորդելու համար իր եղբայրներուն, Ներվալ ի գործ դրած է իր ամբողջ ձիւքերը, իր ամբողջ հանճարը իր տողերուն մէջ: Անգիտանալով օրուան նորութիւնները եւ պահանջները, ան գրաւ գրած է ապագային վրայ, ընդունելով այս մը՝ ապարտութեան բոլոր անպատեհութիւնները: Իրմէ նուազ տաղանդաւոր գրողներ եւ բանաստեղծներ, հեռուելով օրուան հոսանքին, յաջողեցան անուն եւ համբաւ ապահովել իրենց ժամանակի գրականութեան մէջ: Ներվալ իր կեանքը, իր հանգիստը, իր էութիւնը զոհեց, զոհեց իր ներկան՝ իր բոլոր յոյսերը զնկելով գա-

լիք սերունդներուն վրայ, եւ յաջողեցաւ :
 Ներվալին զբազան տաղանդին երես-
 ները բազմազան են եւ բազմապիսի, բայց
 ամէն բանէ առաջ ան բանաստեղծ է, ի-
 բրու ու կատարեալ բանաստեղծ, ո՛չ
 միայն իր ոտանաւորներուն, այլեւ իր
 արձակ էջերուն մէջ :

Ըստ Պայրընի, «բանաստեղծութիւնը
 եիմ եւ գալիք աշխարհները զգալու կա-
 թողութիւնն է : Տիեզերք մը, որ կը յայտ-
 նուի առօրեայ դէպքերէն եւ արժանե-
 ռէն անդին, բաւարարութիւն կու տայ
 սրտին, բաղձամբի առարկայ կը դառնայ
 յուսահատութեամ մէջ եւ կը նախըզգաց-
 ւի լիութի ժամերուն» :

Այս սահմանումը բառ առ բառ կը
 յարմարի ժերար տը Ներվալին : Անոր
 դործը վերահենդանացումն է մտնկական
 անցեալին եւ որոնումը անդենականին :
 Ներվալի համար ժամանակը մէկ է եւ
 անբաժան, խտացումը յախտենականու-
 թեան մէկ պահուն : Անձերը չեն անհե-
 տանար երբեք, այլ կ'ենթարկուին կեր-
 պարանոսափոխութեան : «Նա ու Մարիամը
 նոյնն են մէկ, եւ ու մայրը նոյնն են մէկ, եւ
 եւ մայրն էսկը, զոր սիրեցիր գամագամ
 կերպարանքներու տակ» : Ներվալի ինք կը
 նոյննայ ամբողջ մարդկութեան հետ,
 որ ծնած է առաջին մարդուն հետ, ապ-
 րած է դարէ դար եւ կը շարունակէ ու
 պիտի շարունակէ ապրել իր մահէն ետք
 իսկ : Իւ առաջին մարդուն հետ ծնած ա-
 ռաջին կինը կը դառնայ աստուածուհի,
 կը դառնայ առասպել, կը դառնայ ապո-
 զային անպարփակ հոգին : Քննադատնե-
 րը ժօտէն ուսումնասիրած են հեղինա-
 կին եւ գործին փոխարարութիւնները
 եւ փոխադրեցութիւնները :

Բանաստեղծին տրամաբանութիւնը
 կը պատկանի տարբեր մակարդակի, եւ
 շփոթի կը մատնէ հասարակ մահկանա-
 ցուն : Ան ամէն բան կը դիտէ կէտէ մը,
 որ դուրս է ժամանակէն եւ միջոցէն եւ
 կը դուրսէն բաներ, որ մեղի զարմանք
 կը պատճառեն : Բանաստեղծին հա-
 մար ընդհատումները գոյութիւն չունին.
 «Տասնիներորդ ժամը կը վերադառնայ,

ամ Յորէն առաջինն է» : Անոր յստակա-
 տեսութիւնը եւ խորաթափանցութիւնը
 անհեթեթ կը թուին մեղի. «Ձեռք օրը գո-
 յաւթիւն ունի», կը գրէ տեղ մը. «Գիշե-
 րը սեւ ու մերմակ պիտի ըլլայ», կը կար-
 ղանք իր վերջին երկտողին մէջ :

Այս բոլորին հետ, Ներվալի երբեք չի
 բաժնուիր իրականութենէն, երբեք չի
 շփոթեր իրական դէպքերը երազին մէջ
 պատահածներուն հետ : Իրականութիւնը,
 սակայն, սահմանուած է մահկանացութիւն,
 բանաստեղծը՝ ինք կը փնտռէ անսահ-
 մանը : Այդ անսահմանի փնտրուողը, որ
 կը կազմէ իր արուեստին առանցքը, կառ-
 յած է երեք թեմաներու վրայ .

Ժամանակի միութիւնը եւ անսահ-
 մանութիւնը :

Անհատական գոյութեան բազմու-
 թիւնը եւ, մանաւանդ, երկուութիւնը,
 որ եղած է մղիչ ուժը եւ դժբախտու-
 թիւնը մարդ արարածին :

Միւրոյ բազմացումը, որ նոյն կնոջ
 մէջ կը տեսնէ բազմաթիւ կիներ՝ ճանչ-
 ցուած կամ ոչ : Այս ձեռով կը կատարու-
 ւի այբիմիական համադրութիւն մը, զգա-
 ցութեան եւ տեսիլքներու կեդրոնացում
 մը : Մէրը կը դառնայ տիեզերք մը, «ո-
 րում կեդրոնը ամէն տեղ է եւ շրջանակը
 ոչ մէկ տեղ» : Ժերար ինքզինք կը նկա-
 տէ այս տիեզերքին ճարտարագէտը, կամ
 աւելի ճիշդը՝ երկրաչափը, եւ իր կայ-
 ւածին սահմանները չափելու համար կը
 ձեռնարկէ անվերջանալի ճամբորդու-
 թիւններու : Ճամբորդութիւն՝ դէպի իր
 մանկութեան օրրանը, ճամբորդութիւն՝
 դէպի Արեւելք, ճամբորդութիւն՝ ժամա-
 նակի մէջ դէպի անցեալ եւ ապագայ,
 ճամբորդութիւն մանաւանդ դէպի ան-
 տեսանելի աշխարհը, ուր կը գտնուին
 նախատիպարները, պղատոնեան իմաս-
 տով :

Այս ճամբորդութիւններուն նպատա-
 կը չէ միայն գտնել անհետացած սիրե-
 լիները, այլ ոտուգել առասպելներու եւ
 հաւատամքներու իսկութիւնը : Ներվալի
 սիրեց ժենի Քուլտը ոչ իբրեւ կին եւ
 մարդկային էակ, այլ իբրեւ առաջին օ-

զազեր այն լղթային, որ ներկան կը կապէր անցեալին, եւ կեանքը՝ երազին:

Հանրի Լըմեթի հետեւեալ ձեւով կը բացատրէ Ներվալի սիրտն էականերուն նոյնութիւնը եւ բազմութիւնը: «Ատրիէնի երեւումը մեծապէս ազդեց մանուկ ժերարի երեւակայութեան վրայ եւ մընաց անցնելի. միւս կիները, զորս փանչցաւ հետագային, աւելի կշիռ եւ աւելի ուժգնութիւն տուին այս սկզբնական տնտեսիին»:

Ժերար չէր սիրահարուած այսինչ կամ այնինչ կնոջ, այլ սիրահարուած էր կնոջական յաւիտենական տիպարին: «Ես պատկեր մը կը հալածեմ միայն», կը յայտարարէ Ժերարը, եւ այս նախադասութեամբ մեզի կու տար իր ներաշխարհի բանալին:

Բայց կայ՝ աւելին: Ներվալի մէջ կը ճարճատէր Պրոմէթէոսի հուրը: Ալբերտիստիանոսը խորհրդաւոր գիրքերուն մէջ կարգադրած է անհաւատալի բաներ: Եղած է թարգմանիչը կէօթէի «Ճառարար»ին, այսինքն՝ տղթոր Ֆաուսթին, որ համբաւաւոր ալքիմիստ մըն էր, եւ անոր պէս կը հաւատայ, որ մարդկային հոգին, կ'երթայ-կը միանայ տիեզերական հոգիին, բայց միշտ կը պահէ իր ինքնութիւնը: Եւ Ֆաուսթին պէս կը բացազանջէ:

«Հիմա, կարելի պիտի չըլլա՞ր արդեօք այդ հոգիները ճաշել դէպի մեր աշխարհը եւ գանձի միացնել իրենց բնակարանը եղող մարմիններուն»: Մէկ խօսքով՝ ալքիմիստիստի եւ Ներվալի թաքուն նպատակներէն մէկն էր ըլլալ տեսակ մը հրաշագործ եւ մոռելները բերել կեանքի: Կեանքի բերել մանաւանդ այն սիրտն էակաները, մայրը, Ատրիէնը, Օրելիան, որոնք այնքան շուտ լքեցին այս աշխարհը:

Ներվալ մերժեց կինը ընդունել ինչպէս որ է: Ամուսնութեան զաղափարը երբեմն կը յամախէր իր միտքը եւ ինք անկեղծօրէն ձեռք կ'երկարէր մարդկային վաղանցուկ, բայց շօշափելի երջանկութեան, բայց երազը իր ալբին կը չը-

լացնէր յաւիտենական եւ անատշէլի կինը եւ ինք կը բռնէր ճամբան ու կը հեռանար դէպի անծանօթը: Սեւաչեայ եւ սիրասուն Միլիին լքեց հետեւելու համար Օրելիային: «Ճամբորդութիւն դէպի Արեւելք» գործին մէջ կը կարգանք հետեւեալ յատկանշական տողերը, որոնք ըստ երեւոյթին ուղղուած են Ժերարին.

«Մարդուն կեանքը ունի ժամանակաւոր հանդրուամ մը, որ ամուսնութիւնն է, եւ վերջնական հանգրուան մը, որ մտնի է: Պէտք է մարդ սկիզբէն գիտնայ, թէ անհրաժեշտ է արդեօք կամք առնել ժամանակաւոր հանգրուանին վերայ»: Եւ նոյն Ժերարի Գորոնին կը գրէ հետեւեալ յատկանշական տողերը.

«Շատեր կը պնդեն, որ Ես սիրահարուած չեմ եղի, այլ կը կարծեմ սիրելի, արդեօք միւսեայնը չէ՞: Այսպիսի սէր մը մարդը կը տանի դէպի խելագարութիւն, դէպի մահ»:

Որովհետեւ վերջի վերջոյ մահուան զաղափարն էր, որ սեւ արեւի մը պէս կ'իջիւէր Ներվալի մտքին վրայ: Ներվալ, հակառակ իր մելամաղձոտութեան, կը սիրէր կեանքը: Շատեր կը պնդեն, որ ան անձնապահ չեղաւ, այլ զոհը եղաւ զիչերաչրջիկ աւագակներու եւ իրը փաստ կը մէջբերեն հետեւեալ տողերը. «Յուսահատութիւնը եւ անճանապատութիւնը հետեւանք են կարգ մը փակտագրական կացութիւններու, անօր մը համար, որ չի հաւատար անմահութեան, որ չի հաւատար անդնակահալի ուրախութիւններուն ու տանջանքներուն»:

Բայց նոր հրատարակուած նոթերու մէջ կը կարգանք. «Ի՞նչ ալ ըլլայ այն կինը, ես կը սիրեմ գայն: Թող ըլլայ լիլիթ կամ ֆապար, արգիլափակուած ձեր դրախտներէն կամ դժոխքներէն մէկուն մէջ, ազատագրուած հոգիս պիտի երթայ միանալ ամբը»:

Ինչպէս բոնիք, Ներվալի փնտտուող զարժանք էր հողեկան, եւ հողեկանը կրնայ զոհացում գտնել մահէն հոգ: Ներվալ համոզուած էր, որ այլեւս ընենլիք չունի այս աշխարհի վրայ, եւ որո-

չած էր անցնիլ միւսին: Երբեք մտքէն չէր անցուցած, որ անձնասպանութեան արարքը դատուած է մեծագոյն մեղքերու շարքին: Մահը միակ պատուհանն էր փրկուելու համար այս մութ աշխարհէն: Ներվալ համոզուած էր նաեւ, որ պիտի կարենար պահանջել Գրիտոսի թափած արիւնէն իրեն բաժին ինկած մասը, հատուցանելու համար իր սուլթազումները եւ մեղքերը: Մէկ խօսքով՝ հակառակ բոլոր վերելարումներուն եւ թափուսումներուն, ան խորքին մէջ կառչած կը մտար քրիստոնէական հաւատքին հիմնական սկզբունքին: Այս իմաստով է, որ կը յայտարարէր. «Աստուծոյ քաղաւորութիւնը վերջացած է, բայց շուտով պիտի վերսկսի»: Կամ «Գրիտոսս մեր երկրորդ սերն է»:

Եզրակացութիւնը կը թողուք ժ. Սթէյնմանի, որ իր «Գրիտոսի մասին» էյթիկ եւ այսօր» գրքին մէջ կը գրէ.

«Ժերար տը Ներվալ եւ Նիլզալ կռիւն, ո՛չ թէ անիծեալ, այլ օրհնեալ քանաստեղծներ են, որովհետեւ անոնք ե-

ղան տառապանքի մեր եղբայրները: Անոնք յարգուած եւ յղիացած բանաստեղծներու դէմ կանգնած՝ մաս կը կազմեն հալածուած բանաստեղծներու միութիւն փաղանցին: Գուցէ ժերարի տառապանքն ուրախութիւնը եւ կոկոլի անկուրիւնը կը ներկայացնեն այն երկու բնուածները, որոնց միջեւ, ըստ Փաստալի, կը տարութիւն փրիտոսնայի հոգին, որ կը վախճայ՝ յուսալով հանդերձ, բայց կը մերժէ անգամայնուծուող սարսափը Աստուծոյ առջեւ: Կոկոլ կ'ըսէր, որ պէտք է մեռնիլ՝ յարութիւն առնելու համար: Ներվալ կ'երգէր Գրիտոսի յազքանակը մահուան վրայ»:

«Ինձի այնպէս կը թուի, որ մեռած եմ, եւ կ'ապրիմ Աստուծոյ խոստացած երկրորդ կեանքը»: Ներվալ պիտի շարունակէ ապրիլ այդ երկրորդ կեանքը՝ տնտեսութեան աստղազարդ երկնակամարին վրայ, մեծագոյն հանճարներու կողքին, որովհետեւ իրմէ ետքը եկող բոլոր բանաստեղծները անպայման որ բան մը կը պարտին իրեն»:

(Շար 4 եւ վերջ)

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԻՈՒՏԵԱՆ



ԸՆԿԵՐԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Տ Ա Գ Ն Ա Պ Ա Հ Ա Ր

ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՒՆԸ



ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆ ՈՒ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Մարդը քաղաքական կենդանի մըն է», ըսած է Արիստոտելը: Այս՝ այս հաստատումին դէմ չէ այսօր երիտասարդութիւնը, բայց անոր համար քաղաքականութիւնը արտաքին շահերու եւ սընտեսական հաշիւներու գերին դառնալէ աւելի՝ ընկերութեան բարեքին եւ ազգային կառոյցի ամրապնդման ձգտող միջոց մըն է: Այս կարգախօսէն դուրս՝ երիտասարդին համար մշակուած եւ բանեցուած քաղաքականութիւնը այսօր ո՛չ միայն հանրային շահերուն ջերմ պաշտպանը չի հանդիսանար, այլև իւրաքանչիւր քաղաքագէտ իր անհատական հաշիւները ամէն բանէ վեր կը դասէ, իր անհատական շահերու պրիմակին տակ կը տեսնէ ուրիշ ամէն նախաձեռնութիւն: Ինչո՞ւ երիտասարդութիւնը քաղաքականապէս անհանգարտ է, դժգոհ է, միշտ ընդդիմադիր է իշխանութեան, վարչակարգին:

Պարզ է՝ պարզ, որովհետեւ երիտա-

սարդութիւնը տակաւին կը շարունակէ հաւատալ հաւաքական եսին, կը շարունակէ հաւատալ հաւաքականութեան իրաւացիութեան:

Բայց տրամաբանականութեամբ ճամբայ ելած այս ընդդիմութիւնը շուտով կը կորսնցնէ իր գաղափարաբանական հիմունքները, դառնալու համար զգացական եւ քամանքի:

Երիտասարդները, իրենց շրջապատին մէջ նշմարուած անարդարութիւններն ու թերիները կը վերադրեն իշխանութեան, անոր գաղափարական փլաթֆորմին եւ սոյաքար շրթախաղերովու համար՝ կ'ապաւինին մեծ մասամբ ձախին: Զախին, ձախակողմեան հոսանքներուն ապաւինելու այս միտումը՝ աւելի կը զօրացնէ պայքարը երկու կողմերուն միջև մէկ կողմէ, միւս կողմէ՝ աւելի՛ կը հեռացընէ երիտասարդութիւնը տրամաբանականէն: Իրականութենէն հեռացում կը նկատենք ձախին այս մտեցումը, որովհետեւ ձախակողմեան բոլոր հոսանքները պատմութեան նոր հանգրուաններուն իրենց իտէլալական երազանքը կ'ապրեն:

անոնք զործնական դառնալու պատեհու-
թիւնն ու բախտը շունենալով՝ մնացած
են անաղարտ գաղափարական: Մական,
պատմութիւնը ցոյց տուած է քայքայու-
մը, նահանջը, անգործնականութիւնը
այդ վարդապետութեանց, երբ անոնք
պետութիւն, ընկերային կառոյց գար-
ձած են:

Ճիշդ է, քաղաքականութիւնը արա-
մարանութիւն է, ուժերու յարաբերակա-
նութեանց եզրակացութիւնն է, փորձա-
նութիւն, ստանարիւնութիւն կը պահան-
ջէ, բայց ընտրութիւններուն մէջ առաջ-
նորգող միակ ազդեցիչ զգացումն է:

Երիտասարդութիւնը կը սիրէ կրկնել
դեմոկրատիզմին խօսքը «Պետութիւնը
իս իմ» եւ այդ պետութիւնը կաղապար-
բերու համար՝ ան կը ձգտի իրականացնել
կարգ ժը պտտամենք:

Երիտասարդութիւնը իր ձգտումը ի-
րականացնելու համար, բնական է չի
տատամսիք ծայրայեղ միջոցներու դիմե-
լու: Այսպէս, որքան հետանայ աջին,
այնքան, ահամայ, կը մօտենայ ձախին
եւ որքան ձախին մօտենայ, այնքան ընդ-
դիմադրութիւնը կը զօրանայ իր մէջ, ա-
մէն բանի մէջ ժխտականութիւն մը կը
չնշտուի եւ կը սկսի կորսնցնել ժողովրդ-
գտկան ամէն համակրանք, որ, իր կար-
գին, կը զօրացնէ աջը:

Պայքարին մասնակցելու երիտասար-
դութեան այս կիրքը, որքան ալ հիմնը-
ւած ըլլայ յստակ գաղափարականու-
թեան վրայ, ինքնին դրական երեւոյթ
մըն է: Անանձնական պայքար մը՝ հիմ-
նըւած իտէալի վրայ, եւ եթէ հին սե-
րունդի ներկայացուցիչները իրենց հա-
կամարտութեան մէջ աւելի չափաւոր ըլ-
լան, խոհեմ եւ շրջաչափաց, նորերը
չուտով պիտի նշմարեն իտէալական այդ
վարդապետութիւններուն գործնականաց-
ման խոցելիութիւնը եւ պիտի լծուին նոր
սկզբունքներու որոնման:

Սակայն, այստեղ եւս անհրաժեշտ
է շնչոնել, թէ քաղաքականութիւնը երի-
տասարդին համար վերջին հաշուով կը
զաղչի նպատակ մը ըլլալէ ու կը դառ-

նայ միջոց: Այսօր, երիտասարդը դիտէ,
թէ քաղաքականութեան դիմագիծը կ'ո-
րոշուի ժողովուրդին քուէներով, թէ՛
քուէն կ'արժէ քաղաքացին եւ քաղաքա-
ցիին պարտականութիւնը կը վերջանայ
ընտրութեամբ:

Ո՛չ. երիտասարդին համար ասկէ՛
ետք է, որ կը շարունակուի պայքարը:
Այսօր, երիտասարդը անկեղծօրէն
հրապարակ կու գայ յայտարարելու, թէ
մեզի մի տաք անունները մեր պետական
վեկավարներուն, մեզի տուէք անոնց աշ-
խատանքի, դործունէութեան, անոնց
սկզբունքներուն, անոնց իտէալական հա-
ւատամքներուն եւ անոնց մարդկայնական
հաւատքին գումարները: Եւ որովհետեւ
մեր ընկերութիւնները տակաւին սկզբ-
բունքը անձերու համակրութիւններէն
գերազատելու մարզական ոգիին հասած
չեն, հետեւաբար երիտասարդութիւնը
պիտի շարունակէ իր բոլոր կենսունակ
միջոցներով յամառօրէն մնալու պայքար-
քի պատնէչին վրայ:

ԵԱՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Կարելի՞ է այս պայքարին առաջը
առնել: Այո՛, բայց ոչ ամբողջութեամբ:
Թիւրիմացութիւն չստեղծելու համար ան-
հրաժեշտ է արձանագրել, թէ առաջը
առնելու փորձը երիտասարդութեան մօտ
չէ որ պիտի կատարուի, այլ հին սե-
րունդին մօտ: Երիտասարդութեան խան-
դափառութիւնը կարելի է օգտագործել,
հունաւորել եւ անոր ժխտական եւ վայ-
րաքարաբներուն փոխարէն՝ կարելի է
ունենալ ստեղծագործական կիրք: Բայց
այստեղ հասնելու համար անհրաժեշտ է
փոփոխութեան ենթակից դաստիարակ-
չական մեթոտները եւ ամէն բանէ առաջ,
իրերու այժմեան լոյսին տակ քննել դըժ-
ւարութիւնները:

Հոգեբաններ, ընկերաբաններ, տըն-
տեսագէտներ եւ բարձրու ուստիկանա-
կան պատասխանատուներ եկած են կարգ
մը եզրակացութիւններու, որոնց գոր-
ծադրութեամբ կը խորհին, որ եթէ կա-

բելի չըլլայ ամբողջովին լուծել հարցերը, դո՛նէ կարելի է մեղմացնել բախումները:

1.— Թեքեիք, ազատ ասպարէզի թէ դործարաններու մէջ ստեղծել աշխատանքի աշխատիչ պայմաններ, ուր ենթական իր անհատականութեան փրթումին իրագործումով հրճուի եւ այդ աշխատանքին կապուի, փնտռէ զայն աշխատէս, ինչպէս կը փնտռէ որեւէ հաճոյք-դրազուտ մը:

2.— Ստեղծել երիտասարդական կազմակերպուած եւ ուսումնասիրուած կեդրոններ եւ զանոնք ժամանցի լաւագոյն վայրեր դարձնելու համար՝ նիւթական ոչ մէկ միջոց խնայել:

3.— Դպրոցներու մէջ ստեղծել այնպիսի կրթական ծրագիրներ, ուր ուսանողները նախակրթարանէն մինչեւ համարարան իրենց մատղաչ կեանքը շանցնեն միայն ապագայի, անստոյգ դաշխի պատրաստութեան համար: Քանի մը տարիով կարելի է երկարաձգել կրթական ծրագիրը, բայց նուազ ծանրաբեռնել եւ կեանքի հաճոյքէն չզրկել տղան:

4.— Ընկերային եւ քաղաքական որոշ պատասխանատուութիւններ տալ երիտասարդին եւ անկէ ակնկալել լուրջ նախաձեռնութիւններ:

5.— Տեղեկատուութեան բոլոր միջոցները ենթարկել հոգեբանական եւ ընկերային խիստ հակազույգ:

6.— Մեծ կարեւորութիւն տալ մշակութային ստեղծագործութիւններուն, մարդական շարժումներուն եւ հոգեւոր միջնորդութիւն:

7.— Որքան կարելի է սերտ կապեր ստեղծել տան եւ դպրոցին միջեւ: Նոյնիսկ կազմակերպել ծնող-ուսուցչութիւն մնայուն հանդիպումներ, երկուստեք քննելու համար աշակերտական հարցերը:

8.— Կրթական պործին լծել ժողովուրդին լաւագոյն տարրերը եւ ոչ թէ անգործներն ու զանազան առպարէզներու մէջ ձախողածները:

9.— Վերակազմակերպել դպրոցական

կեանքը՝ սկսած դասարաններու աշակերտական թիւի նուազումէն մինչեւ մեր պայմաններուն կրթական ծրագիրներու պատշաճեցումը:

Աւելի լաւ է, որ պործնական քայլեր առնենք, քան ոչնչապաշտութեան մեղքով դատապարտենք երիտասարդութիւնը: Եւ դատապարտողը քաղաքակրթութեան այն ուսուցիչներն են, որոնք պատմութեան սուրին երկու աշխարհաւեր պատերազմներ, իրենց շարունակուող աշխատանքով:

Աղէտ՝ ո՛չ միայն Ֆրիդրիխեան իմաստով, այլ նոյնիսկ հոգիներուն մէջ — մշակոյթներու մէջ, մաքերու մէջ:

Երիտասարդութիւնը իր աչքերը բացուած ու մարդկութեան սուսն ու կեղծիքը տեսաւ:

Ազատութիւն երգելով՝ միլիոնաւոր գոհեր տուինք, խաղաղութիւն երգեցինք՝ պատերազմներ կազմակերպելով: Մարդիկ ումէն ինչ կը փորձեն ընել, նոյնիսկ յարաբերական ճշմարտութեան դաղափարը կը փորձեն կաղապարել ըստ իրենց ցանկութեան:

Ախտաւոր այս դարուն, երբ սերունդ մը քաջութիւնը կ'ունենայ կանգնելու քաղաքակրթութեանց քառուղիներուն վերայ եւ անկեղծութեան շեշտով ու շունչով աւանդութիւնները սնանկ կը հռչակէ նոյն ստան նոր, աւարկայական, մեր դարուն պահանջներէն թեւադրուած արժեքներ կ'առաջարկէ: Այս քայլը մարտելի չի գտներ հին սերունդը:

Բայց նորերը կը հաւատարմացնեն, թէ կ'ընդունին իրենց հասցէին ուղղուած մեղադրանքները, որովհետեւ իրենց ընդդիմադրութիւնը միջոց մըն է միայն, իրենց նայտական է հասնիլ մարդկութեան հաւաքական բարեքին:

Այս հաւաքականութեան բարիքը կերտուած պիտի ըլլայ պահպանութեան ընդհանրական զոհացումին վրայ: Մարդիկ պիտի գաղբին վախճալէ, նախ՝ իրենք իրենցմէ, սպա՛ իրենց ճակատադրուակներէն:

Այսօր, երիտասարդութիւնը կ'ուզէ

ստեղծել անասակ մը, որ հիմնուած ըլլալ ուժի եւ գեղեցկութեան վրայ, որ պայքարի սուտին ու կեղծիքին դէմ:

Յաղթանակը երիտասարդութեան կը պատկանի, որովհետեւ՝

1.— Անոնք իրենց ուժականութեամբ հետզհետէ կը ստանձնեն պատասխանատուութիւններ:

2.— Հիները յոգնած են պայքարելէ ւ Այո՛, հետզհետէ երիտասարդութեան ձեռքը կ'անցնի իշխանութիւնը: Կ'երիտասարդանայ զեկամարութիւնը եւ, բընական է, այս նոր սերունդը իրեն հետ կ'ըրէ իր երբեմնի սկզբունքները՝ քիչ մը բարեխառնելով դանոնք, իսկալականը գործնական դարձնելով:

Պէտք է հասկնանք երիտասարդութիւնը: Պէտք է հասկնանք անոնց «Աշտ»-ը, պէտք է քաջասրենք անոնց գործած յանցանքները: Անոնց բմբուսութեան ու մերժումի շարժումները ո՞՞չ չեն միայն, այլ իմաստասիրութիւն, լեզու, որ ուռճանալով՝ հետզհետէ ինքզինք կը պարտադրէ իրիւ պատմութեան առանցք: Յաղթանակներ կ'ուզէ երիտասարդու-

թիւնը եւ տախտակալի իրագործէ արեան իսկ գնով:

Դժուար չէ, ըստ երիտասարդութեան, ծերացած, դիմակաւոր այս ընկերութեան յաղթանակներ պարտադրել: Ջարմանալի չէ: Ասիկա պատմութեան մէջ քաղաքակրթութեան տաղանալ կոչուած է:

Քաղաքակրթութիւնները միշտ ընկերութեանց բերած են նոր հարցեր եւ իրենք իսկ վերանայած ու վերափոխած են դանոնք:

Մարդիկ վախով կտոչած են իրենց ստեղծած չափանիշներուն, ընկերային արժէքները վահան գարձուցած՝ ծուարած են անոնց ամպհոփանիքն տակ, բայց նորեկներու խուճրէր, միշտ նոր գէնքեր շտամ՝ եկած են դրաւելու նոր դիրքեր:

Այսպէս եղած են անկումի եւ ապահանութեան շրջաններ, որոնց յաջորդած են վերածնունդներ:

Յաւիտենական տաղնապներ:

Ահաւասիկ այդ տաղնապներէն մէկուն, արդիական տաղնապին նոր ու բընորոշիչ հանգրուան մը:

(Շար. 4 եւ վերջ)

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ





ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

Ժ Ա Ն Ժ Ը Ն Է
ՀԱՅԵԼԻՆՆԵՐՈՒ ՄՐԱՆ ՄԸ



ՀԱՅԱՅՈՒՑ
ԷՆՕ ՍԱՐԱՋԵԱՆ

«Մահածամը» թատերգութեան բեմական ցուցմունքներուն մէջ՝ ժընէ կը շնչաւ, որ անիկա պէտք է ներկայացուի իբրև երազ: «Պատշգամ»ի պարագային, նման թեյադրանքներ անհրաժեշտ չեն: Որովհետեւ բացայայտ է, որ այս վերջինը կը ներկայացնէ կրակներու աշխարհ մը՝ կրակներու աշխարհի մը մասին: Աջտորական մանուկը, որ բոլորովին անծանօթ է ընկերութեան, եւ անտեղեակ՝ իշխող ուժերու բերած պարտադրանքներուն ու անոնց շարժառիթներուն, կը կերակրէ իր երազը, երազային մարդ մը ստեղծելու իր պատրանքը: Միաժամանակ մանուկը կու գայ ա՛յն եզրակացութեան, թէ պաշտօնական արարողութիւններով, դատերով եւ զինուորական ուժի ցուցադրութեամբ, մարդիկ պարզապէս կը յազդեցնեն իրենց ստատկամ ցանկութիւնները եւ կը պարտադրեն իրենց իշխանութիւնը: Այսպէս, սեռը (որ ըստ ժընէի իշխանութեան հիմնական ուժն է), կառավարութեան եւ ոստիկանական

ուժերն ու ռումանթիք արարողութիւնները բոլորը միանգամայն կը նոյնանան եւ կը դառնան մէկ միաւոր: Անօգնական եւ լքուած ըլլալու ասպարողութիւնը, զոր մարդ կ'ապրի երբ կը փորձէ ինքզինք պարտադրել խորհրդաւոր եւ մեքենայացած աշխարհին, որմէ առաջ կու գայ մարդ-աշխարհ բախումը, կը կազմէ Արեւմտեան ներկայ մտայնութեան դադափարակները: Աշխարհ մը, որ խորհրդաւոր կերպով կը գործէ, մեր գիտակցութիւնէն եւ կամբէն անկախ, կը թուի ըլլալ անհնար: Այնուհետեւ, անիկա չի հետապնդեր կրօնական կամ պատմական ոչ մէկ նպատակ, անիկա կը դադրի իմաստ ունենալէ: Չո՛հը, որ Փիղիքապէս կ'անջատուի դուրսի աշխարհէն, գրական խորհրդանիշով զրկուած կ'ըլլայ իր ներկայութիւնը զգացնելու բոլոր միջոցներէն, այն իմաստով, որ խնդրոյ ասարկայ զո՛հը, իր կարգին, շատ աւելի լայն տուեալներ կ'ունենայ փորձաքարի եւ-

Թարկելու մեր չըջանի մարդկային կացութիւնները, քան մեզմէ ունէ մէկը: Ան, կամ առնուազն ժընէի զգայնութեան եւ արտայայտութեան ուժին տիպարներէն ունէ մէկը՝ կրնայ պատրաստարէր ըլլալ մեր ժամանակներու անխոստովանելի միտքերուն. ան կը դառնայ ենթազիտակցութիւն զգացուած տազնապը տարեւորագրի մարդուն:

«Պատշգամը» Թատերախաղին մէջ ժընէի յայտնարած աշխարհաշինարարները կրնայ վրէժխնդրական ըլլալ: Անիկա կը ցոյցանէ աքորուած անձի մը հոգեբանութեան կատարի զարոյթը, եւ ունի անուրանալի արժէք: Կարելի է քննադատել հեղինակը, այն իմաստով, որ ան շատ ենթակայօրէն մօտեցած է, օրինակ, հեղինակը, քաղաքակրթ իշխանութիւններու, դատարանի խորհրդանշան դերբրուն: Կարելի է նոյնիսկ ըսել, թէ անոնք ժընէի շնորհած տաղանայի գոյամիճակներէն շատ հեռու են ընկերութեան մէջ, բայց պէտք չէ մոռնալ, որ իր դրականութեան մէջ ժընէ վեր տուած է մարդուն վրայ ձգած անոնց հոգեբանական բարդ ու վանողական տպաւորութիւնները: Ժընէ փորձած է պատկերացնել այն ողորդական կացութիւնը, երբ միայնակ զեարը կը բախի ամբողջային զանոնքին: Ահաւաստիկ այս անօգնական դոյամիճակն է, վախի ու սարսափի այս կացութիւնն է, որ ժընէի Թատերախաղերուն ընդմէջէն էլք կը փնտռէ դէպի երազներու եւ պատրանքներու իտեւական աշխարհը: Ժընէի տիպարները կը փորձեն աշխարհին վերադարձնել անոր իմաստն ու նըպատակը, դիւցազներգութիւնը: Ատով հանդերձ, անոնք դատապարտուած են անվերջ սայթաքելու: Իրականութիւնը անհասանելի թիրախ մըն է: Այն՝ որ անհասար կը փորձէ իրականացնել աշխարհին մէջ, յանկարծօրէն կը դառնայ տիրապետութենէն դուրս գոյութիւն տանող անկախ կացութիւն մը:

«Պատշգամը» Թատերախաղին մէջ, յեղափոխականները կը փորձեն չքացնել զիցաբանական պատկերներու վրայ խաբուրուած ուժի դրութիւնը: Բայց դի-

